Generated on 2016-06-03 08:52 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

THE LIBRARY
OF
THE UNIVERSITY
OF CALIFORNIA
LOS ANGELES

Generated on 2016-06-03 08:52 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2016-06-03 08:52 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Digitized by Google

Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2016-06-03 08:53 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

թ— 5 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ թ— 5

# ԸՆԴԱՐՁԱԿ ԳՐՊԱՆԻ ԵՐԳԱՐԱՆ

ԱԶԳԱՅԻՆ, ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ, ՍԻՐԱՅԻՆ,
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՒ ԳԵՂՋԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

BOSTON, 1919 MASS.

Generated on 2016-06-03 08:53 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Published by

H. G. BERBERIAN

Berberian Book Store

837 Washington Street, Boston, Mass.

Printed by

YERAN PRESS

745 Washington Street, Boston, Mass.

Generated on 2016-06-03 08:53 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Digitized by Google

Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Music Library
M
1
E

Ա. Պ. Ա.

Ամանորի

Առիթ

Ձեզ

Կը նուիրեմ

Սոյն

Երգարանը:

Ց. Գ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Դեկտ. 25, 1919

1982002

Digitized by Google

Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2016-06-03 08:53 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2016-06-03 08:54 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Digitized by Google

Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

## ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ՝ երկիր դրախտավայր,
Դու մարդկանոյ ցեղիս որբան,
Դու եւ ընիկ իմ Հայրենիք
Հայաստա՛ն, Հայաստա՛ն,
Հայաստա՛ն։

Ի վեհ անունդ սիրտ իմ, ո՛հ յոյժ
Ոգեւորի ի նոր խրախոյս,
Եւ անձկայրեաց ի քեզ յուսամ
Ի քեզ, ի քեզ յոյս իմ միայն.
Հայաստա՛ն, եւն.։

Հայաստա՛ն, անուն փարելի,
Ի քեզ հանդիստ Նոյեան Տապան
Եդիտ՝ եւ քեւ ապրեցաւ Նոյ,
Հայաստա՛ն, եւն.։



Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 08:54 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Գետք քաջառողջք ատենաբուղխք·
Զհողդ բարի առնեն յուռթի,
Քեւ ապրիմ ես, քեւ միշտ ցընծամ,
Քեւ, քեւ պանծամ փառք իմ միայն
Հայաստա՛ն, եւն.։

Հայաստան ծընող դիւցազանց
Եւ հրաշալեաց հանդիսարան,
Քո զեփիւռին քաղցր է շընչիւն,
Հայաստա՛ն, եւն.։

Զոր չնչեցին եւ զօրացան,
Հայկ, Արմենակ, Արամ, Տիգրան,
Տրդատ, Սըմբատ, Վարդան, Վահան,
Ըզքեզ յիշեմ, ըզքեզ սիրեմ,
Ըզքեզ, ըզքեզ, սէր իմ միայն,
Հայաստա՛ն, եւն.։

Ց· Մ· Վանանդեցի

---

## ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ազատութեան աստղը պայծառ,
Որ վերստին չողաց փարփառ,
Ամէն սրտերն է հմայեր,
Կեցցեներով գոռայ այեր։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 08:54 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ազատութեան այս խաղաղիկ՝
Սիրոյ յուսոյ անմոռ ծաղիկ՝
Ծըլի փայլով անակընկալ,
Հալեցնէ հին ոխերն ալ։

Ձերմակ կարմիր դրօշներ վէտ վէտ
Կը ծածանին հովերուն հետ.
Այդ զոյգ գոյներ նուիրական
Ցիշատակօք կը պարծենան։

Լուսազգեստ է ազատութիւն,
Բոսորագոյն զոհին արիւն,
Այն արիւնով օծուած անմեղ
Ազատութիւնն է փառայեղ։

Ազատութիւն կ՚ուզենք սակայն,
Իմաստուն, լուրջ, հայեացքով լայն.
Արդարութեան հզօր բազուկ
Մեր իրաւանց ըլլայ նեցուկ։

Արեւելքի ազգեր ենք քոյր,
Թող հալածի նախանձը կոյր.
Ձեռք ձեռքի տանք, ա՛լ հաշտուինք,
Եղբայրութեան կռենք դաշինք։

---

Generated on 2016-06-03 08:54 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## Ի ՋԷՆ

Ազատութեան այն վառ սէրը
Թունդ որոտաց իմ սրտում,
Իմ Հայրենեաց սուրբ անունը
Ինձ պատերազմ է կանչում։

Ելէ՛ք ելէ՛ք, Հայկազունք,
Ելէ՛ք Հայկայ զաւակունք.
Ելէ՛ք ելէ՛ք, Հայ եղբարք,
Առէ՛ք ձեր սուրն ու նիզակ։

Ահա՛, եղբարք, Հայ եղբայրներ,
Առէ՛ք զրահ, սուր, զէնքեր,
Մահը դաշտում Շաւարշանայ
Մեզ հրաւէր կը կարդայ,
Ելէ՛ք, ելէ՛ք, Հայկազունք, եւն.։

Ա՜խ, հայրենիք, սուրբ անունդ
Անշէջ վառի իմ սրտում,
Մեր Հայ եղբարց շիրիմները
Իրանց գլրկին մեզ կանչում
Ելէ՛ք, ելէ՛ք, Հայկազունք, եւն.։

Այս օրերը մեր քաջ կեանքին
Նուիրական թող լինին.
Թո՛ղ չմոռնայ Հայ անուն։
Ո՛վ սիրում է Ազատութիւն՝
Ելէ՛ք, ելէ՛ք, Հայկազունք, եւն.։

---

Generated on 2016-06-03 08:54 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ՆԱՀԱՏԱԿԱՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ազատութեան սիրոյն համար
Շատ արիւններ թափուեցան.
Անմեղ հայրեր ու զաւակներ
Եկան այստեղ թաղուեցան։

Ահա՛, եղբարք, ես ալ կ՚երթամ
Ազգիս համար մեռնելու,
Ազատութեան սիրոյն համար
Ամբողջ կեանքիս զոհելու։

Գերեզմանիս հողին վրայ
Թափէ արցունք, իմ մայրիկ,
Սրփոէ ծաղիկ բուրումնաւէտ.
Նահատակ եմ ես յաւէտ։

Ահա այսօր Հայ եղբայրներ
Կուգան այստեղ ողբալու,
Նահատակաց հողին վրայ
Աղի արցունք թափելու։

Ո՛վ եղբայրներ, դուք ալ ելէք
Գերեզմանիս խորերէն,
Ուրախացէք եւ ցնծացէք
Ազատութեան զոչերէն։

---

Generated on 2016-06-03 08:54 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ՊԱՐ ՆԱԻԱՍՏԵԱՑ

Աչխոյժ նաւաստին
Անվեհեր ճակատ՝
Ընդդէմ փոթորկին,
Երգէ անփոյթ, զուարթ։
Լարիթ թիւմպէրէլէլէ հա հա հա։

Կոհակք փրփրադէզ,
Ձեն սոսկում վախ մեզ,
Հողմունք սաստկահար,
Գրգռեն մեզ ի պար։
Լարիթ թիւմպէրէլէլէ հա հա հա

Օ՛ն, խմենք զուարթ,
Գինին մինչ յատակ.
Օն, գրկենք զիրար
Պարենք անդադար։
Լարիթ թիւմպէրէլէլէ հա հա հա։

Լռեցէ՛ք, գիտցէ՛ք,
Մինչդեռ մենք հոս եկած ենք.
Ահա ծերն՝ իւր ոտքերն,
Հոս հոն շուտ՝ տանի փոյթ։

Ա՛յ, ա՛յ ա՛յ, պիտ՝ իյնայ,
Օ՛ն, բռնենք՝ մեղք է մե՛ղք.
Հա՛ հա՛ հա՛ կը խընդայ,
Հոս եկէք ամենքս ալ ծափ զարնենք։

Generated on 2016-06-03 08:55 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Զանգակն ուժգնապիրկ,
կոչէ մեզ ի կարգ.
Վերջ տանք խընդութեան,
Քաշենք մեր պարան։
Լարիթ թիմպէրէլէլէ հա հա հա։

---

## ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ազատն Աստուած այն օրից,
Երբ հաճեցաւ չունչ փչել,
Իմ հողանիւթ չինուածքին
Կենդանութիւն պարգեւել։

Ես՝ անբարբառ մի մանուկ
Երկու ձեռքս պարզեցի,
Եւ իմ անզօր թեւերով
Ազատութիւն գրկեցի։

Մինչ գիշերը անհանգիստ
Օրօրոցում կապկապած
Լալիս էի անդադար,
Մօրս քունը խանգարած՝

Խնդրում էի նրանից
Բազուկներս արձակել՝
Ես այն օրից ուխտեցի
Ազատութիւնը սիրել։

Generated on 2016-06-03 08:55 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Թոթով լեզուիս մինչ կապեր
Արձակուեցան, բացուեցան,
Մինչ ծնողքիս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան։

Նախկին խօսքն որ ասացի՝
Չէր հայր կամ մայր, կամ այլ ինչ.
«Ազատութիւն» դուրս թռաւ
Իմ մանկական բերանից։

«Ազատութի՞ւն», ինձ կրկնեց
Ճակատագիրը վերեւից.
«Ազատութեա՞ն» դու զինուոր
Կամիս գրուիլ այս օրից։

«Ո՛հ, փչոտ է ճանապարհդ,
Քեզ շատ փորձանք կ՚սպասէ,
Ազատութիւն սիրողին՝
Այս աշխարհը խիստ նեղ է։»

—Ազատութի՛ւն,— գոչեցի,—
Թող որոտայ իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ—
Թող թաւ ընէ թշնամին։

Ես մինչ ի մահ կախաղան
Մինչեւ անարդ մահու սիւն
Պիտի գոռամ, պիտ՝ կրկնեմ
Անդադար—ԱԶԱՏՈՒԹԻ՛ՒՆ։

Մ. Նալբանդեանց

Generated on 2016-06-03 09:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԵՐԳ

Ա՛խ թէ երկինք դէթ մի վայրկեան
Լսէր կրծքիս հառաչանք,
Փայլէր ինձ սուրբ ազատութեան
Վառ, կենսատու արեգակ։

Ա՛խ, թէ եւ ես կարենայի
Որպէս արծիւ անարգել
Դէթ մի բոպէ ազատ կեանքի
Ազատ օդում սաւառնել։

Որպիսի՜ ջերմ լի փափաքով,
Կարօտ պայծառ երկնքի՝
Կը թռչէի ես խնդալով
Դէպ հայրենիքս անձկալի։

Դէպ այն երկիր նուիրական,
Ուր սահեցան անխռով
Զքնաղ օրերն իմ մանկութեան
Լի դրախտային սուրբ սիրով։

Դէպ այն երկիրն երջանկալից.
Ուր մայրիկս նազելի
Իւր ջերմ գրկում պարդեւեց ինձ
Ե՛ւ կեանք, ե՛ւ սէր, ե՛ւ հոգի։

Ա. Ծատուրեան

Generated on 2016-06-03 09:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ՊԱՐԵՐԳ

Ալագեազ սարն ամպել ա
Վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,
Աղբեր իր ձին թամփել ա։
Իմ մայրիկ ջան, իմ մայրիկ ջան։

Աղբեր իր ձին թամփել ա.
Եարոջ դըռնէն անցել ա (կրկ)
Ելե դաշտը՝ խաղցել ա
Ելե դաշտը՝ խաղցել ա։

Անձրեւ եկե՝ թըրջել ա
Անձրեւ եկե՝ թըրջել ա
Արեւ զարկե՝ չորցել ա
Արեւ զարկե՝ չորցել ա
Քան կարմիր վարդ բացել ա։

---

## ԱԼ ՈՒ ԱԼԻԱՆ ԵՍ ՀԱԳԵԼ

Ալ ու ալեան ես հագել,
Կարմիր լալայ ես դառել,
Սուրայի կըլոր մէջքըդ
Փամփուշտներով ես ծածկել։

Ախպէր ջա՛ն, քեզ ղուրպան,
Դո՛ւ ես, դո՛ւ մեր գուման։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 09:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ձեռքըդ թըվանք ես առել,
Դուշմանի դէմ ես կանգնել,
Ինձ ասա՛, գըլխիդ մատաղ՝
Բինիշըդ ո՞վ է կարել։

Ախպէր ջա՛ն, քեզ ղուրպան,
Դո՛ւ ես, դո՛ւ մեր գումման,

Առիւծի պէս կանգնել ես,
Բեխերդ պլորել ես,
Սեւ, թուխ բեխերիդ մատաղ,
Ցաղթանակը տարել ես։

Ախպէր ջա՛ն, քեզ ղուրպան,
Դո՛ւ ես, դո՛ւ մեր գումման,

---

## ԱԼԱԳԵԱԶ

Ալագեազ բարձր սար ա
Վայ լէ լէ լէ, ջան լօ լօ լօ (կրկ.)
Մեր դռանը խընկի ծառ կիւլիւմ ջան
Ձեր դռանը խընկի ծառ կիւլիւմ ջան
Ոսկի պլպուլ վերէն թառ կիւլիւմ ջան
Կ՚երթար կուգար շորոր տար կիւլում ջան

Ջուրը հիւանդի դեղ ա
Վայ լէ լէ լէ, ջան լօ լօ լօ
Մեր դռանը եւայլն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 09:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ՎԵՐՑԻՇՈՂՈՒԹԻՒՆ

Աղուոր օրեր իմ մանկութեան
Զբաւարթ պահեր կեանքիս գարնան
Երազներու պէս վաղանցիկ
Որքան ալ չուտ անցաք գացիք
Ամեն անգամ որ յիշեմ ձեզ
Հառաջ մ՝իսկոյն թըռչի կուծքէս
Քաղցրիկ օրեր իմ երջանիկ
Որքան ալ չուտ անցաք գացիք։
Կապուտագեղ երկնից վրայ
Ասուպ մ՝ահա կը պըլպըլայ,
Բայց պահ մ՝է լոկ, լոյսն այդ չքնաղ
Կը մարմրի մէկէն աւա՜ղ,
Այդ ասուպին պէս սիրունիկ,
Տղաք աղուոր կեանք մ՝ունիք,
Բայց այդ օրեր ժպտուն, թէեւ
Գեղեցիկ, սակայն չեն յարատեւ։

Օրեր ալ կան ապագային,
Հակապատկեր ձեր այս կեանքին
Ուր վարդերի տեղ փուշեր միայն
Պիտի գտնէք դէմ հանդիման,
Այն ատեն երբ ամեն դիէն
Հոգեր զքեզ շրջապատեն,
Ձեր մանկութեան օրերն անուշ
Պիտի յիշէք. ո՛հ սակայն ուշ։

Generated on 2016-06-03 09:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԱԲԱՐԱՆԸ ՔԱՐՈՏ Ա

Աբարանը քարոտ ա, բոտ ա
Վայ լէ, լէ, լէ, ջան լո, լո, լո,
Քարի տակը արօտ ա
Իմ մայրիկ ջան իմ քոյրիկ ջան,
Իմ մայրիկ ջան իմ քոյրիկ ջան։

Թամամ օխտը տարի ա,
Վայ լէ, լէ, լէ, ջան լո, լո, լո,
Գիրն ախպօրը կարօտ ա.
Իմ մայրիկ ջան, իմ քոյրիկ ջան։(կրկ

Բերդի բոլորն աւազ ա, վայ լէ...
Նշխուն գիւլբէն թաւազ ա, իմ մայրիկ...

Կալատափը մաղել եմ, իմ մայրիկ...
Կողափ ձուկը աղել եմ, իմ մայրիկ...

Հազար ու մի դարդ ու ցաւ, վայ լէ...
Սրտիս մէջին թաղել եմ։ Իմ մայրիկ...

Սեւ ամպը սարի գլխին, վայ լէ...
Կաքաւը քարի գլխին։ Իմ մայրիկ...

Մէկ մէկու խօսք ենք տուել, վայ լէ...
Էն բարձր սարի գլխին։ Իմ մայրիկ...։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 09:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ԵՐԳ ԲԱԳՈՍԻ

Ակոռիին մեծ կարասին բոլորտիքն են բազմեր,
Աւագ իշխանքն, մեծ պարոնայք ժողովք են հոն կազմեր
Այո՛, այո՛, ժողովք են հոն կազմեր:
Սուստիկ է վէնն. մեծ է խնդիրն զոր հոն տեղ կը խորհին,
Թէ ի՞նչ կերպով դարման մ'ընեն հիւանդ մեր աշխարհին,
Այո՛, այո՛, հիւանդ մեր աշխարհին:
Մ'էկն աս կ'ըսէ, մէկն այն կ'ըսէ կը ծագի լոյսն առտուն,
«Ինձ լսեցէք, տեսարք, կը կանչէ աւանին պետն արքուն:
Այո՛, այո՛, աւանին պետն արքուն:
«Թող թագն առնու, կ'ըսէ, Բագոս եւ փառօք ապրի շատ,
Իսկ ցընծութիւնն ըլլայ դըշխոյ եւ գահն ալ յԱրտաշատ,
Այո՛, այո՛, եւ գահն ալ յԱրտաշատ:
Այսպէս մեզի նոր զուարթութեան արեւներ կը ծագին,
Առողջ կ'ըլլայ մեր ժամանակն եւ նոր՝ մեր աշխարհն հին
Այո՛, այո՛, եւ նոր մեր աշխարհն հին:

Հ. Վ. Զագրենեան

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 09:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԵՐԳ ՄԱՀՈՒԱՆ

Ահա մօտեցաւ մահուան ժամերս.
Ալ չեմ իմանար բոլոր ցաւերըս.
Կը զատուիմ քեզմէ սիրուն ծաղիկս,
Բայց դադրում չունին իմ խեղճ աչերս։
Ինչպէս 'տի զատուիմ, սաստիկ է սէրս
Բայց օգուտ չունի, Աստուած է Տէրս։

Համբերէ քիչ մը ո՛վ մահ սոսկալի,
Զիս մի մեղքենար սիրտն իմ ցաւալի
Համբերէ քիչ մը որ սէրըս առնեմ.
Եւ այնուհետեւ հանգիստ քուն ընեմ։
Ինչպէս 'տի զատուիմ եւն.։

Երբ՝կը մտածեմ, մէկ երկու ժամէն
Հողեր ու որդեր զիս պիտի ծածկեն,
Ամեն կողմերըս ծակեն ծակծկեն,
Իմ մատղաշ մարմինս մատաղ 'տի անեն։
Ինչպէս 'տի զատուիմ եւն.։

Ցուրտ գերեզմանին երբոր մտենաս,
Զըլլայ որ երբեք սարսուռ մը զգաս.
Քաղցր ժպիտով մը երբ անունըս տաս,
Անշուշտ այն ատեն զիս պիտի խղճաս
Կը զատուիմ քեզնէ սիրուն ծաղիկս,
Բայց դադրում չունին իմ խեղճ աչերս։

Generated on 2016-06-03 09:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ՅՈՅՍ

Ահա՛ կ՝երթամ, սիրելի մայր,
Ազգիս համար մեռնելու.
Քաջ ընկերօքս ես միասին,
Անգութ թրքեր ջարդելու.

Մի՛ լար, մայր իմ, մ՝ողբար, մայր իմ,
Վերադարձիս ըսպասէ,
Ազգիս հայոց ազատութեան
Տիւ եւ գիշեր աղօթէ։

Ահա՛ կ՝երթամ, սիրելի քոյր,
Նպատակըս է բարի,
Ձենք դիմանար մենք գերի ենք,
Իբր վեց հարիւր տարի.
Մի՛ լար, քոյր իմ, եւն.։

Ահա՛ կ՝երթամ, սիրելի հայր,
Մնաս բարեաւ դու հիմա.
Այսքան ճնշման՝ տակ ինկած է,
Հայը ինչպէս դիմանայ։
Մի՛ լար, հայր իմ, եւն.։

Ահա՛ կ՝երթամ, սիրելի կին,
Քու արտասուք չը հոսէ,
Պատերազմի դաշտին վրայ
Իմ ընկերը կը սպասէ.
Մի՛ լար, կին դու, եւն.։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 09:56 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՍԱՅԼՈՐԴ

Ահա սուրհանդակի սայլակը
Ուղիղ ճամբով է դուրս թըռչում,
Եւ Վալդայի տըխուր զանգակը
Կամարի տակ է զողանջում.

Արթուն սայլորդըս գիշերուայ դէմ
Իւր վիճակի վերայ տըխրեց,
Եւ սիրեկնի աչաց կարօտը
Նա տըխրագին ձայնով երգեց։

—Կապուտ աչեր, կապուտ աչեր,
Կըտրիճիս կեանքը մաշեցիք,
Ինչո՞ւ, ինչո՞ւ դուք չար ոսոխներ
Ինչո՞ւ սըրտերըս բաժնեցիք։

Մընաս բարեաւ իմ տուն հօրական,
Մընաս բարեաւ իմ սիրական,
Ես կը հանդչիմ մինչ բոց կըրակին
Այս անբնակ դաշտի միջին.

Արեւիս լոյսը խաւարել է,
Այս աշխարհումն էլ որբ եմ ես.—
Սըրտիս կարօտը աղջկայ տեսնելից
Մինչեւ ի մահ զըրկած եմ ես։—

Generated on 2016-06-03 09:56 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Այս որ ասաց, շարժեց մըտրակը,
Երեք ձիանց մէջքին խըփեց.
Իւր սիրեկնի պարզ յիշատակը
Այսպէս երգով նա փարատեց։

---

## ԱՐՄԻԿԻ ԵՐԳԸ

Աղջըկե՛րք, պար բըռնեցէք,
Արմիկի երես գովեցէք.
Այ երես չարմաղ երես,
Դու մեզ չը թողնես սեւ երես։

Բարձր սարէն պաղ ջուր կուգայ,
Արմիկի երես կը լւայ,
Այ երես, արեւ երես,
Քո չափաղով մեր սիրտ կերես։

Աղջըկե՛րք, պար բըռնեցէք,
Արմիկի աչեր գովեցէք.
Այ աչեր, սիրուն աչեր,
Արեւի պէս փայլուն աչեր։

Ո՞վ պատռեց վագրի բերան,
Արմիկ պատռեց վագրի բերան,
Վագրի բերան—ահա այսքան—
Ժանիքները մէկ-մէկ գերան։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 09:57 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՀԱՍՕԻ ԵՐԳԸ

Ահա՛ ծագեց կարմիր արեւ,
Տաք եւ պայծառ է օրը.
Դէ՛հ, քաշեցէք սիրուն եզներ
Ցառա՞ջ տարէք արօրը։

Վարը վարենք, ակօս փորենք
Խոր ակօսներ հողի մէջ,
Սերմ ցանենք որ հունձք հնձենք
Ցորեան դիզենք կալի մէջ։

Կը գայ ձմեռ—մենք վախ չունինք—
Ուրախ կ՝անցնի մեր օրը,
Ուտելու միշտ պաշար ունինք։
Լի եւ կուշտ է մեր փորը։

Դէհ քաշեցէ՛ք, սիրուն եզներ
Շուտով վարենք արտերը.
Թող չասեն մեր դրացիները՝
Ծոյլ են Հասօի եզները։

Ռաֆֆի

Generated on 2016-06-03 09:58 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՀԱՍՕԻ ԵՐԳԸ

Ահա՛ ծագեց կարմիր արեւ,
Տաք եւ պայծառ է օրը.
Դէ՛հ, քաշեցէք սիրուն եզներ
Ցառա՞ջ տարէք արօրը։

Վարը վարենք, ակօս փորենք
Խոր ակօսներ հողի մէջ,
Սերմ ցանենք որ հունձք հնձենք
Ցորեան դիզենք կալի մէջ։

Կը գայ ձմեռ—մենք վախ չունինք—
Ուրախ կ՝անցնի մեր օրը,
Ուտելու միշտ պաշար ունինք։
Լի եւ կուշտ է մեր փորը։

Դէհ քաշեցէ՛ք, սիրուն եզներ
Շուտով վարենք արտերը.
Թող չասեն մեր դրացիները՝
Ծոյլ են Հասօի եզները։

Ռաֆֆի

Generated on 2016-06-03 09:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ՀՈՎԻԿ

Ահա ելաւ լուսին արծաթ
Մութ ամպերու ստուերէն,
Ահա նաւակն ալ գեղազարդ
Դուրս սահեցաւ ժայռերէն.

Անուշ հովիկ, փչէ յուշիկ
Ու դէպ ինձ բեր բիւր բիւր ալիք։

Նաւակին մէջ իմ գեղուհին
Փռուած՝ անփոյթ՝ լուսնի տակ,
Կը ձայնակցի իր կիթառին,
Հնչուն ձայնով մը յստակ.

Անուշ հովիկ, փչէ յուշիկ
Ու դէպ ինձ բեր երգն անուշիկ։

Ձայնով կ՚երգէ սէր ու գգուանք,
Համակ յուզում ու սարսուռ,
Ալ թո՛ղ, աղջի՛կ, երգն ու նուագ,
Բաց աչքերըդ ինձ դարձուր.

Անուշ հովիկ, փչէ յուշիկ
Ու դէպ ինձ բեր սէրն անուշիկ։

Շանթ

---

Generated on 2016-06-03 09:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ՈՂԲ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

Ախ Վասպուրական տըխուր Հայաստան,
Անթիւ հերոսներ քեզ մէջ ժողուեցան.
Ահեղ կըռուի մէջ այնքան դիմացան,
Ի սէր ազգութեան նահատակուեցան։

Ա՛խ, բաւ է, հայեր, միշտ այսպէս դերի
Թողնել հայրենիք դիմել օտարին
Օտար սիրում է մեզ իբրեւ հիւրի,
Եւ մեր հացն ու ջուր դարձնում է աղի։
Վան փոքրիկ քաղաք իր դաւառներով
Լեցուեցան դիակ հարիւր հազարով.
Ներկուեցան դաշտեր հայու արիւնով,
Ձայն տուին երկինք, ամպերն աստղերով։

Ս. Ժամկոչեան

---

## ԵՐԳ ՕՐՕՐՈՑԻ

Մայրն Անուշ քնակն աչերն առեր,
Անուշ հովերն ալ տարուբեր.
Իմ տատրակիս քունն է եկեր,
Անուշ երգով ըսեմ օրօր։

Որդին Ես քուն չունիմ անգութ մայրիկ
Հերի՛ք աչքըս կապես, հերի՛ք.
Մէկ պահիկէն կ՚ընեմ պաճիկ,
Իս արձակէ՛, մ՚ըսեր օրօր։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 09:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մայրն Մինչեւ չի լան մատաղ մանկիկ,
Ծիծ չեն իտար անոր գա՛ռնիկ.
Դուն չի լացած իմ մէկ հատիկ,
Ես ծիծ կուտամ կ՝ըսեմ, օրօր։

Որդին Խըղճուկ սրտով ձայն եմ ձըգեր,
Կը ճըվճըվամ, դուն չես լսեր,
Անուշ ձայնիդ ես ըզմայլեր,
Ես կուլամ դուն կ՝ըսես օրօր։

Մայրն Արցունքներդ մարգարիտի պէս,
Երեսդ ի վար ի՞նչ կը թափես.
Մի՛ լար, ձադուկ, մի՛ լար, մեղք ես,
Ո՞վ կ՝ուզես, ան ըսէ օրօր։

Որդին Գիրկըդ ինծի հանգստարան,
Ծիծերդ բերնիս անուշ ծորան,
Իրիկուան դէմ պառկիլ օրրան,
Աչքըս կապէ, ըսէ օրօր։

Մայրն Քընացընեմ իմ աղաւնիս,
Մեծացընեմ սիրով սըրտիս.
Կարմիր վարդի նըման բացուիս,
Շուքըդ նստիմ, ըսեմ օրօր։

Որդին Քիչ մը թուլցուր թեւերս ոտքերս,
Ալ թըմրեցաւ փափուկ մըսերս.
Անուշ մըրափն առնէ աչերս,
Հապա սըխմէ՛, կարդա՛ օրօր։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:00 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մայրն Այդ սուտերով չեմ խաբուիր ես,
Կ'ուզես որ զիս նըստեցընեմ,
Զի քընանաս, ծիծըս ուտես,
Դատարկ տեղը ըսեմ օրօր։

Որդին Քիչ մը ճոր ճոր, քիչ մը ճար ճար,
Քիչ մը տան տան, քիչ մը պար պար
Քիչ մ'ալ պապան ա'ռ հօպքա տա'ր,
Քիչ մ'ալ մէն մէն, ետքը օրօր։

Բուրաստան Ս. Սահակեան

---

## ԱՆԴՐԱՆԻԿ

Անդրանիկ Փաշան բիւր ընկերներով
Զինուած պատրաստուած Մօսին զէնքերով
Անցաւ սար ու ձոր իւր տասնեակներով
Սասուն, Ալիսաթ, Վան դարձաւ արեան ծով։

Շրջում անվեհեր փոքրիկ խմբերով
Ընդդէմ թշնամուն կռիւ մղելով
Կռւում անվեհեր դողտրիկ երգերով
Վրէժ առ վրէժ Հրայր յիշելով։

Դէ՛հ, ելէ՛ք տղերք ժամանակ հասաւ
Հայդուկ Անդրանիկ մեզի կ'սպասէ
Տարօն, Մուշ գաւառ արիւն կ'հոսին
Անդրանիկ Փաշան ձեզ խրախուսէ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:01 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ՀԱՐՍՆԵՐԳ

Առաւօտուն բարի լոյս,
Աստուած պահէ ամենուս
Թող դուրս գայ թշնամուս
Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ,
Թող դուրս գայ թշնամու լուս
Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ, սիրու՛ն, լո՛րիկ
Լո՛րիկ, լո՛րիկ, լոր իմ, լու՛ս լո՛րիկ։

Հազար երնէկ էն աւուր
Տաւուլ զուրնա չալեցուցին,
Կանաչ կարմիր հագեցուցին,
Տարան ժամը կայնեցուցին,
Աւետարան կարդացուցին,
Ձեռը ձեռին տըւեցուցին.

Տու՛յ, տու՛յ, տու՛յ, տու՛յ...
Լո՛ր իմ, լո՛րիկ, սիրուն լո՛րիկ,
Լո՛րիկ, լո՛րիկ լո՛ր իմ, լու՛ս լո՛րիկ,

Առաւօտուն բարի լոյս,
Բարեւ ասա բարեւուս,
Բարեւ հասնի արեւու։

Առաւօտուն բարի լոյս,
Արեւ ելաւ սարի ուս,
Արի՛, երթանք դար ի դուս։

Generated on 2016-06-03 10:01 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Առաւօտ բարի լոյս,
Աստուած պահէ մեր երկուս,
Լո՛ր, ոսկի իմ հոգուս։

---

## ԵՐԳ ԳԻՆԻՈՅՆ

Անմահ անուշ դու գինի,
Շատ սիրելի ես քաջին,
Զի գոյնդ արեան նմանի՝
Պատերազմաց ի դաշտին։

Բոսորափայլ քո փըրփուր
Որ մեզ ի կռիւ փըչէ հուր։
Թէ հաշտութիւն դայ արդար
Փոխի ի ցօղ զովարար։

Դափնիք քեզմով կ՝առնեն ոյժ,
Կարմիր կրակոտ դու գինի
Քեզմով զուարթ եւ աչխոյժ
Կ՝ըլլայ հեզիկ ձիթենի։

Քեզմով վառի բոցադոյն՝
Օրիորդին համեստ դոյն.
Կեցցեն մեր քաջ պատանիք,
Եւ նազելի դեղանիք։

Մ. ՊԷՇԻԿԹաշլեան

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:02 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Առաւօտ բարի լոյս,
Աստուած պահէ մեր երկուս,
Լո՛ր, ոսկի իմ հոգուս։

---

## ԵՐԳ ԳԻՆԻՈՅՆ

Անմահ անուշ դու գինի,
Շատ սիրելի ես քաջին,
Զի գոյնդ արեան նմանի՝
Պատերազմաց ի դաշտին։

Բոսորափայլ քո փըրփուր
Որ մեզ ի կռիւ փըչէ հուր։
Թէ հաշտութիւն դայ արդար
Փոխի ի ցօղ զովարար։

Դափնիք քեզմով կ՝առնեն ոյժ,
Կարմիր կրակոտ դու գինի
Քեզմով զուարթ եւ աշխոյժ
Կ՝ըլլայ հեզիկ ձիթենի։

Քեզմով վառի բոցադոյն՝
Օրիորդին համեստ դոյն.
Կեցցեն մեր քաջ պատանիք,
Եւ նազելի դեղանիք։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:03 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ՊԱՐԵՐԳ

Արեւը կայնէ կէս օր,
Դէ՛, քէ՛լէ, դէ՛, քէ՛լէ, եա՛րօ, ջա՛ն,
Իմ եարը կուգայ էս օր.
Դէ՛, քէ՛լէ, դէ՛, քէ՛լէ, եա՛րօ, ջա՛ն,
Իմ եարի քալած ճամբէն,
Դէ՛, քէ՛լէ, դէ՛, քէ՛լէ, եա՛րօ, ջա՛ն,
Կը ցանեմ կարմիր մանոր։
Դէ՛, քէ՛լէ, դէ՛, քէ՛լէ, եա՛րօ, ջա՛ն,

---

## ԱՐԾԹԻ ԲԱՐՁՐ

Արծթի բարձր դեղայ
Լօ, լօլօ, լօլօլօ, լօլօլօ ջան
Ջուրը հիւանդի դեղայ
Լօ, լօլօ, լօլօլօ, լօլօլօ ջան
Էս ինչ անօրէն դեղ ա՞,
Լօլօլօ, լօլօլօ, լօլօլօ ջան.

Սիրածն սիրածին չեն տար
Լօլօլօ, լօլօլօ, լօլօլօ ջան
Ուզածն ուզածին չեն տար։

Լօլօլօ, լօլօլօ, լօլօլօ ջան
Ջորս կողմը կարմիր եղայ։
Լօ լօ լօ, լօ լօ լօ, լօ լօ լօ ջան։

Generated on 2016-06-03 10:03 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ԱՆԲԱԺԻՆՆԵՐ

Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,
Օր ու արեւ չը տեսանք,
Վա՛խ, մեր կեանքը սեւով անցաւ,
Աշխարհից բան չիմացանք։

Հարուստ մարդիկ կ'ուտեն, կ'խմեն
Աշխարհի ճոխ սեղանից,
Մենք աշխարհի խորդ-տղերքն ենք,
Մեզ փայ չկայ աշխարհից։

Խեղճ աղքատի հոգին դուրս գայ,
Քարից-հողից հաց քամէ.—
Բեռով հացը հարուստին տայ,
Հարուստն ուտէ, վայելէ։

Խեղճ աղքատը դառը դատի—
Դատարկ նստի... է՛յ, աշխարհ,
Էլ ինչո՞ւ ես քարը թողնում
Քարի վրայ, քար աշխարհ։

Ա. Իսահակեան

Generated on 2016-06-03 10:03 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

Արի՛ իմ սոխակ, թո՛ղ պարտէզ, մերին,
Տաղերով քուն բեր տըղիս աչերին.
Բայց նա լալիս է.— դու, սոխակ մի՛ գալ.—
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ։
Եկ, աբեղաձագ, թո՛ղ արտ ու արօտ,
Օր ըէ տղիս, քնի է կարօտ.
Բայց նա լալիս է. դու ձագուկ մի՛ գալ,
Իմ որդին չուզէ աբեղայ դառնալ։

Թո՛ղ դու տատրակիկ, քո ձագն ու բունը
Վուվուով տղիս բե՛ր անուշ քունը.
Բայց նա լալիս է. տատրակիկ մի՛ գալ,
Իմ որդին չուզէ սգաւոր դառնալ։

Կաչաղակ՝ ճարպիկ, գող արծաթասէր,
Շահի զրոյցով որդուս քունը բեր.
Բայց նա լալիս է. կաչաղակ մի՛ գալ,
Իմ որդին չուզէ սովգազար դառնալ։

Թո՛ղ որսդ արի, քաջասիրտ բազէ,
Քու երգը գուցէ իմ որդին կուզէ...
Բազէն որ եկաւ՝ որդիս լռացաւ,
Ռազմի երգերի ձայնով քնեցաւ։

Գամառ–Քաթիպա

Generated on 2016-06-03 10:03 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ԵՐԳ ԱԶԳ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Արի՛ք Հայկազունք յառաջ ընթանանք,
Սահմանադրութեան նոր բարեւ մ՝ալ տանք.
Ո՛ր ազգն երբ զԱնի փրկարար դոչեց,
Նո՛ր հոգի, նո՛ր կեանք անոր պարգեւեց։
Եկայք բարեկամք, առ բարձրեալն Աստուած
Ուղղենք մեր մաղթանք սուրբ սրտէ բղխած։
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ,
Ազգն ու Սահմանադրութիւն։

Զրկանք բռնութիւն վատթար վարչութեան,
Բերին մահ ի դուռն Հայոց ազգութեան
Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց,
Եւ կենաց ուղին մեր առջեւ հարթեց,
Ցառաջդիմութեան բացաւ ասպարէզ,
Ուր ամեն վայրկեան դոչել պարտ է մեզ
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։

Ջնջեց ամենայն կարծիք անձնական.
Խեղդեց ամենամն ձայն անհատական.
Հրաւէր կարդաց Աստուծոյ ձայնին,
Առաջնորդ լինիլ գործոց ազգային։
Այն որ Աստուծոյ ձայն տուաւ մեզի,
Մենէ թող առնու ձայնով մ՝այնպիսի,
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։

Generated on 2016-06-03 10:04 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Հայերս անարգուած գրկեց բարձրացուց,
Մարդկային կոչման մեզ արժանացուց.
Շընորհեց մեզի զոր ազատն Աստուած,
Մարդկութեան երկրորդ նշանն էդրած։
Որուն շնորհիւն յարգ ստացանք մենք,
Անոր յարգ տալով ապրինք ու երգենք։
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։

Դու ալ, Հայաստա՛ն, սիրուն հայրենիք՛,
Ալ այսուհետեւ մի սրգար լռիկ,
Չի ա՛լ քու որդիք նոր ոգւով բերկրեալ,
Չքեզ հարս կ՚ուզեն տեսնել զարդարեալ։
Ալ մի՛ լար, մայրիկ, լացդ ի պար փոխէ,
Եւ ձայնիւ քաղցրիկ որդւոցդ հետ երգէ.
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛, միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։

Հայե՛ր միանանք, մեր մօրն հետ օրհնենք
Զանոնք որ մեզի տուին սուրբ օրէնք.
Սահմանադրութեան բարեաց փոխանակ,
Թո՛ղ վարեն ուրախ կեանք մի փառունակ։
Թո՛ղ եւ մեր որդիք հետ անոնց անուան,
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան.
Կեցցէ, կեցցէ, կեցցէ, միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն։

Ց. Գ. Սվաճեան

Generated on 2016-06-03 10:04 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԲԼԲՈՒԼ

Գընա՛ բըլբուլ, մեր աշխարհից,
Էլ դու այստեղ մի՛ երգիր.
Մեր օրը սեւ, մեր կեանքը ցաւ.
Էլ այս երկրում մի՛ երգիր։

Տանջուած սիրտը, անուշ երգից
Ցըքրւում է, խորանում,
Սրտի վիշտը, քո երգերից՝
Փրփրում է, լեռնանում։

Գնա՛ բըլբուլ, մեր աշխարհից,
Գնա՛ երգիր այլ երկրում.
Ասա՛ այնտեղ, որ մեր վարդից՝
Արեան թարմ հոտ է բուրում։

Որ ողբաձայն մրմնջացող
Վտակների հոսանքին՝
Միանում են արեան շիթեր,
Առաջ շարժւում մոլեգին։

Որ ծաղկազարդ հովիտներից
Մահւան ցուրտ հոտ է փչում,
Որ մեր երկրում կանաչ դաշտերն
Իսկոյն կարմիր են ներկւում։

Գնա՛ պատմիր, որ դու տեսար
Արիացած մի երկիր,
Սարեր, ձորեր կարմիր հագած
Արիւնազարդ մեր երկիր։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:04 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԲԼԲՈՒԼ

Գընա՛ բըլբուլ, մեր աշխարհից,
Էլ դու այստեղ մի՛ երգիր.
Մեր օրը սեւ, մեր կեանքը ցաւ.
Էլ այս երկրում մի՛ երգիր։

Տանջուած սիրտը, անուշ երգից
Ցըքրւում է, խորանում,
Սրտի վիշտը, քո երգերից՝
Փրփրում է, լեռնանում։

Գնա՛ բըլբուլ, մեր աշխարհից,
Գնա՛ երգիր այլ երկրում.
Ասա՛ այնտեղ, որ մեր վարդից՝
Արեան թարմ հոտ է բուրում։

Որ ողբաձայն մրմնջացող
Վտակների հոսանքին՝
Միանում են արեան շիթեր,
Առաջ շարժւում մոլեգին։

Որ ծաղկազարդ հովիտներից
Մահւան ցուրտ հոտ է փչում,
Որ մեր երկրում կանաչ դաշտերն
Իսկոյն կարմիր են ներկւում։

Գնա՛ պատմիր, որ դու տեսար
Արիացած մի երկիր,
Սարեր, ձորեր կարմիր հագած
Արիւնազարդ մեր երկիր։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:04 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ա՛խ, ջան բըլբուլ, էլ մի՛ կանգնիր,
Գնա՛, պատմիր աչքարհին,
Մեր ցաւն հոգսն, վիշտն ու թախիծ,
Մեր օրերը դառնագին։

---

## ԿԻԼԻԿԻԱ

Այգուն, այգուն իմ խըցկի մօտ,
Լուսաժըպիտ մինչ ցառաւօտ,
Երգէ պըլպուլն իմ Սիս Վանայ՝
Կիլիկիա՛, Կիլիկիա՛, Կիլիկիա՛։

Գարուն կուգայ, ծաղկունք փթին,
Դաշտերու մէջ, ի ծոց հովտին,
Բայց պըլպուլիկն իմ դեռ ողբայ
Կիլիկիա՛, Կիլիկիա՛, Կիլիկիա՛։

Ա՛խ այն վարդին կարմիր թերթեր,
Արեամբ նախնեաց են ներկըւեր,
Եւ այն ցօղեր որ կը կաթին,
Արիւնն են, արցունքն են Զապէլին։

Լո՛ւռ կա՛ց պըլպուլ ալ մի՛ երգեր,
Մի՛ նորոգեր մեր հին վիշտեր.
Լո՛ւռ կաց, քո տաղ վէրքեր բանայ՝
Կիլիկիա՛, Կիլիկիա՛, Կիլիկիա՛։

Generated on 2016-06-03 10:05 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Ա՛խ, ջան բըլբուլ, էլ մի՛ կանգնիր,
Գնա՛, պատմիր աչքարհին,
Մեր ցաւն հոգսն, վիշտն ու թախիծ,
Մեր օրերը դառնագին։

---

## ԿԻԼԻԿԻԱ

Այգուն, այգուն իմ խըցկի մօտ,
Լուսաժըպիտ մինչ ցառաւօտ,
Երգէ պըլպուլն իմ Սիս Վանայ՝
Կիլիկիա՛, Կիլիկիա՛, Կիլիկիա՛։

Գարուն կուգայ, ծաղկունք փթին,
Դաշտերու մէջ, ի ծոց հովտին,
Բայց պըլպուլիկն իմ դեռ ողբայ
Կիլիկիա՛, Կիլիկիա՛, Կիլիկիա՛։

Ա՛խ այն վարդին կարմիր թերթեր,
Արեամբ նախնեաց են ներկըւեր,
Եւ այն ցօղեր որ կը կաթին,
Արիւնն են, արցունքն են Զապէլին։

Լո՛ւռ կա՛ց պըլպուլ ալ մի՛ երգեր,
Մի՛ նորոգեր մեր հին վիշտեր.
Լո՛ւռ կաց, քո տաղ վէրքեր բանայ՝
Կիլիկիա՛, Կիլիկիա՛, Կիլիկիա՛։

Generated on 2016-06-03 10:05 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԱՐՄԷՆ ՂԱԶԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Դժոխք կամ Հրայր)

Կերեզմանիս թող արձանին վերայ,
Գրեն, յաղթութիւն, թէ՝ կոթող է սա,
Թող տեսնէ Հայաստան, թող կարդան հայ քաջեր,
Տեսնեն իրենց ընկեր։
Նահատակ է պառկեր,
Ծոց Հայաստանին։

Անձնուէր եւ քաջ Ղազարեանի պէս,
Ցուցնեն գերեզման քաջ արմէնի պէս,
Գալարին աղիքներ, թափեն գաղջ արցունքներ
Տեսնեն զիրենց ընկեր
Նահատակ է պառկեր,

Ծոց Հայաստանի։
Ցուսով եմ կընքած աչացս վերջին քուն,
Տեսնայ Հայաստան իւր աղատութիւն,
Իմ գերեզմանիս քով թող կայնին ու ձայնեն,
Ահա աղատութիւն,
Ահա փրկութիւն,
Քաղցր Հայաստանի։

Հանդչին ոսկորներ մէջ իմ տապանին,
Տեսնել փրկութիւն Մայր Հայաստանին,

Generated on 2016-06-03 10:06 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Այն օրն թող կնքեն իմ գերեզմանիս վէմ,
Ազատ դրօշակներով,
Հայ զինուորներով,
Ու քահաներով։

---

## ԱՑՐԻԻՆ ՈՂԲԸ

Արշալոյսը նորէն բացւաւ
Ամպու զամպէն ձօն կուգայ,
Ալ ձին քրտնած ներս ինկաւ.
Ա՛խ իմ եարը տուն չեկաւ։

Լոյսը բացւաւ դուռը բացւաւ
Ալ ձին քրտնած ներս ինկաւ,
Սիրուն կուրծքին վերք ստացած
Արիւնթաթախ ներս ինկաւ։

Ա՛խ սիրուն ձի դու ինձ ասա,
Ո՞ր տեղ թողիր իմ եարը,
Ո՞ր ձորի մէջ ո՞ր քարի տակ,
Անտէր թողիր իմ եարը։

Ամպեր եկան մութը պատեց,
Մինակ նստած կուլամ ես,
Սիրելիս՝ կորած եարիս՝
Սուգ ու չիվան կ՝անեմ ես։

Generated on 2016-06-03 10:06 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Այն օրն թող կնքեն իմ գերեզմանիս վէմ,
Ազատ դրօշակներով,
Հայ զինուորներով,
Ու քահաներով։

---

## ԱՑՐԻԻՆ ՈՂԲԸ

Արշալոյսը նորէն բացւաւ
Ամպու զամպէն ձօն կուգայ,
Ալ ձին քրտնած ներս ինկաւ.
Ա՛խ իմ եարը տուն չեկաւ։

Լոյսը բացւաւ դուռը բացւաւ
Ալ ձին քրտնած ներս ինկաւ,
Սիրուն կուրծքին վերք ստացած
Արիւնթաթախ ներս ինկաւ։

Ա՛խ սիրուն ձի դու ինձ ասա,
Ո՞ր տեղ թողիր իմ եարը,
Ո՞ր ձորի մէջ ո՞ր քարի տակ,
Անտէր թողիր իմ եարը։

Ամպեր եկան մութը պատեց,
Մինակ նստած կուլամ ես,
Սիրելիս՝ կորած եարիս՝
Սուգ ու չիվան կ՝անեմ ես։

Generated on 2016-06-03 10:07 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳ

Արի՛ գութան, վարի գութա՛ն,
Օրն է կէլ է ճաշ դառել,
Առը շուռ տուր խոբիդ ղուրբան
Օրհնեալ է Աստուած, հօրս վեր։

Քաշի՛ր, եզը, ուսիդ մատաղ,
Քաշի՛ր. քաշենք, վար անենք,
Ճիպտին արա, քիշիր հոտաղ,
Մեր սեւ օրին ճար անենք։

Պարտքանտէրը գանգատ գնաց,
Քէօխուէն կըգայ կը ծեծի.
Տէրտէրն օրհնեց անվարձ մնաց,
Կը բարկանայ, կ՝անիծի.

Էն օրն էկան, թովջի արիր,
Հարկ են ուզում տէրութեան,
Ի՞նչ տամ կօռին ու բեգառին,
Վարի՛, վարի՛, իմ գութան։

Զեռըս պակաս, ոյժս հատած,
Հազար ումի ցաւի տէր,
Ինձ են նայում, մերկ ու սոված,
Մի տուն լիքը մանուկներ։

Յ. Թումանեան

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:13 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՀՐԱՒԷՐ ՄԱՐՏԻ

Բա՛մ. փորոտան բարձուստ բոմբիւնք յԱրարատ-
եան դաշտն ի վար
Արի արանց արիւնք յեռանդ առատանան ի հրազայր
Հրաւէր հայրենեաց հռչակի 'ՆդՀանուր,
Հոգիք հայկազանց բորբոքին ի հուր.
Որք երկնաւորին պսակին էք կարօտ,
Որք երկնաւորին փառաց երկնայորդ.
Հապ՝ օ՛ն, արի արանց մանկունք,
Հայրենավրէժքըդ Հայկազունք։

Հապ՝ օ՛ն, ի զէն գունդագունդ,
Ցեռեալ ի պար թունդ ի թունդ
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, օ՛ն անդր յառաջ,
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, մի՛ ձախ, մի՛ յաջ,
Օ՛ն անդր յառաջ,
Մի ձախ մի յաջ,
Օ՛ն անդր յառաջ,
Ցառաջ յառաջ,
Հապ՝ օ՛ն յառաջ։

Հայկեան փանդռանց որոտընդոստ դռնչին բարբառք
մարտագոռ,
Դառնագոռոչ անդրաձայնէ Պարսիկ կերկերն ի չե-
փոր.
Շարժեն հրեշտակք թեւս լուսափողփողս,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:13 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ճիւաղք ճուճաղաց կայտռեն ի դժոխս.
Շրջինդն չանթառաք զեթերօք փարի,
Սարսափին սանդարք՝ ի Խօլ խաւարի։
Հապ՛ օ՛ն, արի արանց մանկունք, եւն։

Մամիկոնեան սաւառնեցաւ դրօշն հայերս գոգ ծալ ի ծալ,
Ի ճակատուց ի թըշնամեաց սա ո՛չ գիտաց յուրաստըկալ
Հեծեալ հրանժոյդ վեհին Վահանայ՝
Վրէ՛ժ կանչէ արեան Կարմիր Վարդանայ,
Փոնչեալ բոցաշունչ դափր ի դարշապար.
Ռազմամուտ վարդի յայնժոյժ երիվար։
Հապ՛ օ՛ն, արի արանց մանկունք, եւն։

Ի գուպարել մարտայարդար դարշապարաց Արամայ
Գոռան Կորդիրք, Մասիս սարսին, հռընչեն սահանք Երասխայ,
Ի գրոհ ի գրոհ տալ բիւրուցն ոտնատրոփ
Տատանին դաշնակք՝ յառն է շրջինդն ապշող
Կռուի առ կռուի կոփեն կմբայք տէգ առ տէգ
Դղորդ առնուն տարերք՝ կորովեացն ի վէգ։
Հապ՛ օ՛ն, արի արանց մանկունք, եւն։

Արի՛ք ի կռիւ քաջակորովքդ ընդ կորակոր հրոսն Արեաց.
Հա՛պա համհարդք մեր բիւրայաղթք ձեր նոր հանդէսք են փառաց,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:13 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թռի՛ք ի ռազմ ի խազմ, առէ՛ք զէն եւ զարդ.
Երեսնիւք յիսնիւք հարիւր բիւրս հազարս.
Ի սուր ի սուսեր, կարշնեղ յաղեղունս՝
Ըզսեաւ Սասանեանց ջարդել կռափունս.
Հապ՛ օ՛ն, արի արանց մանկունք, եւն։

Մինչեւ ցե՞ր, ցե՞ր սուգ ունի զՀայս, հատէ՛ք զարտոսր որբք այրիք
Հարանց՝ հարսանց՝ եղբարց՝ որդւոց, հանուրց Հայոց վրէժխնդիրք
Թինդս առեալ երթամք յասպարէզ քաջաց
Ցուշիկ հնչեն ձայնք արեան սիրելեաց.
Սօսափիւնք յերկնից՝ արհաւիրք յերկրէ
Քաջացս օժանդակ՝ ըզպարս հերքեսցէ,
Հապ՛ օ՛ն, արի արանց մանկունք, եւն։

Օ՛ն անդր ի բա՛ց Հայկեան հողոյ հրսկայազանցն եւ սրբոց,
Ի բա՛ց Ջուլիր չուառական մոխրապաշտիցն պըղծոց
Դաշտք մեր մերժեսցեն զոսկըրտին անդամ,
Արիւնք վկայից զճապաղիսն անժամ.
Ոտն ընդ դիս տոռնեալ դարձին ի փախուստն
Մատնակուրծք ընդ հայս հայեսցին հեռուստ
Հապ՛ օ՛ն, արի արանց մանկունք, եւն։

Արք աղեղանց բարձր ի Թիրախ Թռուցի՛ք վերջին ձեզ խրախոյս,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:14 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

*Առեալ տասցուք զանթիկնադարձ զայս վարդապետն դրօշ անխոյս.*

*Ի վերայ յինքից յաղթից Վարդանայ,*
*Պարսկական բազկաւ արւոյն Վահանայ,*
*Շեշտ ի ծայր չիրմի դաշտին Շաւարշան*
*Տընկել յաղթանակ անմահ Հայութեան.*
*Հապ՛ օ՛ն, արի արանց մանկունք, եւն։*

Հ. Ղ. Վ. Ալիշան

---

## ԱՐԱԶԸ ՀԵՇՏԱՑԵԼ Ա

*Արազը հեշտացել ա,*
*Ինչ ասեմ հօրըս մօրըս*
*Եաման եար, ճամբէքը կոշտացել ա,*
*Եար, եար, եաման եար,*
*Դարդերս շատացել ա եար, եար։*

*Ծաղիկ ես բաղի մէջին. եաման եար,*
*Մի հատ ես թաղի միջին, եար, եար։*
*Գիշեր ցերեկ, առանց քունի, եաման եար,*
*Գովում եմ խաղի միջին, եար եար։*

*Անցնում եմ գետի էն կուռը,*
*Քաղեմ մի դաստայ նուռը։*
*Ով իմ սիրածն ինձ չի տայ,*
*Կը քաշեմ խանի թուրը։*

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:14 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ԶԷՅԹՈՒՆԻ ԵՐԳԸ

Ես հանեցի սուրս պատեանէս, արտասուքով օծեցի
Տրտմած անուշ սիրականիս, ես իմ ողբը կարդացի:
Նա երդուեց իւր սիրովը, չխնայել թշնամոյն
Այս պայմանաւ աշխոյժ քաջին, հուր հրացան յանձնեցին:
Հոգեւորաց երկնից քաջեր ում կ'սպասեն ո՛ մեզի
Նա բաժանեց մոբնչալով իրրեւ կորիւն առիւծի:
Խլեց բերդերը, այրեց գիւղերը, թուրքն ըրաւ այս փոյթը
Ծակեց շուն մ...ին քիթը նէզ ըէայի գարշ հոտը:
Զարդեց դարձաւ գերիներով իմ պաշտելի անունով,
Սեւ մազերով սըրբեմ փայլի թրիս կաթած արիւնով.
Հանգըստացնեմ կուրծքիս վրայ չի խանգարի իւր քունը
Մեզի մահաբոյր կեցցէ իրեն. ազատուած է Զէյթունը:
Ստուած սիրէք հայ աղջիկներ, եկէք խորհինք միասին
Այսուհետեւ ալ չսիրենք, կռուից փախչող վախկոտին:
Խիստ զարհուրելի կերպով թուեց, ոսկւոյ սիրող մեռնողին
Համբոյրի տեղ թոյն կամենանք վատից վրէժ չառնողին:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:14 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Տիրանի պէս քաջեր սիրենք արժանի է մեր սիրոյն
Որով գիտենք սիրով պահել, արժանիքը քաջերուն:
Ա՛խ, քեզի մեռնիմ Տիրան, Տիրան ոսկւոյ սիրող ամեայ,
Հազար Էրնէկ ամէն հայուն մօտն ունենայ քեզ նման:

---

## ԴԷ՛ ԳՆԱ՛, ԿԻԳԱՄ...

Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, չուտ կիգամ,
Ընիչուն միզարքս առնիմ իգամ, չուտ կիգամ:
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, չուտ կիգամ,
Կարմիր սօլերս հագնիմ իգամ, չուտ կիգամ:
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, չուտ կիգամ,
Խօրօտ բրճերս առնիմ իգամ, չուտ կիգամ,
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, չուտ կիգամ,
Գրլխուս լաչին առնիմ ի գամ, չուտ կիգամ,
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, չուտ կիգամ,
Թափլիկներս առնիմ իգամ, չուտ կիգամ:
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, չուտ կիգամ,
Ապռջաններս առնիմ իգամ, չուտ կիգամ:
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, չուտ կիգամ,
Մեղրիս կապերն առնիմ իգամ, չուտ կիգամ:
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, չուտ կիգամ,
Էրեսնոցներս առնիմ իգամ, չուտ կիգամ:
Դէ՛ գնա՛ կիգամ, վա՛յ գնա՛ կիգամ, չուտ կիգամ,
Դեղ ու դեղքերս առնիմ իգամ, չուտ կիգամ:

Generated on 2016-06-03 10:15 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԱՐԱԲՕՑԻ ԵՐԳԸ

Գըրող տանի քուրդ Աբոյին,
Իլաջ մացեր Արաբոյրին.
Ըսպաներ է ջոջ ափոյին.
Զարթիր լաս մըռնիմ քըզի։

Ջուր ե՞ւ մնամ էլու դռներ,
Էրթամ գտնեմ զիմ խեղճ գառներ,
Սուքեմ զիմ բաղչա, ծառեր.
Զարթիր լաս, մըռնիմ քըզի։

Դէն իրիշկէ գալող ո՞րն է
Քաջ Արաբս բաղդաւորն է,
Կարմիր իրիցանց զինւորն է,
Զարթի՛ր լաւս, օգնէ՛ Հայուն

Խեղճ մչեցին մնաց լալով,
Հեռու երկիրներ ման գալով,
Մեռաւ թուրքի պարտքը տալով,
Զարթիր...

Ոտքի կայնէ կտրիճ Խերան,
Ձորքով գնա առաջ ուրան,
Սալլաթ մէհրու բաժին խուրբան,
Զարթիր...

Սէֆիլ, չիվար մացած Հայեր,
Էղած անտէր, բնաւեր հաւքեր
Տէ՛ր, դու փրկէ, պահէ արթուն,
Զարթի՛ր լաւս, օգնէ՛ Հայուն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:15 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ՕՐՕՐ ԱԹԻՆՕ

Սարը սարի նման չէ,
Հօ՛յ, օրօ՛ր, Ադինօ,
Լաւն ասէք, լաւն ասէք՝ իմ եարի.
Իմ սիրելու վատը մ՚ասէք՝ իմ եարի։

Քարը քարի նման չէ.
Հօ՛յ, օրօ՛ր, Ադինօ,
Լաւն ասէք, լաւն ասէք՝ իմ եարի.
Իմ սիրելու վատը մ՚ասէք՝ իմ եարի։

Հարսն ու աղջիկ շատ տեսայ,
Հօ՛յ, օրօ՛ր, Ադինօ,
Լաւն ասէք, լաւն ասէք՝ իմ եարի.
Իմ սիրելու վատը մ՚ասէք՝ իմ եարի։

Մէկն էն եարի նման չէ։
Հօ՛յ, օրօ՛ր, Ադինօ,
Լաւն ասէք, լաւն ասէք՝ իմ եարի.
Իմ սիրելու վատը մ՚ասէք՝ իմ եարի։

Զառ-մանուշակ բաղի մէջ,
Թագնուել է Թաղի մէջ.
Լուսաբացին ծաղկում է,
Հովի, շողի, շաղի մէջ։

Երանի քեզ, ա՛լ աղջիկ,
Ոսկիդ ծալէ-ծալ ,աղջիկ.
Դու մեր տանը հարսնացու,
Ես քեզ համար տալ աղջիկ։

Generated on 2016-06-03 10:15 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՄԱՀ ՀԱՅՈՐԴԻՈՅՆ

Դու զո՞վ խնդրես, մայր իմ անուշ.
Ե՛կ, մի՛ դողար, մօտեցիր հոս,
Անլաց աչքով դիտէ զորդիտ,
Ու իւր վէրքերն արիւնահոս։

Քըրդաց մայրեր թող լան ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Ինչպէս երբեմն. օրրանիս մէջ
Կակուղ ձեռքով փայփայելով,
Մանկիկ մարմնոյս հանդիստ տայիր՝
Իբրեւ հրեշտակ նըւագելով.

Զիս հանդչեցուր ի հող ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

«Նորեկ որդւոյս կենացն արեւ
Զեզի համար փայլի, Հայե՛ր,»
Այսպէս յանժամ դու կ՝երգէիր,
Օրօրոցիս նըստեալ քովեր։

Անոնց համար չիլաւ, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Կարմիր կայլակք ցայտեն վէրքէս,
Սակայն, մա՞յր իմ, նայէ չորսդին,

Generated on 2016-06-03 10:15 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Զարիւնռուչտ սա քիւրտերըն տե՛ս,
Հազարներով փռուած գետին,
Կերաւ զանոնք սուրն մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Մըռընչեցին ինչպէս վիշապ
Ու մեր վրայ յարձակեցան.
Ո՞վ հայրենիք, ի հուր ի բոց
Քո համար մեր սիրտ վառեցան։
Կարմիր ներկան ձորք մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Ու ծափ զարկին մեր հարց ըստուերք.
Զի չէ՛ մեռած Հայոց կըրակ,
Ու ցնծացին այնչափ զոհեր,
Զի լուծաւ վրէժ յարեան վըտակ.
Խնդաց Մասիս, մա՛յր իմ ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Վերջին համբոյր տամ քեզ, մա՛յրիկ,
Հատուցանես զայն սիրուհւոյս,
Վերջին անգամ գրկեմ մեր հող,
Ուր արդ կիջնեմ ի ծոցն անլոյս։
Խաչ մը տնկէ վրրաս, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Մ. Պէշիկթաշլեան

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:15 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ԴԱՐԲԻՆՆԵՐ

Գիշերն անցաւ, լոյս ծագեցաւ,
Աշխատութեան ժամ է տըղայք
ժամ է տըղայք,
Օն երկաթաց չըռինթ եւ պայտ,
Պսակեն օրուանս աշխատանք։

Այս աշխատանք.
Օն այս երկաթ ծեծենք մենք,
Որ զուր տեղը ծեծ չուտենք,
Զարկենք կարգաւ տիկ, տակ, տակ,
Ծեծենք, ծեծենք, տիկ, տակ տակ։

Բայց բռնաւորն էլ գընաց,
Պատեհ առիթ մեզ մընաց,
Գրկենք զիրար եւ պարենք,
Երկաթ վերջը կը ծեծենք։

Օն գրկենք մենք տըղայք,
Պարենք, անփոյթ անդադար,
Այս գերութեան դառն է կեանք,
Անփոփոխ են եւ կապանք,
Գոհ սրտով եւ զըւարթ
Օրհնենք զԱստուած մեր արդար։
Օ՛ն ցնծացէք, օն խնդացէք,
Օ՛ն պարեցէք, դուք անդադար։
Տրա լա, լա, տրա լա, լա, լա, լա,
Լա, լա, լա, լա, լա, լա, լա։

Generated on 2016-06-03 10:16 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԳՆԱՑ ԱՇՈՒՆ ԵԿԱՒ ԳԵԱՐՈՒՆ

Գնաց Աշուն, եկաւ Գեարուն
Աղբրանց արուն մըջ քարերուն,
Դեյին սուսան վըր սարերուն,
Զէկեռ էկաւ բարի գեարուն,
Քե կառնեմ վըր իմ թեւերուն,
Թըռում վըր բանձրիկ ծառերուն,
Բուն կը դնեմ մըջ ճիւղերուն,
Ցերդիս բանամ դէմ խով քեամուն:
Վայ լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ,
Վայ լո, լո, լո, լո, լո, լո, լո,
Վայ լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ,
Վայ լո, լո, լո, լո, լո, լո, լո,

Քեա սեւ սեւաւոր աղջիկ,
Քեզի կիտամ վանայ խոչին,
Կարմիր ֆէսին մաշխուն յոդին—վույ:

Քեա սեւ սեւաւոր մարէ,
Ես ի՞նչ կեանիմ վանայ խոչին,
Կարմիր ֆէսին նաշխուն յոդին,
Ղուրբան կեանիմ զիմ Սախոյին,
Զուլքիա զեախուն ծակքեռ լոզին
Զարխի թելին, ձեռքի փէտին վույ:
Հով, հով, հով էղնի,
Եարըս քեամարով էղնի,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:16 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հով, հով, հով էղնի,
Եարիս տունը ծով էղնի,
Դէ՛ թրուիք, թրուիք, թոզը հանէք,
Մեր դուշմանին գեօզը հանէք,
Դէ՛ զարնէ՛ք զարնէ՛ք թոզը հանէք,
Մեր դուշմանին գեօզը հանէք,
Գնաց Գեարուն եկաւ աշուն,
Կըտրաւ խոտիկ ծաղկըներուն,
Կըտրաւ ջրրիկ աղբըրներուն,
Կըտրաւ ձէնիկ կաքվըներուն,
Քե կառնեմ վըր իմ թեւերուն,
Թրռում վըր բան ձրիկ հովերուն
Վանիմ խանիմ վըր վարերուն,
Բուն կը չինեմ մըջ ձորերուն։
Վայ լէ՝՝՝

---

## ՊԱՐԵՐԳ

Հայկազունք պար բռնենք.
Թեւ ի թեւ օն ելնենք,
Ցնծութեան ձայներով,
Եւ զուարթ երգերով։
Զի ահա ի նոր բաղդ,
Զայն կուտայ երկինք արդ.
Ի սուրբ կոչում ուխտենք հաստատ,
Անձնուէր գոլ պատրաստ։

Generated on 2016-06-03 10:16 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՔԱՋ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին,
Ազատութեան դրօշակ.
Կեցցէ՛ Հայրենիք, գոչելով
Բարձրացրին աղաղակ։

Թնդաց, որոտաց ձայներից
Ողջ աշխարհքը հայկական,
Խումբ խումբ կարգած հայ զաւակներ
Հասնում էին օգնութեան։

Գուրգէն, Վահան, Հրայր (Դժոխք)
Քաջ Անդրանիկ ղեկավար,
Տալորիկի լեռներումը,
Շրջում էին անդադար։

Սարսափեցան քիւրտ ցեղերը.
Մինչ պալատը Սուլթանին,
Հրամայեց չուտ կործանել
Դիրքերը հայդուկներին։

Ահա անգութ քիւրտ ու տաճիկ,
Սարսափելի տեսարան.
Ժամանակ է վրէժ լուծել,
Գոչեց ձայնը Հայկական։

Կրակ տեղաց հայ քաջերի,
Բնակավայր դիրքերից
Այլայլեցան քիւրտ խուժաններ
Ահռելի գնդակներից։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:16 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԿԻԼԻԿԻԱ

Երբոր բացուին դռներն յուսոյ
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ,
Զբնաղ երկիրս մեր Արմենիոյ
Երբ փայլէ իւր քաղցրիկ օդեր,
Երբոր ծիծառն իր բոյն դառնայ,
Երբոր ծառեր հագնին տերեւ
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աչխարհ որ ինձ ետուր արեւ։
Տեսի դա տերըն Սիւրիոյ։
Լեռն Լիբանան եւ իւր մայրեր,
Տեսի զերկիրը Իտալիոյ,
Վենետիկ եւ իւր կոնտոլներ,
Կըղզի նըման չիք մեր Կիպրեայ,
Եւ ոչ մէկ վայր է արդարեւ
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աչխարհ որ ինձ ետուր արեւ։
Հասակ մը կայ մեր կենաց մէջ՝
Ուր ամենայն իղձ կ'աւարտի.
Հասակ մը կայ ուր հոգին է տենջ՝
Ցիչատակաց իւր կարօտի.
Ցորժամ քընարս իմ ցրտանայ,
Սիրոյն տալով վերջին բարեւ,
Երթամ ննջել յիմ Կիլիկիա
Աչխարհ որ ինձ ետուր արեւ։

Ն. Ռուսինեան

Generated on 2016-06-03 10:22 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ

Գացէք, տեսէք, ո՞վ է կերել զէծ.
—Գացինք, տեսանք, դէլն է կերել զէծ։
Գէլն է զէծուն
Էծն զտիկուն,
Տիկ զարեւուն,
Հալալէ կրմօ, հալալէ
Հալալէ, ջավօ՛, հալալէ,
Է՛ս ինչ քաֆուր դարու հասանք հալալէ
Էս ինչ խաբար կրմօ ստացանք, հալալէ։
Դէ՛հ, գնա, կիգամ, դէհ գնա կիգամ, չուտ կիգամ,
Կարմիր սօլերս հագնիմ, կիգամ, չուտ կիգամ։
Գացէք, տեսէք, ո՞վ է կերել զէծ,
—Գացինք, տեսանք արջն է կերել զէծ,
Արջն զգէլուն
Գէլն է զէծուն,
Էծն զտիկուն,
Տիկ զարեւուն,
Հալալէ կրմօ, հալալէ
Հալալէ, ջավօ՛, հալալէ,
Է՛ս ինչ քաֆուր դարու հասանք, հալալէ,
Էս ինչ խաբար կրմօ ստացանք, հալալէ,
Նազ մի աներ, նազ մի աներ, նազ աղջիկ,
Դէրեադ քաշիր թոզ մի աներ հայ աղջիկ,
—Նազ կու էնիմ, նազ կու էնիմ հայ տղայ,
Մինդանովս թոզ կու էնիմ հայ տղայ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:22 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Խորոտիկ, մորոտիկ,
Խորոտիկ, մորոտիկ,
Իմ եարն է։

Գացէք, տեսէք, ո՞վ կերել է զէծ,
—Գացինք, տեսանք, առիւծն է կերել զէծ,
Առիւծն զարջուն,
Արջն զգելուն,
Գէլն է զեծուն,
Էծն զտիկուն,
Տիկ զարեւուն,
Հալալէ ջավօ հալալէ.
Է՛ս ինչ քաֆուր դարու հասանք, հալալէ,
Էս ինչ խաբար կրմօ ստացանք, հալալէ,

Ծառը ես եմ, բարը դու ես Աննա ջան,
Սրտով սիրած եարս դու ես Աննա ջան։
—Ծառը դու ես, բարը ես չեմ հայ տղայ,
Սրտով սիրած եարս դու չես հայ տղայ,
Խորոտիկ, մորոտիկ,
Խորոտիկ, մորոտիկ,
Իմ եարն է։

Գիրգորն ե՛մ, Գիրգորն ե՛մ,
Ձեր մայլեցի Գիրգորն եմ։
Խորոտիկ, մորոտիկ,
Խորոտիկ, մորոտիկ,
Իմ եարն է։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:22 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԽՈՒՄԱՐ

Խումար պառկէ երեսբաց,
Հո՛պ, հո՛պ, հո՛պպըտա, դը՛մբա,
Դեղին կարպետ, բըմբուլ բարդ,
Հո՛պ, հո՛պ, հո՛պպըտա, դը՛մբա,
Հէ՛յ, հէ՛յ, լա՛ւն է, հէ՛յ, հէ՛յ, լա՛ն է,
Հէ՛յ, հէ՛յ, լա՛ւն է, հէ՛յ, հէ՛յ, լա՛ն է,

Անուշ քնէ երես բաց,
Սահակն եկաւ՝ խելք գնաց։
Հաջոց բակն էր դալդըմա,
Աչնան Թոխլին դաւուրմա։

Խաբար տարէք ըռէսին.
Աղջիկ բերէ վեր մըսին։
Հաւարն ընկաւ ըռեսին,
Գեաղէք Թափան վեր մըսին։

Հէրօն ուտէր, գիրանար,
Մըկօն խմէր ուրախանար։
Հաջոնց կոլը բոլորպար,
Խումար մէջը կը խաղար։

Ծամեր Թալուկ իւր յետեւ,
Կը Թռվըռէր չատ Թեթեւ։
«Հաստա՛տ մընայ մեր Հաջին,
Որ պահէ մեր նոր փեսին»։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:22 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԽԱՆԸՄ ԵՒԱ ՋԱՆ

Բերդիցը դուրս եկայ Ալագեազ տեսայ, Խանըմ Եւա Ջան։

Աբարանը աչերիս դուման է դառել,
Դուն կեցիր բարով, ես կ'երթամ լալով,
Լալով ողբալով Քէօչ ու պարխանով,
Քեզնից զատուելով։ Քեզնից զատուելով
Ընկեր ճարելով, սարեր ման գալով։
Մէկդին ոչխարք կ'արածեն մէկդին գառները, Խանըմ Եւա Ջան։

Կանաչել են ծաղիկները, ծառերը,
Դուն կեցիր բարով, ես կ'երթամ լալով,
Լալով ողբալով Քէօչ ու պարխանով,
Ընկեր ճարելով, ընկեր ճարելով,
Ձէնքեր չարժելով, Աստուած կանչելով։
Արի գնանք քու ման քալած արտերը, Խանըմ Եւա Ջան,

Քեզի տեսայ նորացաւ իմ տարտեր.
Դուն կեցիր բարով եւ այլն։
Ես Ալէքն եմ Զամուրնեցի մի ջիւան Խանըմ Եւա Ջան,

Տուզաղն ինկայ դարապաղից Եւան.
Ձեռքս ու ոտքս կապին բեր դը տարեցին
Դուն կեցիր բարով եւ այլն։
Զուխտ զալվար, լալով տունը բերեցին
Օրերը, գարնան օրեր, դուք ուր էք կորեր։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:23 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ի՞նչ ընեմ այսպէս տառապեալ կեանքը
Ե՞րբ պիտի տեսնեմ Հայկազեան փառքը։
Մատաղ մանկտիք զոհ եղան գացին
Անմեղ արիւնով ազգը փրկեցին։
Երկինք թող պատմէ անոնց անունը
Թող յաւէրժ կեցցէ Պօյաճեանը։

---

## ՂԱՐՍԵՑՈՑ ԵՐԳԸ

Ես վերէն կուգայի՝ դու դուռը բացիր,
Ձեռքդդ ծոցդդ տարիր՝ ա՞խ էրիր լացիր,
Ես էլ քեզի չառայ՝ տունը մնացիր
Գընը, ղապլի խային, եար չեղար ընծի։

Ես սարէն կուգայի, չալակըս բուրդ էր,
Լեզուդ ինծի համար վառած քուրքուրթ էր
Բոյրդդ ղարդու ղամիչ, յերեսդդ թուղթ էր,
Գընը, ղապլի խային, եար չեղար ընծի։

Երկինքը ամպեր էր, ի՞նչ անուշ թոն էր,
Էկայ դրոնէն անցայ, ջանանըս հոն էր.
Էրեցայ–վառեցայ, էս ի՞նչդ տուն էր
Գընը, ղապլի խային, եար չեղար ընծի։

Էսօր չարաթ էղնիր էգուց կիրակի,
Եարըս դրոնէն անցնիր էրթար կըրակի,
Լեզուն բանլիք էղնիր, ծոցը ֆըռէնկի,
Գընը, ղապլի խային, եար չեղար ընծի։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:23 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ԾԻԾԵՌՆԱԿ

Ծիծեռնա՛կ, ծիծեռնա՛կ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ո՞ւր, ինձ ասա՛,
Թռչում ես այդպէս արագ։

Ա՛խ թռի՛ր, ծիծեռնա՛կ,
Ծընած տեղըս՝ Աչտարակ,
Անդ չինի՛ր քո բոյնը՝
Հայրենի կըտուրի տակ։

Անդ հեռու՝ ալեւոր
Հայր մ՝ունիմ ես սրգաւոր,
Որ մինակ իւր որդւոյն
Սպասում է օրէ օր։

Երբ տեսնես դու նորա,
Ինձնից շատ բարեւ արա՛,
Ասա՛ թող նստի լայ
Իւր անբաղդ որդւոյն վրայ։

Դու պամէ՛ թէ ինչպէս
Աստ անտէր ու որբ եմ ես,
Միշտ լալով ողբալով՝
Կեանքս մաշուել, եղել կէս։

Ինձ համար ցերեկը
Մութ չրջում է արեգը,
Գիշերը թաց աչքիս՝
Քունը մօտը չէ գալիս։

Generated on 2016-06-03 10:23 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Ասի՛ր որ չի բացուած
Թառամեցայ մթացած.
Ես ծաղիկ գեղեցիկ՝
Հայրենի հողից զրկուած։

Դէ՛հ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացի՛ր, թռի՛ր արագ,
Դէպ՝ Հայոց երկինը,
Ծընած տեղրս՝ Աշտարակ։

Գ. Դոդոխեան

---

## ՀԱՌԱՋԱՆՔ ԱՔՍՈՐԱԿԱՆԻ

Երբ ալեկոծ ծովի վրայ
Իմ մակոյկս խորտակուի,
Ես փրփրադէզ ալեաց մէջը
Դեռ իմ յոյսրս չեմ կտրի։

Բոլոր ոյժով եւ համարձակ
Բազուկներս կը շարժեմ,
Ալիքները պատառելով
Դէպի ափունք կը թռչիմ։

Անհաւասար այս կռուի մէջ
Թէ ուժերս ինձ թողնեն
Ալիքները յորձանք տալով
Դէպի անդունդ ինձ տանեն։

Generated on 2016-06-03 10:23 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Այն ժամանակ մի սփոփանք
Ես գտնում եմ նրա մէջ,
Որ մեռնում եմ քաջի նըման,
Կռիւ տալով մինչեւ վերջ։

Ես Կուկուեան Սարգիս անուն՝
Աքսորման մէջ ինկած եմ,
Ազատութեան սիրոյն համար
Կեանքս ու հոգիս զոհած եմ։

Զեռքերս չղթայ ոտքերս չղթայ
Մութ բանտին մէջ ինկած եմ,
Հայրենիքիս սիրոյն համար
Կեանքս ու հոգիս զոհած եմ։

Գերեզմանիս քարին վրայ
Սէրըդ սիրով դու երդիր,
Եւ փոխանակ իմ երեսին
Շիրմիս քարին համբուրիր։

Մընաք բարեաւ, սուր, հրացան,
Մընաք բարեաւ, ընկերներ,
Անցան օրերս ազատութեան,
Եկան բանտի չըղթաներ։

Գերեզմանիս չորս բոլորը,
Վարդ, մանիշակ թո՛ղ բուսնին,
Իմ հայրենեաց խե՛ղճ զաւակունք
Այս վարդերով զբօսնին։

Գ. Թադէոսեան

Generated on 2016-06-03 10:23 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՍԻՐԱՀԱՐԻՆ ՆԱՒԱԿԸ

Լըճի մէջ նաւակը
Մեղմ հողմիկ կը տանի,
Նորա մէջ նստած է
Սիրահար պատանի։

Պատանին ձեռքն ունի
Կիթարա ու կ՝երգէ,
Իսկ քամին կը փախցնու
Նաւակը եզերքէ։

Լըճակին մէջը կայ
Քարաշէն մի ամրոց,
Սիրուհւոյ բնակարան՝
Հանապազ փակ ու գոց։

Պատանւոյ նաւակը
Դէպ ամրոց կը վազէր,
Ուր նորա անձկալին,
Սրտատրոփ կ՝սպասէր։

Մեղմ հովը աւելի,
Աւելի սաստկացաւ,
Երկինքը թուխպ պատեց,
Փոթորիկ բարձրացաւ։

Ալիքի լեռները
Գոռալով կը ծփան,
Պատանին աներկիւղ
Կը նուագէ կիթարան։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:24 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Լուսինը ամպերի
Տակերէն երեւցաւ,
Սոսկալի աղէտի
Պատկերը բացուեցաւ։

Կէս ճամբան ալիքը
Նաւակին խփուեցան
Նաւակը փշրեցին,
Ցոյս չի կայ փրկութեան։

Պատանին աչքերը
Լուսնակին բարձրացուց,
Կիթարի լարերը
Նա ուժգին հնչեցուց։

«Տար վերջին խօսքերըս
Անձկալուոյս, ո՛վ լուսին,
Թէ քաղցրիկ անունըդ
Ցիշելով կը մեռնիմ։»

Դադրեցաւ փոթորիկը,
Ու ալիք պառկեցան,
Ջրի վրայ կըտորտանք
Նաւակի երեւցան։

Սիրուհին սրտատրոփ՝
Նայեցաւ լըճակին,
Հասկցաւ դառնութիւն՝
Իւր անբաղդ վիճակին։

Generated on 2016-06-03 10:24 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

«Իրարմէ բաժնեցին
Մեզ աշխարհ եւ այս կեանք,
Գէ՛թ մահով այսուհետ
Զրի՜տակ միանանք։»

Ասաց եւ աղաղակ
Բարձրացուց նա ուժգին,
Գլորուեց, զոհ եղաւ
Անկուշտում ծովակին։

Քամառ–Քաթիպա

---

## ԽԱՂԱՂ ԴԱՇՏԻ ՈՐԴԻՔ

Խաղաղ դաշտի որդիք,
Լեռները. ելնենք,
Արօր, գութան մոռնանք,
Հրացան առնենք,
Ճնշուած մեր բողոքը
Ցայտնենք զէնքերով,
Եւ մեր արդար դատը
Վարենք արիւնով։

Մեր կեանքը մեր մահ,
Թող լինի ազատ,
Ճնշուած Հայու
Որդիք հարազատ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:24 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

«Իրարմէ բաժնեցին
Մեզ աշխարհ եւ այս կեանք,
Գէ՛թ մահով այսուհետ
Զրի՜տակ միանանք։»

Ասաց եւ աղաղակ
Բարձրացուց նա ուժգին,
Գլորուեց, զոհ եղաւ
Անկուշտում ծովակին։

Քամառ–Քաթիպա

---

## ԽԱՂԱՂ ԴԱՇՏԻ ՈՐԴԻՔ

Խաղաղ դաշտի որդիք,
Լեռները. ելնենք,
Արօր, գութան մոռնանք,
Հրացան առնենք,
Ճնշուած մեր բողոքը
Ցայտնենք զէնքերով,
Եւ մեր արդար դատը
Վարենք արիւնով։

Մեր կեանքը մեր մահ,
Թող լինի ազատ,
Ճնշուած Հայու
Որդիք հարազատ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:24 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԱՐԽԱՆԵԱՆԻ ԵՐԳԸ

Ես եմ ազատ հայ պատանի,
Աչխարհս են այս լեռները,
Սուրս է միայն իմ սիրելի,
Եւ ընկերս պէրտանը։

Իմ զարդերս են զէնքերս
Եւ թանկ ոսկի փամփուշտներս
Անկողինս կանանչ մարգեր, -
Փափուկ մաքուր պատուական,

Ապաստանս ժայռ քարերը՝
Եւ հայելիս ջինջ վտակ
Բնակարանս անտառները՝
Եւ լապտերս վառ լուսնակ։

Ես պարծենալ չեմ կարող չեմ
Որեւիցէ ուսումով,
Միայն գողտրիկ երգել գիտեմ,
Եւ զէնք շարժել սուրբ սիրով։

Խմբապետ եմ հայ խումբի մը
Զարդարուած լաւ զգեստով,
Ցանուն աղգիս կուռում եմ ես
Քաջարի ընկերներով։

Generated on 2016-06-03 10:25 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՍԻՓԱՆԱՅ ՍԱՐԵՐ

Լո՛ լո՛ լո՛, Սիփանայ սէդ սարի վրայ
Կորիճներ շտապով գալիս են միանում,
Այնտեղ անվախ որդիք, անյաղթ հսկայ լերան,
Զէնք ու զրահի են ընթանում։

Ինչո՞ւ վառւում են, զինւում,
Սանձակոծ ձի հեծնում անհամբեր.
Աւիւնը նոցա բորբոք սրտի մէջ եռում,
Փայլում անցնում անհամբեր,

Քանց Սիփանայ պինդ դամին,
Սլանում են դէպ՝ ի ցած, դաշտի մէջ է թշնամին.—
Նա է վառում նրանց վրէժ անմոռաց.
Ահեղ կռուի մէջ վատ թշնամին
Հատու սուսեր է հանել, ցեղապետին սպան-
նել,
Նա էր վառում քաջերին։
Բոլոր ցեղն այժմ ոտքի է կանգնած՝
Թշնամու ընդդէմ, մահու մարտի է կանչում։

Արեան մեծ վրէժ է թշնամուց պահանջում,
Ու թշնամին պարտուած՝
Թողնում փախչում սարէ սար
Ցետ է ձգում մեծ աւար։

Արիւն թափեցին, արիւնի փոխան՝
Արիւն խմեց ծարաւի սուրեր.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 10:25 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Նրան յագեցած դրեցին պատեան,
Ելնում են հիմա սէգ Սիփանն ի վեր։
Սէգ Սիփանայ կանաչ գլխին
Ցաղթող ցեղն անում է մեծ խնդում,
Եւ ամպերի բարձրութեան միջից
Հսկայ Սիփանն էերեւում.
Էլ չի գայ մեզ մօտ թշնամին,
Սուր տեսաւ մեր պողովատին։

---

## ԵԱՐ ՋԱՆ

Եար ջան ուզուլմիշ արա,
Դէյրէդ դուզուլմիշ արա,
Դոստ ու դուշմանի միջին,
Դարդերըս դուզուլմիշ արա.

Երեւան բող եմ առել,
Ջիգեարս դաղ եմ արել,
Դոստ ու դուշմանի միջին,
Լացս ծիծաղ եմ արել։

Ակը դէմ առաւ քարին,
Եկաւ, բոլորու տարին,
Խօսքերդ թէ՞ չը յեղ առար,
Ջըկացար քո իրղարին։
Եար ջան եւայլն։

Generated on 2016-06-03 11:00 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Նրան յագեցած դրեցին պատեան,
Ելնում են հիմա սէգ Սիփանն ի վեր։
Սէգ Սիփանայ կանաչ գլխին
Ցաղթող ցեղն անում է մեծ խնդում,
Եւ ամպերի բարձրութեան միջից
Հսկայ Սիփանն էերեւում.
Էլ չի գայ մեզ մօտ թշնամին,
Սուր տեսաւ մեր պողովատին։

---

## ԵԱՐ ՋԱՆ

Եար ջան ուզուլմիշ արա,
Դէյրէդ դուզուլմիշ արա,
Դոստ ու դուշմանի միջին,
Դարդերըս դուզուլմիշ արա.

Երեւան բող եմ առել,
Ջիգեարս դաղ եմ արել,
Դոստ ու դուշմանի միջին,
Լացս ծիծաղ եմ արել։

Ակը դէմ առաւ քարին,
Եկաւ, բոլորու տարին,
Խօսքերդ թէ՞ չը յեղ առար,
Ջըկացար քո իրղարին։
Եար ջան եւայլն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 11:01 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Կեցցէ՛ Խանը իւր խմբովը,
Սարսափ թողեց բասենումը,
Երեք օր ու գիշեր կռուեց,
Աչերիցը կորեց քունը։

Հայաստանի հողին վրայ,
Քաջը թափեց իւր արիւնը՝
Ցիշենք հայեր, չի մոռնանք
Կորիճ Խանի քաջ անունը։

---

## ՎԱՏ ԿՂԵՐՆԵՐ

Երբոր ազգին դահը փլաւ.
Երբոր ազգին թագը վերցաւ,
Ցայնժամ մոլի վատ կղերներ
Բարձրացուցին իրենց գահեր։

Ըսին Հայոց լոկ հայրենիք
Է կղերին պաշտած երկինք,
Լաւ է կրօնի չհաւատալ
Քան թէ անոր գերի ըլլալ։

Հին բռնակալ թագիդ փոխան,
Հայ, մարդ ընտրէ դու քո իշխան,
Թանգ զարդն, պչրանքն դէշ կղերին,
Ա՛ռ տո՛ւր կրթէ Հայի որդին։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 11:01 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ազգ մ՝որ չունի ազատութիւն,
Ան չունի կեանք, չունչ եւ արիւն,
Զունի կրօն, յոյս հոգեկան,
Անբան նիւթ է ոտնակոխան։

Երդմամբ վճռէ կամ մահ կամ՝ կեանք,
Փչրէ, կոտրէ լուծ եւ կապանք,
Լաւ է որ մարդ բնաւ չապրի,
Քան թէ ապրի այլոց գերի։

Փանփուշտ, գնդակ, ռումբ, ուժանակ.
Առատ լեցուր քո լայն տոպրակ,
Պատերազմի դաշտին մէջ դուն
Ընտրէ մեռնիլ քան թէ քո տուն։

Լաց, կոծ, բողոք, արիւն, աղօթք,
Անօգուտ են, կը ցնդին յօդ.
Քանզի ազգաց իրաւունքներ
Որոշած են քաջաց սուրեր։

Որու սուրը կտրուկ լինի,
Որու գնդակը հեռու նետուի,
Իրաւունքը անոր կ՝ըլլայ
Աշխարհն այսպէս կը հաւատայ։

Տարօնցի

---

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 11:01 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ԽԱՒԱՐԵԼ ԵՄ ԻՆՉՊԷՍ ԳԻՇԵՐ

Խաւարել եմ ինչպէս գիշեր,
Իմ չորս կողմս է փոթորիկ.
Ձունիմ քեզ սէր, չունիմ քեզ սէր,
Ես սիրում եմ հայրենիք։

Այնտեղ անթիւ անբաղդ մայրեր,
Որդեկորոյս ծնողներ,
Եղբայրազուրկ անթիւ քոյրեր
Թափում են յորդ արցունքներ։

Ինձ մի՛ սիրիր, ինձ մի՛ սիրիր,
Ես շատ ու շատ փոխուել եմ.
Ա՛ռ թաշկինակդ աչերդ սրբիր
Ես քեզ սիրել կարող չեմ։

Մնա՛ս բարեաւ, իմ աչքի լոյս,
Սէրդ լինի ինձ խրախոյս,
Արդ արտասուք ես պիտ՝ թափեմ
Որ իմ ցաւերս սփոփեմ։

Ա՜խ, տուէք ինձ մի քաղցր քուն,
Կեանքից հեռու սլանամ
Այն աշխարհը ուր խնդութիւն,
Ու սէրն է միշտ անթառամ։

Generated on 2016-06-03 11:01 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԿՌՈՒՆԿ ՀԱՑԱՍՏԱՆԻ

Բարով եկար սիրուն կռունկ
Ի՞նչ լուր բերիր հայրենիքէս,
Խօսի՛ր ինձ հետ ազատօրէն,
Կեանքս կը նուիրեմ ես քեզ։

Տեսա՞ր իմ հայրենեաց տունը,
Գեղեցիկ զարդարուած դոյնը,
Նորա սիրուն տանջուած եմ,
Աչքերիցս կորաւ քունը.

Ազատ տեսա՞ր մեր լեռները,
Հաղորդեցի՞ր դու իմ սէրը,
Այն լեռներու պաշտպանողը,
Արծուի, կորիւնի նեռները։

Տեսա՞ր մեր փոքրիկ բուրաստան,
Վարդ, մեխակ, շուշաններ շատ կան.
Եղեմական դրախտավայր,
Նա կոչում է Հայաստան։

Այնտեղ ունիս եղբայր ու քոյր,
Միջազ ի՞նչ կը սպասես ի զուր.
Արի առնեմ իմ թեւերուն,
Գնամք այնտեղ ուրախացուր։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 11:02 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԵՐԳ ԱՌ ԵԶՆԻԿ

Դատարանին իմացուցին,
Ժողովուրդէս զիս զատեցին,
Տիգրանակերտ ուղարկեցին.
Արի Եզնիկ, ա՛յ, քաջ Եզնիկ։

Մնաք բարեաւ, նորէն կուգամ,
Վատ քրտին ես սարսափ կուտամ,
Ու եռանդով քարոզ կուտամ.
Արի Եզնիկ, ա՛յ, քաջ Եզնիկ։

Ալէճուլուին տակ կայնեցայ,
Դէպ հայրենիքըս նայեցայ,
Սուրը ձեռքըս բանակ մըտայ.
Արի Եզնիկ, ա՛յ, քաջ Եզնիկ։

Քահանաներ զիս պատեցին,
Սեւ զգեստներըս հագուցին,
Ճերմակ ձիուս նըստեցուցին,
Արի Եզնիկ, ա՛յ, քաջ Եզնիկ։

Օր պիտ՝ ըլլայ վերադառնամ,
Ցարկիս ներքեւ հանգըստանամ,
Ժողովուրդիս հետ միանամ.
Արի Եզնիկ, ա՛յ, քաջ Եզնիկ։

Generated on 2016-06-03 11:02 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ԳԸՆԱ՛, ԳԸՆԱ՛, ՈՏԻԴ ԵՄ

Գընա՛, գընա՛, ոտիդ եմ,
Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛,
Սա՛րին, օ՛, եա՛ր ջան,
Եա՛րին, օ՛, եա՛ր ջան,
Կարմիր խնձոր՝ գոտիդ եմ,
Հա՛.
Եա՛րին, օ՛, եա՛ր ջան,
Սա՛րին, օ՛, եա՛ր ջան,
Դու ինձ էստեղ չե՛ս թողնի,
Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛,
Սա՛րին, օ՛, եա՛ր ջան,
Եա՛րին, օ՛, եա՛ր ջան,
Ուր որ երթաս, մոտիդ եմ։
Հա՛.
Եա՛րին, օ՛, եա՛ր ջան,
Սա՛րին, օ՛, եա՛ր ջան,
Ապարանը քարոտ ա,
Քարին տակը արոտ ա.
Ուղիղ եօթը տարի ա,
Քոյրն աղբօրը կարոտ ա։
Եար եմ գըտել՝ եարի պէս.
Ընկուզենի ծառի պէս.
Ուր որ երթայ կայնել եմ,
Էն մեր սիրուն սարի պէս։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 11:02 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ՔԱՂՀԱՆ

Գարնան գութան հանեցի,
Եար, նայ, նայ, նա՛յ, նայ, նա՛յ,
Արտը բամբակ ցանեցի.
Սոնա եար, նա՛յ, նայ, նա՛յ,
Ամառն եկաւ, քաղն ելաւ,
Եար, նայ, նայ, նա՛յ, նայ, նա՛յ,
Քաղհանաւոր ճարեցի,
Սոնա եար, նա՛յ, նայ, նա՛յ,
Քաղհան կանեմ հօ՛ բերով,
Տոլմա կեփեմ բիբարով.
Աչնան անի լաւ օրեր,
Բամբակ քաղեմ նուբարով:
Բեռնեմ սայլը սար հանեմ,
Դուրս գայ չարի չար աչքը,
Զըմեռ հանգիստ օր կանեմ:

---

## ԼՈՒՍՆԱԿ ԳԻՇԵՐ

Լուսնակ գիշեր բոլորովին քուն չունիմ,
Զիս տեսնողը կարծում է թէ տուն չունիմ:
Կեանք խնդութիւն պարզ գիշերուայ լուսնակն է:
Ննջարանըս սենեկիդ պատին տակն է,
Մի՛ լար, մի՛ լար, մեռնիմ կամար ունքերուդ.
Արտասուքը վնաս կուտայ աչերուդ:
Արի՛ գնանք խորհուրդ անենք միասին,
Ամուսնանաք ալ չսպասենք մեծ պասին:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 11:02 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ

Առտու կ'ելլես դու ժուռ կուգաս,
Թափած մազով վայ, վայ
Բարեւ կուտաս բարեւ կ'առնես,
Հազար նազով վայ, վայ,
Սիրուն աղջիկ, աղուոր,
Քեզ կը սիրեմ իրաւոր,
Սիրտս սիրովդ վիրաւոր
Աղուոր, սիրուն աղջիկ մի հեռանար։

Զըրկողին քէն է սիրտը,
Մութ կը գոցէ վայ, վայ,
Քու նայուածքիդ ինկած տեղը,
Հուր է, բոց է վայ, վայ
Սիրտըս սիրովդ տոչոր,
Կը մեռնիմ կոր խաչոր,
Քեզ կը սիրեմ իրաւոր
Աղուոր, սիրուն աղջիկ մի հեռանար։

Աղուոր աղջիկ սիրտդ մեղրէն,
Ալ անուշ է վայ վայ,
Մի ըսեր մի վաղը վաղը
Ան ալ անուշ է վայ վայ,
Մի ըսեր մի չեմ գար
Չի ես քեզի չեմ օտար,
Գուցէ ըլլամ օգտակար
Աղուոր, սիրուն աղջիկ մի հեռանար։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 11:02 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Քեզ ուժ կուտան Մասսի քաջերը,
Որ դու լինիս քաջ Վարդան.
Իմ մատներով մի ոսկէթել,
Մէջքիդ գօտի եմ կարել
Գօտիցըդ սուրըդ կախեմ,
Այն էլ ինքըս եմ սրել։ Զարթիր, եւն։

Մեր բակումը ձի է կայնած,
Քեզ է մնում անհամբեր,
Զարթի՛ր, որդեակ, քանի՛ քնես.
Առ թուրը մահաբեր,
Քո Հայ ազգը հեծեծում է
Ձեռքը ոտքը շղթայած
Քու եղբարքը գերութեան մէջ...
Քաջ, միայն դու՞ն ես քնած։ Զարթիր եւն։

Զէ՛, իմ որդին չուտ կը զարթի,
Զին կը հեծնէ սանձակոծ,
Հայի արցունքը կը սրբէ,
Կը դադրեցնէ լաց ու կոծ
Հայ եղբայրները, քիչ էլ կացէք,
Իմ Աղասին զարթեցաւ,
Գօտին կապեց, թուրը կախեց
Եւ իր նժոյգ ձին նստաւ։ Զարթիր, եւն։

Գամառ–Քաթիպա

Generated on 2016-06-03 11:03 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԵՐԳ ԿԱԽԱՂԱՆԻ

Կախաղանը պատրաստուեցաւ
Արի՛ք, երթանք, ո՞վ Հայեր,
Թո՛ղ բռնութիւնը յագեցնէ
Իւր անօրէն, չար կիրքեր։

Մնա՛ք բարեաւ, ո՞վ ընկերներ,
Մնա՛ք բարեաւ, ո՞վ Հայեր,
Մի մոռնաք ձեր եղբայրներ,
Անգթութեան լոկ զոհեր։

Օ՛ն, Յովհաննէս եւ Մկրտիչ
Կ՚առաջնորդեմ ես ձեզի.
Մի՛ վհատիք, մի՛ վշտանաք
Հետեւեցէք դուք ինծի։

Թո՛ղ նկատէ բռնութիւնը
Հայը մահէն չի վախնար
Չի դադրիր պատերազմիլ
Իւր ազատութեան համար։

Անյիշաչար ո՞վ Աստուած իմ
Վրէժխնդիր դու եղիր
Մեր հայրերուն, մեր մայրերուն
Մխիթարիչ դու եղիր։

Generated on 2016-06-03 11:03 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԵԿ ԻՄ ՍՐԻՆԳ

Ե՛կ իմ սրինգ, իմ բարեկամ սըրտագին։
Նիհար չրթներդ, ո՛հ, երերուն,
Դի՛ր դալկահար իմ չրթներուն,
Երգենք ու լանք, լանք ու երգենք տըրտմագին,

Լա՛ց, զի լոկ քեզ գըտի հատորն իմ սրտին.
Դու բարունակ էիր կանանչ,
Երբ մի անգութ ձեռք անճանաչ
Կարեց ըզքեզ, անջատեց մայրն ու որդին։

Եւ թոյլ տըւիր որ լանջքիդ վրայ գալարուտ
Ծակեր բացին, վէրք երկաթի.
Թող այդ վէրքէն, ըսիր կաթի
Արիւն, բողոք, միակ ըսփոփ վիշտերուդ։

Ես ալ մանուկ էի անմեղ երբ վաղուց
Մի անծանօթ պատճառ վըզիս
Լուծ մը դըրաւ, ո՛րբ կոչեց զիս.
Եւ հօր ու մօր սիրոյ կարօտ զիս թողուց։

Իմ ալ կուրծքըս ծակծըկեցին ժանտ վէրքեր,
Եւ որպէս դուն սիրես որմին
Ցենուլ, լռել, մինչեւ որ մին
Զի յուզէ քեզ, չե՛ս հառաչեր, չես երգեր։

Լըռիկ մնջիկ սիրեմ եւ ես հեռու կալ
Ընկերութեան ժիտ ժըխորէն։

Generated on 2016-06-03 11:03 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Եւ իբ սըրտին, հոգւոյն խորէն
Ջնել, ըզգալ, լոկ զարմանալ ու խոկալ։
Թող երգէոն, դաշնակ, քընար գեղգեղեն
Ցեկեղեցւոջ, ի գինետան,
Աղօթք ու պար թուչին, խայտան՝
Թող այլք վայլեն հաճոյք մարմնոյ հոգեղէն։
Ա՛խ, իմ սրինգ, աչխարհ յոյսով թո՛ղ բերկրի,
Թող բաղդն անոր ժպտի յոյսին,
Ե՛կ ես եւ դուն ի միասին
Լանք ու երգենք, մեր բաժինն այս է յերկրի...։

---

## ՅՈՅՍ

Թող փչէ քամին պաղ պաղ երեսիս,
Վերէն ամպերէն սաստիկ ձիւն թո՛ղ գայ.
Ո՛րքան որ կ՝ուզէ՝ թող փչէ հիւսիս,
Ցուսով եմ, վաղ–ուշ գարունը պիտ՝ գայ։
Թուխպը թող պատէ երկինքը պայծառ,
Թանձր մառախուղ երկիր թող փակէ.
Սարերք աչխարհիս խառնուին իրար.
Ցուսով վաղ–ուշ արեւ պիտ՝ ծագէ։
Թո՛ղ գայ փորձութիւն թո՛ղ գայ հալածանք,
Խաւար թող դառնայ անաղօտ լոյսը,
Սարսափելի չեն Հային տառապանք
Միայն... չի հատնիր խեղճուկի յոյսը։

Գամառ–Քաթիպա

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-03 11:03 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ՊԱՆԴՈՒԽՏՆ ԱՌ ԿՌՈՒՆԿ

Կըռո՛ւնկ, ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ,
Կըռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս.
Մի՛ վազեր, երամիդ շուտով կը հասնիս.
Կըռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս.

Թողեր ու եկեր եմ մըլքերս ու այգիս,
Քանի որ ա՛խ կանեմ, կու քաղուի հոգիս.
Կըռո՛ւնկ պահ մըկեցի՛ր ձէնիկդ է հոգիս.
Կըռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս։

Քեզ խապար հարցնողին չես աներ տալապ.
Ձենիկդ անուշ կուղայ քանց ջրի տոլապ.
Կըռո՛ւնկ, Պաղտա՞տ իջնուս թէ ի Հալապ.
Կըռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս.

Սըրտերնիս կամեցաւ, ելանք գընացանք,
Այս սուտ աստընուորիս տարտերն իմացանք,
Աղու հաց կեր մարդկանց կարօտ մընացանք,
Կըռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս։

Աստընուորիս բաներն կամաց կամաց է,
Մի՛թէ Աստուած լըսէ, գըռնակն բաց է,
Ղարիպին սիրտն ի սուգ աչերն ի լացցէ,
Կըռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս.

Generated on 2016-06-03 11:03 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Աստուա՛ծ, քեզնէ կ՝ուզեմ մուրվէթ ու քէրէմ,
Ղարիպին սիրտն է խոց ճիկէրն է վէրէմ,
Խըմած ջուրն է լեղի հացը հարէմ.
Կըռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս։

Ո՛չ ըզլուր օրն գիտեմ, ո՛չ ըզկիրակին,
Ձարկած է զիս շամփուրն՝ բըռնած կըրակին,
Այրիլըս չեմ հոգար, ղարիպ կու մեռնիմ.
Կըռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս.

Ի Պաղտատ կուգաս, կ՝երթաս ի Սահրաթ,
Թըղթիկ մը գրեր եմ, տամ քեզ ամանաթ,
Աստուած ալ թող վըկայ լինի քու վըրաղ,
Տարեալ հասուցես զայդ իմ սերելեաց։

Գըրեր եմ մէջ թըղթիս՝ թէ հոս մնացի,
Օրիկ մի օրերուս՝ զաչերս չի բացի,
Սիրելիք, ձեզնէ կարօտ մնացի
Կըռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս.

Աչունն է մօտեցեր՝ գընալու ես թէտպիր,
Երամներ ես ժողվեր՝ հազարներ ու բիւր,
Ինձ պատասխան չի տըւիր՝ ելար գընացի՛ր։
Կըռո՛ւնկ, մեր աշխարհէն գնա՛ հեռացիր։

Նահապետ–Քուչակ

Generated on 2016-06-14 06:09 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ՖԷՏԱ

Թիփի, փորան մութ գիշերին
Ֆըտուտում էր Ֆէտային,
Փամփուշտները խաչկապ կցած
Հրացաններ ուսերնին։

Ա՛խ, Ֆէտայիներ, ջան Ֆէտայիներ,
Ձեր մայրեր ձեզի ղուրպան,
Մշու Սուլթան՝ Սուրբ Կարապետ
Ձեզի լինի օգնական։

Ա՛խ, Ֆէտայիներ, ջան Ֆէտայիներ,
Ձեզի հետ տարէք իմ տղէն,
Ձեզ հետ ապրի, ձեզ հետ մեռնի,
Ազգին մատաղ իմ տղէն։

Թիկունքըդ լայն, թեւերըդ պինդ,
Թեւերըդ պի՛նդ պողպատից,
Սիրել գիտես, կռուիլ չ՝իյտես,
Դու հսկայ երիտասարդ։

Քոյրըդ տանում են քիւրտերը,
Հօրդ արիւնն են ծծում,
Քու եղբայրն ալ կռուի դաշտում,
Կոտորում է թշնամուն։

Դաշտը թողի՛ր արօր ու մաճ
Իմ մէկ ու ճար, ազիզ լաճ,
Մի քիչ խաղայ հրացանի հետ,
Որ էլչտանք քուրտի խարճ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:10 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Վէրքերով լի ջան ֆէտայ եմ,
Կը թափառի՛մ, տուն չունիմ,
Եարիս փոխան զէնքս եմ գրկեր,
Գիշերները քուն չունիմ։

Զարխիֆալաֆ

---

## ԽԱՆԱՍՈՐԱՅ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Կարկուտ տեղաց Խանասորայ դաշտումը,
Ֆէդայիներ դաշնակցական, վրէժինդիր գոռում են.
Սոսկաց քիւրտը լեղապատառ Մազրիկցին,
Չէր սպասում իսպառ ջնջուիլ ֆէտայիի զնդակից։

—Եամա՛ն, Աստուած, ֆէտան եկաւ ո՞ւր փախչինք,
Ասաց որդուն կրծքին սեղմած լեղապատառ քրդուհին.
—Մի՛ վախենար, հանգիստ եղիր բաջի ջան,
Կանանց երբէք ձեռք տալու չէ վրիժառու քաջ ֆէտան։

Մի ժամուայ մէջ Մազրիկ ցեղը ջնջուեցաւ,
Խանասորայ կանանչ դաշտը կարմիր արեամբ ներկուեցաւ
Հայեր, յիշէք նուիրական այս օրը.
Ցուլիս ամսոյ քսան հինգին կատարեցէք մեր տօնը։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:10 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՔԱՋ ԱՆԴՐԱՆԻԿ

Կովկասի քաջեր խմբեր կազմեցէք,
Քաջ Անդրանիկին օգնութեան հասէք.
Առած իր շուրջ զինուորներ ութսուն,
Մաքրէ ճանապարհ նա դէպի Սասուն։
Քուրդը սարսափած, ճարը կտրուած
Հաղար ոսկի է դլխին խոստացած։

Հայ պատանիներ, շուտով շարժեցէք
Երբէք մի՛ վախնաք. սուրեր շարժեցէք,
Հասել է ժամը սուրբ ազատութեան,
Կենալու ժամ չէ, շուտով քալեցէք,
Սիրենք միութիւն չանենք վատութիւն,
Ունենանք Հայեր սուրբ ազատութիւն։

Օտար հողի մէջ չմնանք Հայերս
Հերի՛ք է Հային այս պանդխտութիւն,
Թող չը ծաղրէ մեզ անգութ թշնամին
Մինչեւ մենք հասնինք մեր նպատակին
Սիրենք միութիւն, չանենք վատութիւն,
Ունենանք Հայեր սուրբ ազատութիւն։

Քաջ Անդրանիկը անվախ, սուր առած,
Հայաստան դնալ վաղուց էր ուխտած.
Աջ ու ձախ ջարդել տաճկաց զինուորին,
Քիւրտերից մատաղ բերել վանքերին

Generated on 2016-06-14 06:10 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Դէ՛հ, Շէքիր փաշա, մտածիր հնար,
Հազար ոսկիով անես գլխիդ ճար։

Կովկասի քաջե՛ր, առիւծի ճուտեր,
Սիրէք ձեր սուրեր, առէք նիզակներ,
Հայ օրիորդներ պճնեալ տիկիններ,
Ծախէք ձեր զարդեր, առէք գնդակներ.
Հարուստք ձեր ոսկին տուէք մեր ազգին,
Ձեր անգին անունը յիշենք սերունդներ։

Դէհ հայ ընկերներ, հեծէք ձեր ձիեր,
Բաց թողէք սանձեր, անցէք սար ու ձոր,
Ահա՛ կռուի դաշտ, թշնամին անհաշտ,
Մեր սուր թող ուտէ թշնամու վաշտեր.
Ասա՛ քաջ Մուրատ, առած իմ խրատ,
Կամ կռուել ազատ, կամ մահ անարատ,

---

## ՊԱՐԵՐԳ ԹՌՆՈՑԻ

Զա՛ր՝ զը՛նգը, զա՛ր՝ զը՛նգը, թո՛ղ զը՛նգայ
Պարենք գիշեր լուսնկայ.
Էս գիշեր՝ լուսնակ գիշեր,
Զա՛ր՝ զը՛նգը, զա՛ր՝ զը՛նգը, թո՛ղ զը՛նգայ
Զիւնն եկեր՝ գետին նաշխեր։
Պարենք գիշեր լուսնկայ.
Էլի պարը՝ բոլորաւ
Եարը՝ միջին մոլորաւ։

Generated on 2016-06-14 06:10 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ԼԷՓՕ ԼԷ ԼԷ

Լէփօ լէ լէ, լէփօ լէ լէ, լէփօ լէ լէ, հօտալի
Հոդալլու ջան, հոդալլու ջան, հոդալլէ
Հոդալլու ջան, հոդալլու ջան, հոդալլէ
Գիւզէլ չիրին, եարալլը ջան եարալլէ։
Գիւզէլ չիրին, եարալլը ջան եարալլէ։

Հօլէյ, հօլէյ, հօլէյլէ,
Հայրըս տունը թող ճգնի
Մայրըս տունը թող չեղնի
Թէ տղերք եկէք թող հանենք
Զար թշնամու աչքը տանենք։

---

## ԷՍ ՃԱՄԲԷՔԸ.

Էս ճամբէքը ոլոր ա
Վա՛յ լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ,
Ես քեզ տեսայ մոլորա,
Նա, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,
Մոլորիս մէկ ճար արա, վայ լէ...
Ինձ էլ քեզ ընկեր արա նա, նայ...
Ծառեր դուք ծիրան միք տալ վայ լէ...
Ճղներ, դուք էլ բար մի՛ք տալ նա...
Ես ղարիբ եմ, ղոնաղ եմ, վայ լէ...
Դարդերս իրար մի՛ք տալ նա...

Generated on 2016-06-14 06:10 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Սեւ փուչին վիզս եմ գցել, վայ լէ...
Կրակը սիրտս եմ լցել, նա...
Թամամ հինգ օր չեմ տեսել, վայ լէ...
Իմ եարը միտս եմ քցել, նա...։

---

## ԻՄ ԸՆՏՐԱԾԸ

Կապոյտ երկնքում
Աստղեր են փայլում,
Այլ եւ լուսնակը,
Ամենից սիրուն,
Ամենից փայլուն
է արեգակը։

Կանանչ դաշտերում
Եւ այգիներում
Ծաղիկներ կան շատ.
Բայց չէ ոչ մինը՝
Վարդի նմանը,
Նա է բնութեան զարդ։

Սիրուն աղջիկներ
Ինչպէս ծաղիկներ
Ամեն տեղ շատ կան,
Բայց իմ ընտրածը,
Սրտիս սիրածը
Հրեշտակի է նման։

Գ. Բարխուդարեան

Generated on 2016-06-14 06:11 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ԶԷՅԹՈՒՆՑԻՈՑ

Զէյթունցի ենք, ժայռի ձագ ենք,
Կը թըռչըտինք սարէ սար,
Որ որս գտնենք ու բըզըկտենք
Եւ յօշոտենք չարաչար։

Զէյթունցիին կերակուրն է
Արիւնապուր, ոսկրէ թան
Զոր ոսխի սեւ արիւնէ
Կը պատրաստենք միաբան։

Մենք վախ չունինք ո՛չ գնդակէ
Եւ ոչ սուրէ երկսայրի
Խաղ մ՚է մեզի—Աստուած գիտէ—
Թափել արիւն գազանի։
Ապառաժի քաջ զաւակաց՝
Վախ կամ երկիւղ ամօթ է.
Զէյթունցիին պըսակն փառաց՝
Լեռի դաշտի կռիւն է։

Զէյթունցի ենք, մարդ ենք մռուի.
Միշտ ջարդելու ենք յօժար.
Այս է կտակ պապերի
Զարնել մէկի դէմ հազար։

Ուրեմն հաստ փոր դուք հարուստներ,
Գըզրոց, սնտուկ, դուք բաց ըրէք,
Ծրարներով շատ ոսկիներ
Մեզի պաշար ղրկեցէք։

Generated on 2016-06-14 06:11 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Եւ դուք, եղբա՛րք, օ՛ն, ա՛նդր յառա՛ջ
Ձէնք ու զրահ կապեցէք,
Բա՛ւ է այլ եւս լաց ու հառաչ,
ԱԶԱՏՈՒԹԻՒՆ գոչեցէ՛ք։

Ց. Ց. Զագրբեան

---

## ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅՈՑ

Կար ժամանակ, որ եւ Հայերն,
Արքայ իշխող ունէին.
Եւ զինավառ անթիւ զօրքեր,
Իւրեանց երկրում շատ կային։

Կար ժամանակ որ եւ նոքա,
Նման ծաղկած ազգերի.
Զարդարելով աշխարհ Հայկայ,
Փայլում էին անուանի։

Բայց այժմ անտէր, անթագաւոր,
Գերի, ծառայ ցաւագին.
Այս տեղ այն տեղ խիստ չքաւոր,
Զարշաւում են գլխովին։

Այժմ նոքա անմխիթար,
Հայրենիքից զրկուելով.
Վա՛յ են կանչում թշուառաբար,
Հալածանքներ կրելով։

Ց. Մ. Վանանդեցի

Generated on 2016-06-14 06:11 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԳՈՂԹՆԻ ՔՆԱՐ

Թէ հայրենեաց պսակադիր
Գողթնի քնարք լռեր են,
Երկնից թող գան անմահ հոգիք
Հայոց քաջեր պսակել։

Մասեաց գագաթն թող գան բազմին
Երկնից գունդ գունդ հրեշտակներ.
Աստուած իջեր ի Հայաստան
Հայոց արիւնն հոտոտել։

Փախէք, ամպեր, Շաւարշանէն,
Ա՛լ մի ցողէք ձեր ցողեր.
Շաւարշանը ոռոգուած է
Հայոց քաջաց արիւնէն։

Եւ կը ծըլին ու կը ծաղկին
Այս դաշտին մէջ ո՞չ խոտ, վարդ.
Այլ Վարդանայ ինկած երկիր
Պիտի ծաղկի սուրբ հաւատ։

Քանդակագործ քաջ Եղիշէն
Գրիչ ի ձեռին դայ յԱրտազ.
Զափէ, ձեւէ, գըրէ, դրոշմէ
Կեանք, մահ, հաւատ, Վարդանայ։

Generated on 2016-06-14 06:11 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Ո՛հ, Վարդանայ անուան արժան՝
Մասիս կանգնի մահարձան
Մենաստաններ, խաչն ի գմբէթ,
Աւետարան, սուրբ հաւատ։

Մաղէ, արեւ, քոյդ ճառագայթ
Խաղտեաց լեռնէն, մութ խորշեր.
Այնտեղ ինկաւ քաջ Հմայեակ,
Այնտեղ պառկեր նահատակ։

Լուսին, լուսին, աչօքդ անքուն՝
Պահէ Հայոց ոսկորներ
Եւ Մայիսի գլուարթ ցօղով
Ցօղէ անոնց շիրիմներ։

Արծուիք, բազէք Հայաստանի
Եւ արագիլք, անբան հիւր,
Դուք հսկեցէք այս աշխարհին,
Ժառանգեցէք հայոց տուն։

Մոխիրներու վրայ նըստէք,
Աւերակներ շինէք բոյն.
Եւ ծիծեռնակ գայ ու երթայ,
Մինչեւ Հայոց գայ գարուն։

Գ. Վ. Սրուանձտեանց

Generated on 2016-06-14 06:11 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ԶԻՆՉ ՈՒ ԶԻՆՉ

Զի՛նչ ու զի՞նչ տամ լողորդչուս,
Զոմա զոմա էր։
Զիմ լաչակ տամ լողուորչուս,
Քոմա քոմա էր։

Ո՛չ էառ, ո՛չ հանեցաւ,
Զոմա զոմա էր։
Ո՛չ եհան, ծամկալ ծովէն։
Քոմա քոմա էր։

Զի՞նչ ու զի՞նչ տամ լողուորչուս,
Զիմ մէջկապ տամ լողուորչուս։
Ոչ էառ, ոչ հանեցաւ,
Ո՛չ եհան ծամկալ ծովէն։

Զի՞նչ ու զի՞նչ տամ լողուորչուս,
Զիմ չապիկ տամ լողուորչուս.
Ո՛չ էառ, ոչ հանեցաւ
Ո՛չ եհան ծամկալ ծովէն։

Զի՞նչ ու զի՞նչ տամ լողուորչուս,
Լուսնակ գիշեր պագ մը տուի։
Հետ էառ, հետ հանեցաւ
Հետ եհան ծամկալ ծովէն։

Generated on 2016-06-14 06:11 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՍԱՍՈՒՆ

Թշնամական գոռ վաշտերը կատաղի
Պաշարեցին մեր լեռները սոսկալի։
Մի՛ վհատիր քաջ Սասուն,
Քեզ համար չէ նորութիւն.
Մեր պապերից սորվել ենք
Մեռնիլ քաջամարտի պէս,
Որ մեզ թողին յիշատակ։

Շէնիկ, Սէմալ պաշարուած են քուրդերով,
Տալուորիկի անցքն է փակուել թիւրքերով։
Զքեզ տեսնեմ, քաջ Մուրատ,
Սուրդ շարժիր անվհատ.
Մեր հեռաւոր եղբայրներ,
Ձեն կենար միշտ անտարբեր
Շուտով կըգան օգնութեան։

Թնդանօթի դէմ դրել ենք քաջ սրտով,
Սովի դիմադրել ենք կաթով, բանջարով։
Ի սէր Աստուծոյ, դժուար է
Հպատակիլ օտարին,
Լաւ է մեռնիլ առանց հացի,
Քան յանձնուիլ ոսոխին։,
Անգութ եւ անաստուածին։

Հայ աղջիկներ, առէք վառօդ ու կապար
Լրցէք դատարկ փամփուշտները չարաչար։

Generated on 2016-06-14 06:12 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Իսկ դուք, կանայք անվհատ,
Առէք սուր եւ հրացան,
Խրախուսեցէք հայ քաջեր,
Ազատենք մեր հայրենիք
Ձեր կանացի արիւնով։

---

## ԼՈՒՍՆԱԿՆ ԱՆՈՒՇ

Լուսնակն անուշ, հովն անուշ,
Շինականի քունն անուշ.
Ծագեց լուսնակ երկինքէն,
Հովուին սրինգ էր անուշ։

Հօտաղն եզներ կ'արածէ,
Մանկալ պառկեր քունն անուշ,
Քաղցրիկ զեփիւռ կը շնչէ,
Ծովային հովն էր անուշ։

Դաշտեր, ձորեր ննջեր են,
Ջուրեր գլգլան ,ձայն անուշ։
Թռչունները մտան բոյն,
Սոխակին ձայնն էր անուշ։

Անմահական հոտ բուրէր,
Կարմիր վարդի հոտն անուշ,
Հասուն պտղով լի ծառեր,
Որոնց տակ քունն էր անուշ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:12 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ՀԱՑ ԵՄ ԵՍ

Հայ եմ ես, մեռնիլ գիտցող Հայ եմ ես,
Մեռնելով ապրիլ գիտցող Հայ եմ ես.
Ո՛հ, Հայ եմ ես, նախահօրս Հայկին պէս.
Ազատ ապրող ազատ մեռնող Հայ եմ ես։

Հայու վշտեր իմ կրծքէն
Հանեն բոցեր սրտակէզ,
Հայ ազգութեան նուիրուած՝
Մահ փնտռող զոհն եմ ես։

Հայ եմ ես, սարսափեցէք իմ դէմքէս,
Վատ թշնամու մահ կը թռչի իմ զէնքէս,
Քիչ մ՝առաջուայ ստրուկը կամ պերին չեմ ես
Քաջ Արամայ կատղած թոռը, Հայ եմ ես։
Հայու վշտեր եւայլն։

---

## ԶՈՅԳ ԶՈՅԳ ԿՈՒՈՒՆԿ

Զոյգ զոյգ կըռուունկ էրկան վիզ,
Գապո, մամօ կարգէք զիս։
Համ գիւէ, համ վարդ, համ նարգիզ,
Գապո, մամօ կարգէք զիս։
Ալիպուխտը քնա՛մ ես,
Էս ի՞նչ ղաղու քսայ է։
Էդման մեռել թորկեն վիզ,
Գապո, մամօ կարգէք զիս։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:17 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԻՆՁ ՀԱՄԱՐ ՉԷ

Ինձ համար չէ՛ գարնան գալը,
Ինձ համար չէ՛ ծառի ծաղկիլը,
Ուրախութեան սրտի գրգիռը,
Ո՛չ մի բերկրանք չեն ինձ համար։
Ինձ համար չէ՛ կենաց բաղդը,
Ինձ համար չէ՛ երջանկութիւնը,
Եւ մրայօն կուսի աչքերը,
Նոցա արցունք չեն ինձ համար։
Ինձ համար չէ՛ փայլուն լուսնի
Անտառ ու սար լուսաւորելը,
Գարնան վարդի, երգչի տաղերը,
Սոխակ ու վարդ չեն ինձ համար։
Ինձ համար չէ՛ բարեկամաց
Մէկտեղ սիրով տօն կատարելը,
Զատիկ օրուայ ուրախ ասելը
«Քրիստոս յարեաւ» չէ՛ ինձ համար։
Ինձ համար չէ՛ ծնողաց լացը,
Ինձ համար չէ՛ աղջկայ տխրիլը,
Գերեզմանիս վրայ արտասուելը
Բարեկամաց՝ չէ՛ ինձ համար։
Բայց ինձ համար կուգայ ժամը,
Կ՚երթամ թշնամեաց պատերազմը,
Եւ մահառիթ սպաննիչ գնդակը,
Անդ պատրաստած է ինձ համար։

Թրգ. Ք. Տ. Գ. Պատկանեան

Generated on 2016-06-14 06:18 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԻՆՁ ՀԱՄԱՐ ՉԷ

Ինձ համար չէ՛ գարնան գալը,
Ինձ համար չէ՛ ծառի ծաղկիլը,
Ուրախութեան սրտի գրգիռը,
Ո՛չ մի բերկրանք չեն ինձ համար։
Ինձ համար չէ՛ կենաց բաղդը,
Ինձ համար չէ՛ երջանկութիւնը,
Եւ մրայօն կուսի աչքերը,
Նոցա արցունք չեն ինձ համար։
Ինձ համար չէ՛ փայլուն լուսնի
Անտառ ու սար լուսաւորելը,
Գարնան վարդի, երգչի տաղերը,
Սոխակ ու վարդ չեն ինձ համար։
Ինձ համար չէ՛ բարեկամաց
Մէկտեղ սիրով տօն կատարելը,
Զատիկ օրուայ ուրախ ասելը
«Քրիստոս յարեաւ» չէ՛ ինձ համար։
Ինձ համար չէ՛ ծնողաց լացը,
Ինձ համար չէ՛ աղջկայ տխրիլը,
Գերեզմանիս վրայ արտասուելը
Բարեկամաց՝ չէ՛ ինձ համար։
Բայց ինձ համար կուգայ ժամը,
Կ՚երթամ թշնամեաց պատերազմը,
Եւ մահառիթ սպաննիչ գնդակը,
Անդ պատրաստած է ինձ համար։

Թրգ. Ք. Տ. Գ. Պատկանեան

Generated on 2016-06-14 06:26 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ԵՐԵՒԱՆԻՑ ԴՈՒՐՍ ԵԼԱՑ

Երեւանից դուրս ելայ
Թիֆլիզ քաղքին մօտեցայ,
Փողոց, փողոց ման եկայ.
Սիրականս չ'տեսայ։
Ախ սիրուն սիրական
Ինձ մի թողուր անպաշտպան։
Սիրականըս տուն չեկաւ,
Դրուքիւնս գէշացաւ,
Ելայ ճամբան նայելու,
Ամբողջ կեանքս մաշեցաւ։
Ախ սիրուն սիրական,
Ինձ մի թողուր անպաշտպան։

---

## ՎԵՐ ԿԱՑ

Վեր կա'ց, թշուառ վշտի զաւակ,
Վանէ' թախիծ անյուսութեան,
Շուտ կը հասնի քեզ երկնարար
Զեռքն հայկական, սուրբ միութեան։
Սովն էր տիրած խեղճ հայորդւոյն տընակը,
Հէքն էր թաղուած սեւ մըտածմանց յատակը.
Հացի վերջին պատառն հատած էր արդէն,
Եւ յուսահատ՝ դիմումներէն դէս ու դէն
Հէքն էր թաղուած սեւ մըտածմանց յատակը։
Վեր կա'ց, թշուառ եւ այլն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:18 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ԵՐԵՒԱՆԻՑ ԴՈՒՐՍ ԵԼԱՑ

Երեւանից դուրս ելայ
Թիֆլիզ քաղքին մօտեցայ,
Փողոց, փողոց ման եկայ.
Սիրականս չ'տեսայ։
Ախ սիրուն սիրական
Ինձ մի թողուր անպաշտպան։
Սիրականըս տուն չեկաւ,
Դրուքիւնս գէշացաւ,
Ելայ ճամբան նայելու,
Ամբողջ կեանքս մաշեցաւ։
Ախ սիրուն սիրական,
Ինձ մի թողուր անպաշտպան։

---

## ՎԵՐ ԿԱՑ

Վեր կա'ց, թշուառ վշտի զաւակ,
Վանէ' թախիծ անյուսութեան,
Շուտ կը հասնի քեզ երկնարար
Զեռքն հայկական, սուրբ միութեան։
Սովն էր տիրած խեղճ հայորդւոյն տընակը,
Հէքն էր թաղուած սեւ մըտածմանց յատակը.
Հացի վերջին պատառն հատած էր արդէն,
Եւ յուսահատ՝ դիմումներէն դէս ու դէն
Հէքն էր թաղուած սեւ մըտածմանց յատակը։
Վեր կա'ց, թշուառ եւ այլն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:26 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ցարդ Մայր–Հայրենիք անապատ անշէն՝
Զուրկ իրեններէն կուրացաւ լալէն.
Հազարաւորներ տեսաւ իր չորս դին
Զարաչար մեռած ծերն ու մանկտին։
Ո՛հ, դարձեալ երգենք աշխոյժ խնդագին,
Զի անսասան է հայութեան ոգին։

Ամէն տուն, քաղաք երբ կը բարձրանայ,
Հին սովորոյթ է որ զոհ խնդրէ նա.
Այսպէս մերիններն ինկան նահատակ
Նոր Հայաստանի լայն հիմերուն տակ։
Երգենք ու սարքենք սեղան ցնծութեան,
Քանի՛օն դիւթիչ՝ այս վրսեմ վայրկեան։

Խորի՛ն յարգանք ձեզ, ո՛վ սուրբ նահատակք,
Օրհնուած մընայ ձեր քաղցր յիշատակ.
Աղօթք սրտաբուղխ յաւէտ ձեզ համար
Ուղղենք Աստուծոյ, դէպ երկնից կամար։
Երգենք ու կայտռենք զուարթ խնդագին
Մեր վերածնունդի այս շքեղ տօնին։

Անէ՛ծք բիւ՛ր անէծք այն դահիճներուն
Որ կործանեցին դարաւոր մեր տուն.
Կարծեցին մարել Հայուն արեւիկ,
Բայց ան աւելի շողաց գեղեցիկ։
Երգենք ու կայտռենք խոր յոյզերով լի,
Ծափով ողջունենք այս օր ցանկալի։

Չպիտի մարի ազնիւ կեանքն Հայուն
Ան չի կորսուիր անյուշ անանուն.

Generated on 2016-06-14 06:27 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Մասիսու նման վեհ եւ յաղթապանծ
Հանուր աշխարհի թող շարժէ նախանձ։
Երգենք ու կայտռենք վերապրած չիրմէն՝
Գիտի պսակուին մեր իղձերն ամէն։

Տեսէք՝ կը շողան աստղեր լուսավառ,
Մեր կեանքն է ուրախ, չէն՝ մեր տուն իսպառ։
Թող ցնծան գունդ գունդ Հայեր տառապած,
Զի «Բաւ են չարիք» կը գոչէ Աստուած։
Երգենք ու կայտռենք մինչեւ յաւիտեան,
Վեր բռնած ծալ ծալ մեր դրօշ փրկութեան։

Ս. Գափամանեան

---

## ԱՐՏԱՒԱԶԴ Բ.

Կործանուեցաւ չարը իսպառ
Ազատուեցաւ Հայ աշխարհ.
Ձեզ աւետիք, մեզ աւետիք.
Թէ ձեզ թէ մեզ աւետիք։
Ձեզ աւետիք, մեզ աւետիք.
Թէ ձեզ թէ մեզ աւետիք։
Փառք, օրհնութիւն Արամազդին
Որ տապալեց Արտաւազդին։
Փառք, օրհնութիւն Արամազդին
Որ տապալեց Արտաւազդին։
Ձեզ աւետիք, մեզ աւետիք.
Թէ ձեզ թէ մեզ աւետիք։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:27 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒԳԸ

Իմ սիրելի զաւակունքըս
Կը թափառին օտար աշխարհ.
Ես ո՞ւր դիմեմ ո՞ւր փնտռեմ,
Կը ծառայեն այլոց խոնարհ։

Եկա՛յք, որդեակըք իմ,
Ձեր մօրն այցելութեան։

Դարեր անցան, լուր մը չառի
Իմ քաջերըս մեռան, կորան,
Կուլամ, արիւնըս կը սառի.
Մէկը չունիմ տայ ինձ դարման։
Եկա՛յք, եւ այլն։

Արիւնս ցամքած, սիրտըս մաշած,
Դէմքս է տխուր մինչ յաւիտեան
Եւ կարօտով իմ որդեկաց,
Պիտի իջնեմ սեւ գերեզման։
Եկա՛յք, եւ այլն։

Եւ դու, հովիւ թափառական,
Կ'երգես տրխուր ի մէջ հովտաց,
Ե՛կ, արտասուենք թանկ կորստեան,
Տրխուր մահուան իմ որդեկաց.
Եկա՛յք, եւ այլն։

Generated on 2016-06-14 06:27 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Իսկ դու կըռունկ իմ հայրենեաց,
Գընա՛ հեռու աչքէս ի բաց...
Ցետին ողջոյնս տար զաւակացս,
Զի կեանքիս մէջ յոյսս է մեռած։
Եկա՛յք, եւ այլն։

---

## ԵՐԱԶ

Ես լսեցի մի անուշ ձայն,—
Իմ ծերացած մօր մօտ էր.
Փայլեց նշոյլ ուրախութեան,
Բայց ափսո՛ս որ երազ էր։

Կարկաչահոս աղբիւրն այնտեղ
Թաւալում էր մարգարիտ.
Նա յստակ էր որպէս բիւրեղ,
Այն երազ էր ցնորամիտ։

Եւ մեղեդին տխուր, մայրենի,
Ցիշեց մանկութեան օրեր.—
Մօրս համբոյրն ես զգացի,—
Ա՛խ, ափսո՛ս որ երազ էր։

Կրծքին սեղմեց կարօտագին,
Աչքերս սրբեց— շատ թաց էր
Բայց արտասուք զնում էին
Ա՛խ այդ ինչո՞ւ երազ էր։

Ս. Շահազիզ

Generated on 2016-06-14 06:27 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՀԱՅ ՕՐԻՈՐԴԻ ԵՐԳԸ

Մեր հայրենիք ազատ, անկախ,
Մեր թշնամին ոտնակոխ.
Հայ քաջ բանակ՝ բազկով արի
Լուծեց մեր վրէժ, քէն ու ոխ։

Մեր հայրենիք շղթաներով
Այսքան դարեր կապկապած
Հայ զինուորի սուրբ արիւնով
Ազատ կ'ապրի բարգաւաճ։

Ահա՛, եղբայր, քեզ մի դըրօշ
Որ իմ ձեռքով հիւսեցի,
Ազգիս թափած արիւնի մէջ
Կարմիր, բոսոր օծեցի։

Նայիր անոր, եռագոյն է—
Նուիրական այս նըշան—
Տա՛ր ծածանէ թշնամուն դէմ
Թող սասանի Տաճկաստան։

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի՜ ով իւր ազգի
Ազատութեան կը զոհուի։

Generated on 2016-06-14 06:28 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՎԱՐԴԱՆ

Իմ Հայրենեաց հոգի Վարդան,
Հոգիս հոգւոյդ եղնի ղուրպան,
Որ Տըղմուտի ափերի քով
Վաթսուն հազար կտրիճներով,
Զարկիր, զարկւար, ինկար՝ քաջ՝ քաջ,
Պարսիկ սփռած ի ձախ ու յաջ։
Իմ հայրենեաց արեւ Վարդան,
Արեւս ար՝ւուդ եղնի ղուրպան։
Աւետարան ու խաչ առիր,
Տարիր երկինք բարձրացուցիր,
Եւ դուն ալ խետ Թողիր գացիր,
Անուշ արեւդ հողին տուիր,
Որ հայրենեաց չողայ արեւ
Շաւարշանայ դաշտին վերեւ։
Իմ հայրենեաց արեւ Վարդան
Արեւս ար՝ւուդ եղնի ղուրպան։
Արիւնդ կարմիր կարմիր Թափւաւ,
Դաշտու ծաղիկ ներկուեցաւ.
Լուսնակն ելաւ ամպի տակից,
Պաղ պաղ Թափեց ցողիկն յաչից
Որ հայրենեաց վարդեր բացւին,
Պլպուլն երգէ դրախտի սարին։
Իմ հայրենեաց արեւ Վարդան
Արեւս ար՝ւուդ եղնի ղուրպան։

Ս. Ն. Քէլէկեան

Generated on 2016-06-14 06:28 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԵՂԲԱՑՐ ԵՆՔ ՄԵՆՔ

Ի բիւր ձայնից բնութեան չքեղ
Թէ երգք թըռչին սիրողաբար,
Մատունք կուսին ամենագեղ
Թէ որ զարնեն փափուկ քընար,
Զունին ձայն մը այնքան սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն։

Տո՛ւր ինձ քու ձեռք, եղբայր ենք մենք
Որ մըրըրկաւ էինք զատուած,
Բաղդին ամեն ոխ չարանենք
Ի մի համբոյր ցըրուին ի բաց
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն։

Երբ ալեւոր մայր Հայաստան,
Տեսնէ զորդիս իւր քովէ քով,
Սըրտին խորունկ վէրքըն դաժան՝
Քաղցր արտասուած բուժին ցօղով։
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն։

Մեկտեղ լացինք մենք ի հընում
Եկէ՛ք դարձեալ յար անբաժան
Ծառնենք զարտօսր եւ ըզխնդում,
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան.
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն։

Generated on 2016-06-14 06:28 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Մէկտեղ յոգնինք մէկտեղ ցանենք,
Մէկտեղ թափենք մեր քրտինքներ,
Ըզհունձ բարեաց յերկինս հանենք,
Որ կեանք առնուն հայոց դաշտեր։
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն։

Մ. Պէշիկթաշլեան

---

## ԼՈՒՍԻՆ

Լռեց, ամպերն եկան ծածկեցին
Երկինքն, ու լուսինն աչքէս խլեցին,
Մնացի մինակ, հոգիս վրդոված
Ձեռներս ծոցիս, գլուխս քարշ առած.
Եվ այնուհետեւ ամէն իրիկուն
Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն.
Նորա տխրամած դէմքը նայելիս՝
Ցիշում եմ Թշուառ վիճակը ազգիս։

Ա՛խ ցոլա՛-փայլէ՛, տխրադէմ լուսին,
Գուցէ քո փայլից փայլ տաս եւ Հային.
Պատմէ շատերուն Վարդանի մահը,
Կամ ի՞նչպէս կորաւ Հայ ազգին գահը,
Կամ ի՞նչ վեհ սիրով սիրում էր Վարդան
Մայրենի հողը, — աշխարհ Հայաստան։

Քամառ-Քաթիպա

Generated on 2016-06-14 06:28 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԱՆՄԱՀ ԳԱԼՈՒՍՏԻ ԵՒ ՑԱԲԷԹԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Ժանտ անուրը բռնաւոր,
Ազատութեան խիզախ քայլ
Շղթայած էր օրէ օր
Իր լարին տակ մութ, անփայլ։

Կառաբնատին հատու սուր,
Փորձեց փշրել ամէն յոյս
Իտէալին, բայց ի զո՛ւր,
Որ փայլակէր զերթ վառ լոյս։

Զոյգ հերոսներ անբաժան,
Ցաւի զինուոր, վշտի ծով,
Փշրեցին այդ սեւ շղթան
Իրենց կարմիր արիւնով։

Սուր տապարին տակ ՑԱԲԷԹ
Անվախ, խրոխտ, անընդհատ
Կոչեց, «կեցցէ՛ նա յաւէտ,
Գիտէ մեռնիլ անվհատ»։

Իրենց կեանքէն յիշատակ,
Մնաց անշուք գերեզման,
Լացող ուռուոյն կուրծքին տակ,
Իբրեւ կտակ հայութեան։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:28 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԵՐԳ ՄԵԾՆ ՎԱՐԴԱՆԱՑ

Հուր բարկութեան համայն հայոց,
Բորբոքեալ զերդ բոց բարկաճայթ.
Եւ կայծակացըս բիւր բիւրոց.
Զարթոյց ի մարտ սարս սառնապատ։
Զի՝ վարանիմք ասա արդ եղբարք,
Դատարկ ձեռամբ, դատարկ ձեռամբ։

Զեռամբ յԱրտազ Տղմուտ օն դրոյդ ի դրոյդ,
Ի դրոյդ թռչիմք սրանամք. սրանամք, սրանամք։
Հուր զէն ի ձեռին
Ու վրէժ ահագին
Սպասեն եւ կան
Քաջք Արշակունեան։

Եւ յոր երկինք հանդիսատես՝
Զաչխարհ նախնեաց հեղու ի մեզ։

Հապ օ՛ն քաջք քաջախ
Ընդ սառան կուրծս
Մխեսցուք մկունս
Ուժգին ի հարուած։

---

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:28 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԱՏԱՆԱՑԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Կոտորածն անգութ, հայերը թող լան,
Անապատ դարձաւ չքեղ Ատանան,
Կրակը, սուրը եւ անխիղճ թալան,
Ռուբէնի տունը, ա՜խ ըրին վիրան,

Ալ մի տար լոյսդ պայծառ արեգակ,
Լուսնի շուրջ կապէ դուն սուգի մանեակ,
Անցան մեր երկրէն հարաւի խորշակ,
Զորցուց թոռմեցուց ծառ ծաղիկ համակ։

Ոպէ մը չանցաւ ու հայոց խեղճեր
Ինկան սուրին տակ խուժանին ահեղ,
Ժամեր ու դպրոց բոցի մէջ կորան,
Բիւրաւոր հայեր անխնայ մեռան։

Անզգայ անօրէն խուժանը որբ թողուց
Զաւակը մօրմէն, հարսը իր փեսէն,
Ճէվատն անզգամ, Ատիլը գճուճ
Կերան կշտացան հայու արիւնէն։

Պարապ է աւաղ հարուստ Ատանան
Մոխիր է դարձեր ամբողջ Կիլիկիան,
Միայն ապրեցաւ Հաճընը սիրուն,
Ինչո՞ւ չը շարժիր ապառաժ Զէյթուն։

Երեք օր գիշեր կրակը մէջէն,
Թշնամւոյն սուրը գնդակը դրսէն,
Ջնջեցին հայը երկրի երեսէն,
Արիւն կը վազէ մեր ջինջ գետերէն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:29 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ալ բաւ է որքան վատերուն լուծը
Կրեցինք թողունք մեր լացն ու կոծը,
Օտարին տունը ալ չէ ապահով
Հայ հողերու վրայ մենք մեռնինք փառքով։

---

## ՀԱՅՐԵՆԻՔ

Իմ հայրենիք գիս կը կանչէ,
Հեռու եմ Հայաստանէն.
Հայոց որդւոյն կը վայելէ՞
Հեռանալ Հայաստանէն։

Միթէ արծաթ, ոսկի, գոհար
Կը սփոփէ՞ Հայաստանը,
Այն որ կ'ողբայ որդւոց համար՝
Խըղճալի Հայաստանը։

Որ տըխրութեան մէջ է թաղուեր
Թագուհի Հայաստանը,
Բոպիկ ոտքով արձակ մազով
Կ'արտասուէ Հայաստանը։

Անգութ երկինք ա՛լ չը յիշեր,
Մոռցեր է Հայաստանը,
Անսիրտ Հայերն ալ չեն յիշեր
Անուշիկ Հայաստանը։

Generated on 2016-06-14 06:29 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Ո՛հ թողէք զիս խօսիմ ազատ,
Երգեմ միշտ Հայաստանը,
Անուշ երկիր կոյս անարատ,
Աննման Հայաստանը։

Արեւ ծածկէր է իւր դէմքը,
Խաւար է Հայաստանը,
Հայոց արեւն ալ մարեր է.
Սեւ հագեր է Հայաստանը։

Թշուառ արտիս ձայն ելը կտրի,
Ողբալով Հայաստանը,
Ո՛հ, չի կայ հայ որ ըսփոփէ
Նուաղեալ Հայաստանը։

Մինչեւ կտրի իմ վերջին շունչս,
Գիտի կանչեմ Հայաստանը,
Գլլուխիս մէջ մ'իմ հայրենեաց
Ապա մոռնամ գերեզմանը։

Անդորրութիւն ես կը խնդրեմ
Սիրելի Հայաստանին,
Կըտրել այս ձայնս չէ՛ չէ՛ կարող
Սոսկումը գերեզմանին։

Հ. Հայկունի

Generated on 2016-06-14 06:34 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ՔԱՑԼԵՐԳ ԽԱՆԱՍՕՐԻ

Կրռուեցէ՛ք, տըղերք, կռուեցէք քաջ քաջ
Անվեհեր կանգնած թշնամոյն առաջ,
Ցանկալի է մեզ միշտ ազնիւ մահը,
Հեռու մեզանից ոսոխին ահը.
Ցառա՛ջ խիզախենք իբրեւ նահատակ
Ի զուր թող չանցնի մեզնից մէկ գնդակ։
Ահա՛ քիւրտերը փախչին սարսափած,
Ահա՛, դիակներ արեամբ շաղախուած.
Կրա՛կ տեղացէք անդադար կրակ,
Փառք Դաշնակցութեան առատ է գնդակ։
Այս անգամին ալ ցոյց տանք թշնամոյն
Թէ՝ ինչ է Հայուն ոյժն ու՝ քաջութիւն։
Մեզ տօնախմբեն մեր նախնի քաջերը,
Մեզի կ՚սպասեն մեր հէք եղբայրները.
Չի ծնանք ազատ գէթ մեռնինք ազատ,
Մեր սիրտն ու հոգին պահենք անարատ.
Դէ՛հ կռուինք տըղերք մինչեւ չունչ վերջին
Արժանի լինինք փառաց պսակին։
Մեռնինք յուսալով մերն է ապագան,
Մեռնինք, բայց կեցցէ՛, կեցցէ՛ Հայաստան,
Այսպէս յորդորեց եւ ինկաւ արին
Թողլով մեզ անուն յիշատակ բարին.
Ահեղ կռուի մէջ մի փոքրիկ հերոս
Անմոռանալի կտրիճ Մարտիրոս։

Մ. Ե.

Generated on 2016-06-14 06:34 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՀՆՉԱԿԵԱՆ ՄԱՌՇ

Հայոց աշխարհում ծագեց նոր հրդեհ,
Օգնութեան հասէք Հայկայ զաւակներ,
Վտանգը մեծ է չըկայ մի օգնող
Այրուող տանջուողին մի ձեռք կարկառող։

Նա դաւաճան է իր հայրենիքին,
Որ օգնել չուզեր ճիշտ ժամանակին,
Պապական տանն էլ հետքը կորուփինք։
Հարաւ եւ հիւսիս շատ թափառեցինք.

Զար թշնամիքը միշտ ահաբեկիչ՝
Թոյն են սերմանել մեր մէջ վարակիչ
Բաւ է բաւ Հայեր օտարք մեզ խաբեն,
Եւ մեր արիւնով իրանք աշխատեն։

Ասպարէզը բաց է մեզի ա՛հա,
Ջարդում փչրում են մեզի անխընայ
Բաւ է մեզ ընկերք լաց ու կոծ անել,
Անարատ Հային երբէք չի վայլեր։

Կորիճ Հնչակեան դուրս եկ համարձակ
Պարզէ քու մաքուր ամբիծ դրօշակ,
Վտահ քայլերով սլացիր առաջ
Եղիր քաջ զինուոր եւ պարտաճանաչ։

Generated on 2016-06-14 06:34 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ՀԱԲԸՐԲԱՆ

Տղայ — Հաբբբբան
Աղջիկ — Ջա՛նէ ջա՛ն։

Տղայ — Սիրել եմ սէրն երեսին,
Անթառամ թերն երեսին,
Ով իմ սիրածն ինձ չիտայ,
Ասարծու կերն երեսին։

Աղջիկ — Հաբբբբան
Տղայ — Ջա՛նէ ջա՛ն

Աղջիկ — Սարի թրթնչուկ թազա,
Մեղր ու շաքար քեզ մազա,
Ինձ նազանի աղջիկ
Քեզ պէս տըղուն ո՞նց սազայ։

Տղայ — Գզտիկ աղջի համ ունիս
Զորեքդիմաց ծամ ունիս,
Ունջիկ-մունջիկ մի՛ անի,
Ինձ առնելու կամ ունի՞ս։

Աղջիկ — Գուրթանդ հոլա՛, հոլա՛,
Գուրթանիդ տակը քոլ ա.
Քանի գըժուրթիւն անես,
Քեզ առնողը տոլ ա։

Տղայ — Ձեր տան տակին վար կանեմ
Զար ագռասին կեր կանեմ.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:34 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թող իմ սիրածն ինձի տան,
Գըժուքիւնս թարկ անեմ։

Աղջիկ — Ջուրը իր ճամբով կերթայ.
Ցողածը վարդի թերթ ա.
Ինձ սիրող կըտրիճ տըղէն
Հազարի մէջ մի բերդ ա։

Տղայ — Բուսել ես բաղի միջին.
Շամամի թաղի միջին.
Գիշեր ցերեկ միլար,
Դու ես իմ խաղի միջին։

Աղջիկ — Աշուղի պէս խաղ ասա,
Բըլբուլի պէս տաղ ասա.
Ինչքան որ գովես՝ արժեմ,
Իմ մօր գովական փեսայ։

---

## ՍԱՐ ՍԱՐ

Սա՛ր, սա՛ր,
Ես սարերի ծաղիկն եմ,
Ջա՛ն, ջա՛ն,
Ես Լեւոնի քուրիկն եմ։
Ժամին դռնէն դուրս ելայ,
Արեւի պէս լուս ելայ։
Էս սարին սա՛ր չեմ ասի,
Փիս դիակին եար չեմ ասի։
Ինձ չէր առնում թող չառնէր.
Խօսք ու զըրեցն էլ ի՞նչ էր։

Generated on 2016-06-14 06:35 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՀԱՅՐԵՆԻՔ ՍՐԲԱԶԱՆ

Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ,
Թռչում եմ դէպի քեզ հոգւովս անդադար.
Բայց, աւա՜ղ, այս բանտում փակուած եմ անտես,
Պատրազմի դաշտում չեմ կռւում եւ ես։

Հանապազ տանջուեցայ քո ճակատագրով,
Սըրտումս չղթաների ձայներ կրելով...
Չեմ կարող մոռանալ իմ ազգ հարազատ,
Ա՜խ, կամ ոչնչանալ, կամ լինիլ ազատ։

Քաջ ընկերներովս հեշտ է ինձ կռուել,
Եւ սուրբ գործի համար քաղցր է մեռանել,
Բայց, աւա՜ղ, այս բանտում փակուած եմ անտես,
Պատրերազմի դաշտում չեմ կռւում եւ ես։

Զգիտեմ, ի՞նչպէս է կռիւն հրդեհւում,
Ես չունիմ ոչինչ լուր, բայց լուրն է թռչում...
Տարւում է միշտ համբաւ սպաննութեան ահեղ,
Թափում է ազգն արիւն, բայց ես չե՛մ այնտեղ։

Ա՜խ, քո ազատութիւն փոթորկի մէջ է,
Եւ վառ արշալոյսով քո օր կարմրում է...
Թո՛ղ այս տեղ չարչարւեմ անծանօթ կապուած,
Միայն քեզ, Հայրենի՜ք, տեսնեմ ազատուած։

Ց. Գուշուբէկեան

Generated on 2016-06-14 06:35 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՀԱՅՐԵՆԻՔ ՍՐԲԱԶԱՆ

Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ,
Թռչում եմ դէպի քեզ հոգւովս անդադար.
Բայց, աւա՜ղ, այս բանտում փակուած եմ անտես,
Պատրազմի դաշտում չեմ կռւում եւ ես։

Հանապազ տանջուեցայ քո ճակատագրով,
Սըրտումս չղթաների ձայներ կրելով...
Չեմ կարող մոռանալ իմ ազգ հարազատ,
Ա՜խ, կամ ոչնչանալ, կամ լինիլ ազատ։

Քաջ ընկերներովս հեշտ է ինձ կռուել,
Եւ սուրբ գործի համար քաղցր է մեռանել,
Բայց, աւա՜ղ, այս բանտում փակուած եմ անտես,
Պատրերազմի դաշտում չեմ կռւում եւ ես։

Զգիտեմ, ի՞նչպէս է կռիւն հրդեհւում,
Ես չունիմ ոչինչ լուր, բայց լուրն է թռչում...
Տարւում է միշտ համբաւ սպաննութեան ահեղ,
Թափում է ազգն արիւն, բայց ես չե՛մ այնտեղ։

Ա՜խ, քո ազատութիւն փոթորկի մէջ է,
Եւ վառ արշալոյսով քո օր կարմրում է...
Թո՛ղ այս տեղ չարչարւեմ անծանօթ կապուած,
Միայն քեզ, Հայրենի՜ք, տեսնեմ ազատուած։

Ց. Գուշուբէկեան

Generated on 2016-06-14 06:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՀԱՅՐԵՆԻՔ ՍՐԲԱԶԱՆ

Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ,
Թռչում եմ դէպի քեզ հոգւովս անդադար.
Բայց, աւա՜ղ, այս բանտում փակուած եմ անտես,
Պատրազմի դաշտում չեմ կռւում եւ ես։

Հանապազ տանջուեցայ քո ճակատագրով,
Սըրտումս չղթաների ձայներ կրելով...
Չեմ կարող մոռանալ իմ ազգ հարազատ,
Ա՜խ, կամ ոչնչանալ, կամ լինիլ ազատ։

Քաջ ընկերներովս հեշտ է ինձ կռուել,
Եւ սուրբ գործի համար քաղցր է մեռանել,
Բայց, աւա՜ղ, այս բանտում փակուած եմ անտես,
Պատրերազմի դաշտում չեմ կռւում եւ ես։

Զգիտեմ, ի՞նչպէս է կռիւն հրդեհւում,
Ես չունիմ ոչինչ լուր, բայց լուրն է թռչում...
Տարւում է միշտ համբաւ սպաննութեան ահեղ,
Թափում է ազգն արիւն, բայց ես չե՛մ այնտեղ։

Ա՜խ, քո ազատութիւն փոթորկի մէջ է,
Եւ վառ արշալոյսով քո օր կարմրում է...
Թո՛ղ այս տեղ չարչարւեմ անծանօթ կապուած,
Միայն քեզ, Հայրենի՜ք, տեսնեմ ազատուած։

Ց. Գուշուբէկեան

Generated on 2016-06-14 06:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Էլ ե՞րբ կը տեսնեմ ես ձեզ մեն գալիս,
Բաղ ու բաղջայում սէյրան անելիս,
Ինչտեղ ամօթից վարդն էլ է դեղնում,
Երբոր ձեր կարմիր թշերը տեսնում։

Բլբուլն էլ վարդից ձեր ձայնը լսելիս՝
Թռչում է, թռչում, ամպերում կորչում
Եւ իր Արարչի տեսածն ասելիս
Փառք քեզ Տէր Աստուած, փառք քեզ է կանչում։

Հայոց աղջիկներ, ի՞նչ անուն տամ ձեզ,
Թէ հրեշտակ ասեմ հրեշտակ չեմ տեսել,
Թէ մարդ անուանեմ՝ բեթամաղ կ՝անեմ
Ուրեմն ի՞նչ անեմ, մոլորուած եմ ես։

Մոլորուած եմ ես օտար աշխարհում,
Հաւատն էլ օտար, օտար եւ լեզուն,
Աղջիկն էլ օտար ու ձեզ չի նման,
Հայո՛ց աղջիկներ դուք էք աննման։

Ձեր սէրն է միայն սրտումս պահած,
Ձեր սիրով միայն եմ էս կենդանի,
Ձեր սէրը միայն ես կեանքս մաշուած
Օտարութեան մէջ դեռ կը պահպանի։

---

Generated on 2016-06-14 06:42 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԲԱՆՏ

Հայը բանտէն չի վախնար,
Հայը մահէն չի վախնար,
Միշտ կուզէ պատերազմիլ,
Հայկական հողին համար։

Գացէ՛ք ըսէք, վատ թուրքին
Թող հեռանայ մեր հողէն.
Հայը վարժութիւն ունի,
Պատերազմը մօտեցաւ։

Հինգ հարիւր տարուան մեռեալն
Այսօր ոտքի կանգնեցաւ.
Գացէ՛ք ըսէք, վատ թուրքին
Դատաստանը վերջացաւ։

Հերիք այսչափ տառապանք,
Հերիք այսչափ գերութիւն.
Փչրենք մեր շղթաները,
Շուտով երթանք Հայաստան։

Արարատ դաշտին վրայ
Հայու քաջ խումբ պատրաստենք.
Զէնք, սուր ձեռքերնիս առած,
Կռուինք վասն հայրենեաց։

Արի՛ք Հայկազեան քաջեր,
Առէ՛ք ձեր հետ ձեր սուրեր.
Շուտով վազեցէ՛ք Կարին,
Որ յաղթենք վատ թիւրք ցեղին։

Generated on 2016-06-14 06:42 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Արիւնածարաւ Հայեր,
Ջնջեցէք կարնոյ ոսոխներ,
Հայուն վերջին ժամն է.
Պէտք չէ թիւրքին խնայել։

Ո՛հ, Հայն ա՛լ ազատուած է,
Քանզի առիւծ կտրած է.
Պէտք է որ ջնջենք թիւրքեր,
Վերականգնենք մեր Հայեր։

---

## ԻՄ ՁԻՆԱՐԻ ԵԱՐԸ

Արեւ թռվռելով ելաւ, իմ ձինարի եարը
Մեր բանն կռուով ելաւ դարտիման եարը։
Թշնամու որդին մեռնի, իմ ձինարի եարը
Իրա չար սրտով ելաւ, դարտիման եարը։
Իմ ձինարի եարը, իմ ձինարի եարը,
Իմ ձինարի եարը , գովական եարը։
Ճրագը վառայ, վառայ իմ ձինարի եարը
Հօր հետ վատ մարդ դառնայ դարդիման եարը։
Մեր ու աղբեր թող տուի իմ ձինարի եարը
Ես իմ սիրածին առայ դարդիման եարը։
Քարափի ծերն կանանչի, իմ ձինարի եարը
Թող թշնամին ամաչի, դարդիման եարը։
Արեւիդ մեռնիմ եար ճան, իմ ձինարի եարը
Ձինարի պէս կանանչի դարդիման եարը։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:42 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՀԱՅԻ ԳԱՆԳԱՏԸ

Մեզի մոռցաւ Հայոց ազգը,
Չի լսեր մեր պաղատանքը,
Տեսնել չուզեր մեր տանջանքը,
Ապա որի՞ն մենք գանգըտինք։

Աստուա՛ծ, սըրտով որ բարի ես,
Մենք վար, Դուն վեր շատ հեռի ես,
Այժմ ալ խոչոր գործերի ես.
Ապա որի՞ն մենք գանգըտինք։

Ցոյնը մեզի ասլը կ՝ատէ,
Նէմցէն՝ մեզնէ կրօնքով զատ է,
Ֆրանկի բանը, կ՝ասեն, վատ է,
Ապա որի՞ն մենք գանգըտինք։

Թուրքին միտքը դէպի Պալքան
Իսպառ մոռցաւ նա Հայաստան,
Նըրան պէտք է լոկ մեր փարան.
Ապա որի՞ն մենք գանգըտինք։

Մեր տեղը քաջ կըտրիճներ կան,
Պէտք որ եղաւ ստակ ալ կուդայ
Մինակ՝ ճամբայ ցուցնող չկայ,
Ապա որի՞ն մենք գանգըտինք։

Generated on 2016-06-14 06:42 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Հայի դաշտե՛ր, արեա՛ն դաշտեր,
Շատ կուլ տուիք Հայի քաջեր,
Թէ որ ձեզնէ մէկը ելլէր,
Մեր գանգատին վերջ կը դնէր։

Գամառ–Քաթիպա

---

## ՀԱԲԸՐԲԱՆ

Հաբրբան ջան է ջան
Հաց եմ թըխել գարի ա,
Իմ եարը սագարի ա,
Սագագ գընալուն մեռնիմ,
Ջան է ջան, խօսքերը չաքարի ա։

Արեւը բոլորել ա,
Լուսնակը նորել ա,
Սիրունի խաթեր համար՝
Գունը աչքիցս կորել ա։

Հէնքերն հենած հասայ,
Իմ եարը քնած տեսայ,
Ձեռի սպիտա քուլիքը,
Բոլորը մանած տեսայ։

Ղարիբ ղուշը բուն ունի,
Եթում դղեն տուն ունի,
Ինձ նման սեւաբաղդը,
Աշխարհքումը ի՞նչ ունի։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:42 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՍՈՆԱ ԵԱՐ

Սոնա՛ եա՛ր, Սոնա՛ եա՛ր.
Սոնա՛ սիրուն, Սոնա՛ եա՛ր։

Տղայ Վարդավառը գալիս ա,

Սոնա՛ եա՛ր, Սոնա՛ եա՛ր.
Ծաղիկը ցնծալիս ա.
Սոնա՛ սիրուն, Սոնա՛ եա՛ր։

Ա՛յ դիվլում կանչող աղջիկ,
Սոնա՛ եա՛ր, Սոնա՛ եա՛ր.
Ձէնըդ ծըլվըլալիս ա։
Սոնա՛ սիրուն, Սոնա՛ եա՛ր։

Աղջիկ Կանաչ տեղը՝ բաղում եմ,
Պարի մէջին խաղում եմ.
Կաքաւի պէս սորալով,
Տըղաներին դայլում եմ։

Տղայ Կարմիր գինին թասումը,
Ես եմ քո հաւասումը,
Ե՞րբ կը տաքնան աղջըկերք,—
Վարդավառի պասումը։

Աղջիկ Հայ, ասի՛ նա, ասի՛ նա,
Կարմիր գինին թասին ա,
Տըղէք երբ կը կոտորուին,—
Հորթաթողին պասին ա։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:42 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Տղայ Սիրու՛ն աղջիկ, նազ ունիս,
Շահ զաղայի սազ ունիս.
Հողեմ շահ զաղի գըլուխ,
Դու իմ հոգում հազ ունիս։

---

## ԱՐՁԱԳԱՆԳ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ի զէն Հայեր, ի սո՛ւր, եւ հրացան,
Տաճկա–Հայաստանից կոչում է մի ձայն,
Լեռնից լեռ թնդում է ահեղ հրաման,
Թռէք Հայեր, թռէք դէպի Հայաստան։

Արեւելք եւ արեւմուտք, հարաւ եւ հիւսիս
Դղրդաց ու թնդաց քաղցր աւետիս
Հայկայ քաջ զաւակաց առողջ կուրծքերից
Ազատութիւն հնչեց ամեն կողմերից։

Տաճկա–Հայաստանը ոտքի է կանգնում,
Առիւծաբոց վրէժ, վրէժ է գոռում.
Արիւնով ներկուած են բոլոր դաշտերը։
Արիւնով ներկուած եւ բոլոր գետերը։

Թշնամին զարհուրած փախուստ է դիմած,
Անթիւ աւար ու գանձ Հայերին թողած,
Ցաղթութիւն, յաղթութիւն գոչեց միաձայն
Թշնամին յաղթուած է. կեցցէ՛ Հայաստան։

Generated on 2016-06-14 06:43 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՍԱՍՈՒՆ

Սասուն գաւառ, հին Հայաստան,
Համբաւդ լսեց աշխարհ համայն,
Երիտասարդք են քաջազուն,
Հայոց պարծանք միայն Սասուն։

Սասուն պարարտ հովիտներով,
Պարծի ընդ միշտ իւր քաջերով,
Որք թ'եւ ոտեն կըլկըլ, կորեկ,
Խաղան ընդ սուր դիշեր, ցորեկ։

Սասուն գաւառ, անտառներով,
Պարսպապատ բարձր լեռներով,
Դիմադրեց միշտ քուրդ զօրքերուն,
Հայոց մատաղ եղաւ Սասուն։

Սասուն երկիր լեռներու մէջ,
Ա'լ սրբացաւ իւր եւ էջ;
Քարոտ, լեռնոտ ու խորտ ու բորտ,
Սասուն բուրէ այժմ սարեան հոտ։

Սասուն երկիր յոյժ բարեալի,
Լեռներ, դաշտեր ծաղկօք են լի,
Թէեւ թահսին քանդեց Սասուն,
Բիւր Հայք բաղձան սեւ հողերուն։

Սասուն կոտրել ետ հրաման,
Խալիֆատիպ Համիտ Սուլթան

Generated on 2016-06-14 06:43 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Կանայք, մանկունք եւ արք ինկան,
Իբր քաւչարար զոհ հայկական։

Ցուրտ դիակաց բարդեալ դէպ դէզ,
Եւրոպացիք եկան ի տես,
Մարտիրոսաց կարդն է Սասուն,
Արժանացաւ սրբոց դասուն։

Արի Գրգօն՝ սուրբ մարտիրոս,
Ի ձոռն քրդաց ինկաւ իբր որս,
Գերի եղաւ անգութ քուրդին,
Քաջ նահատակ Հայոց ազգին։

Քաջ Գրգօի հարսն էր ՇԱՔԷՆ,
Որ ձեռք քաշած իւրեան կեանքէն,
Կամաւ ձգեց զինք լեռնէն վար՝
Նահատակուիլ Ազգին համար։

Սասնոյ բնիկք բոլոր Հայ են։
Ֆէրիզն եղաւ նոցա Կայէն.
Սասնոյ մէկ մաս կ՝ըսուի Կէլի,
Արիւն թափեց զերդ Արէլի։

Սասնոյ հարսեր գերի կացին,
Մանկունք զօրաց ձեռք մնացին.
Սրոյ ճարակ եղաւ Սասուն,
Գիւղեր, արտեր, այգիք հասուն։

Թէեւ ինկաւ անզէն, անոք,
Առ Սուլթան չեմ բնաւ բողոք.
Գետի նման հոսող արիւն,
Գեռէն բողոք ետ Աստուծոյն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:43 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թէեւ ինկար, ո՛վ վեհ ՍԱՍՈՒՆ,
Բայց դաս տուիր գերեալ Հայուն,
Թէ սուր ընդ սուր, բուռն ընդ բռան՝
Բախմամբ արեւ ծագի մեր տան։

---

## ԵՐԳ ՍԻՐՈՑ

Ես սիրեր եմ մի զոյգ աչեր
Նման փայլուն աստղերի
Երանք խորն են որպէս եթեր
Նման յուզուող ջրերի։

Ես գերուեցայ նոցա փայլից,
Արար աշխարհ մոռացայ,
Զքնաղ կոյսին ջերմ կարօտից,
Աշուղ դարձայ երգ հիւսեցի։

Կանանչ կարմիր փունջ կապեցի
Որ իմ սիրած եարին տամ
Նա անգութ էր ձեռքէս չառաւ.
Թողուց որ սեւ բախտս լամ։

Բայց այն կոյսը անտարբեր էր
Սէրըս նշան չէր գրաւում,
Իմ վառ սէրը լոկ ցընորք էր,
Նա տեղ չունէր աշխարհում։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:43 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՄՕՐ ՍՈՒԳԸ

Սիրտըս կրակ ունի, արցունք՝ իմ հոգիս,
Որ կը մխայ սեւ սուգի պէս մայրիկիս.
Ո՛հ Մայրիկիս։

Հառաչանքի շանթն ակօսէ խոկն հիգիս,
Տարտամ ստուերն իմ սգակիր մայրիկիս.
Ո՛հ Մայրիկիս։

Բոյլ մը խորհուրդ միշտ կը զարթնուն մէջ գանկիս
Ցուրտ ու սարսռուն օրերուն պէս մայրիկիս.
Ո՛հ Մայրիկիս։

Ապրիլ կ՝ուզեմ գունեղ զուարթ զերթ նարկիս
Գիրգ ու փափուկ թեւերուն մէջ մայրիկիս.
Ո՛հ Մայրիկիս։

Սէր ու ժպիտ ծծեն թելերն իմ կեանքիս,
Թունդ պաշտումէն, գուրգուրանքէն մայրիկիս.
Ո՛հ Մայրիկիս։

Երգէ՛ հոգիս. կենսահիւթ ջիղ տուր վանկիս,
Քանի քու մէջդ է կեանքն ու յոյս մայրիկիս,
Ո՛հ Մայրիկիս։

Մ. Ե. Սերոբեան

Generated on 2016-06-14 06:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՎԱՆԵՑԻ ՄՕՐ ԵՐԳԸ

Ցըզոի տղայ, չեմ օրօրիր օրօրանըդ, որ դուն լաս,
Հայ աղբարքդ ոտքի ելան, մինակ դո՞ւ ետ պիտ՝ մնաս.
Զարթէ՛ հոգիս, անուշ քունէդ, թող աչերըդ լուս տեսնեն,
Արեւմուտքէն արեւ ծագեց, բաղդը բանեց Հայ ազգին։

Զար բռնութեան ոսկի թախտը ջարդուեցաւ, վար ինկաւ,
Թախտի տակէն հազար ազգաց ազատութիւն ծագեցաւ,
Ով որ չուտով ոտքի ելէ, ազատութիւն կը գտնէ,
Սիրուն որդի՞ս մի թէ մինակ չար լուծի տակ պիտ՝ մտնէ։

Մենք Սուլթանին շատ խնդրեցինք կողկողագին, ու լացինք,
Աղի աղի արտասուքով ձեռքն ու ոտքը լուացինք,
Բայց նա չանսաց պաղատանքին ողորմելի հայերուն
Այժմ, նայինք, նա կը լսէ՞ չառաջինը սուրերուն։

Տուր, սիրական. քակեմ ձեռքիդ պալուլները. արձակեմ,
Ու այդ թուլիկ աչքիդ մէջը մի պողպատէ սուր դնեմ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ստրուկ գնա արեան դաշտը, վերադարձիր ազատուած,
Արդեօք մի օր պիտի լսե՞ս մեր խնդիրքը ով Աստուած։

Գամառ-Գաթիպա

---

## ՎՐԷԺ

Թո՛ղ կորնչին բռնապետներ
Հայաստանի սուրբ հողէն
Բռնակալի անարդ լուծը
Ջնջուի Հայաստանէն։

Բաւ է որքան նոքա
Հայու արիւն ծծեցին,
Հայու ջանքով աշխատանքով
Պետութիւն պաշտպանեցին։

Հայու հացը, հայու փողը
Մինչեւ ե՞րբ վատերը ուտեն,
Իւր գարշելի պիղծ բերանով
Հայութիւնը աւարդեն։

Վրիժուց կայծակ թող բորբոքի
Հայ առիւծների սրտում,
Թաղել թշնամոյն գլուխը
Դիւցազունների երկրում։

Մ. Մարտիրոսեան

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ԵՐԳ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Բաժակներ առնունք, եղբա՛րք,
Լիք-լիք բաժակներ գինով,
Կարմիր ու ճերմակ գինին
Մեզ լինի անուշ համով։

Բերնիս տանենք անվախ,
Չէ՛ դա խառնած կամ խարդախ,
Նեկտար է՝ եւ ո՛չ գինի,
Խըմենք մեզ անուշ լինի։

Արաքսայ ջրով ցողուած,
Հայոց արեւով հասած,
Հայոց աղջիկ է քաղել,
Քնքոյշ ձեռներով քամել։

Այս Բերքն է Հայոց երկրին,
Հայաստան տնկած Նոյէն,
Անմահ երկնային գինին
Նա խմեց երբ իջաւ սարէն։

Այս անուշ գինին խմողը,
Սրտէն թող հանէ ոխը,
Ամենք սալ ասենք ամէն,
Որ մեզի շատ տայ ամ էն։

---

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՍԱՐԷՆ ԿՈՒԳԱՑ ՁԻԱՒՈՐ

Սարէն կուգայ ձիաւոր,
Վայ լէ, լէ, լէ, լէ,
Մեր տունը չարտախաւոր,

Ինճիլիկ փընճըլիկ կարճըլիկ եար եար.
Ինճիլիկ փընճըլիկ կարճըլիկ եար եար.

Հրէս եկաւ իմ աղբէր,
Երեք օրուան թագաւոր։

Ծառերի հովին ղուրպան,
Իմ եարի պօյին ղուրպան,
Երկու օր ա չեմ տեսել,
Տեսնողի աչքին ղուրպան։

Անձրեւ եկաւ չաղալէն,
Ուռի տերեւ դողալէն՝
Հրէս եկաւ իմ աղբէր,
Ալ ձին տակը խաղալէն։

Ճամբա՛յ տուէ՛ք առաջ գամ,
Սիրած եարիս բարեւ տամ.
Ուխտ եմ արել որ առնեմ,
Թող տեսնի աչխարհ ալամ։

Generated on 2016-06-14 06:50 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԵՐԳ ԱՒԱԶԱԿԱՑ

Վառեց երկինք իւր մոմերն.
(Թրալալա, թրալալա, թրալալա,)
Վառեց երկինք իւր մոմերն.
Աւազակաց համար, աւազակաց համար:

Սահի զուարթ թող գիշերն,
(Թրալալա, թրալալա, թրալալա,)
Սահի զուարթ թող գիշերն,
Մեր պալատն է անտառ, մեր պալատն է անտառ

Երգեն հողմունք փոթորիկ՝
(Թրալալա, թրալալա, թրալալա,)
Երգեն հողմունք փոթորիկ՝
Աւազակաց համար, աւազակաց համար:

Գինւով լցուի մեր փորիկ.
(Թրալալա, թրալալա, թրալալա,)
Գինւով լցուի մեր փորիկ.
Եկէ՛ք օ՛ն, դուք ի պար, եկէ՛ք օ՛ն դուք ի պար

Երբ որ մեռնիմ ես, ո՛վ ընկերք
Հարիւր գինով խօսք տուին որ
Մեր բաժակներ ամենուն ձեռք
Գան ու պարեն չիրմիս բոլոր, (կրկնէ)

Եւ առ ի զոհ մեծ քաւութեան՝
Հոգւոյս հանգիստ պաղատելով՝
Գիտի ցողեն իմ գերեզման
Հարիւր պուդալ գինիներով: (կրկնէ)

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:50 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ո՞ւր կը դիմէ զուարթադէմ աւազակ.
Մինչ լուսին չողայ յերթեր կապուտակ
Մեծ իշխան քարանձաւաց լեռներուն
Դիմէ զհետ նազուհեաց եւ գանձերու։
Ժայռից հատորք են նեցուկ իւր կողին,
Խոտ փափուկ դալարագեղ անկողին,
Երգ ի բերան փակին աչք մթապատ,
Աւազակին կեանքն ու մահնէ ազատ
(կրկնէ)։

---

## ՊԱՐԶԻՐ ԱՂԲԻՒՐ

Պարզի՛ր աղբիւր, քրդի տղին ջուր տանիմ,
Պարզի՛ր, պարզի՛ր, պէյի տղին ջուր տանիմ։
Աղբիւր գիտե՞ս քիւրդը մեզի ի՞նչ կ՚անէ,
Կը կոտորէ, կը հալածէ, կը ոչնչանէ։
Աչքըս բացի սուգ ու չիվան եւ տեսայ,
Նամէրտ քիւրդին ո՛հ, զոհ գնաց իմ փեսայ։
Կար ժամանակ որ մենք ազատ կ՚ապրէինք,
Լեռներ, դաշտեր, ազատ անվախ կ՚ելլէնք։
Աղբիւ՛ր, հիմա սեւն էպատեր մեր աշխարհ,
Զուլում, զուլում, ջարդ ու սարսափ ու խաւար։

* * *

Պարզի՛ր աղբիւր, պարզի՛ր արագ ջուր տանիմ,
Պարզի՛ր, պարզի՛ր, քաջ Մուրատին ջուր տանիմ
Պարզի՛ր, պարզի՛ր, հայ Ֆէտային ջուր տանիմ։

Generated on 2016-06-14 06:50 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԽՐԱԽՈՑՍ

Հերի՛ք որդեակք, այդքան տարուան տառապանք.
Հերի՛ք դաժան անգութ քիւրտի ոտքն ինկանք.
Քանի խոնարհ գլուխ տուինք գայլերին,
Այնքան ծանր բեռներ դրին մեր վզին։

Հերի՛ք, ելլենք ցոյց տանք թէ մենք հարազատ
Հայ քաջերի արիւնից ենք եւ ազատ.
Թէեւ չունինք ոչ սուր, ո՛չ թուր, ո՛չ նիզակ,
Մեր բահերն ալ կանեն նրանց չանսատակ։

Ինչով են նրանք մեզ տիրելու արժանի.
Նրանք մարդ չեն այլ գազաններ վայրենի.
Մերն է ձիրքը, մերն է ուսումն ու հանճար,
Մերն է հողը, մենք ենք նրա տէրն արդար։

Հերի՛ք, ելլենք ցոյց տանք եւ այլն։
Նրանց են մեր կոյս աղջկունքը, հարսունքը
Նրանց են մեր ճակտի քրտանց արդիւնքը,
Նրանց սուրի ծայրն է կարծես մեր հոգին.
Նրանց գամբռը մեզնից չատ է թանկագին։
Հերի՛ք, ելլենք ցոյց տանք եւ այլն։

Մենք եղբայրներ ունինք հեռու տեղերում,
Նրանք մեր վրայ լռիկ արցունք են թափում.
Չեն խնայել թեւ ու թիկունք, կը հասնին

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:50 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Շուտով կուգան կը միանան սուրբ գործին։
Հերի՛ք, ելլենք ցոյց տանք եւ այլն։

Մնակեան

---

## ԴԱՐԴՍ ԼԱՑԷՔ

Դարդըս լացէք սարի սըմբուլ,
Ալա՛ն ալա՛ն ծաղիկներ
Դարդըս լացէք, բաղի բըլբուլ
Ամպ չող երկնուց զով հովեր։

Երկինք—գետին գըլխուս մըթնան,
Անտուն, անտէր կուլամ ես...
Եարիս տարա՛ն, ջանիս տարա՛ն—
Հոնգո՛ւր հոնգուր կուլամ ես...

Ա՛խ, եարըս ինձ հանեց սրտէն,
Անճար թողեց ու գընա՛ց,
Սըրտիս սաւդէն, խորունկ եարէն
Անդեղ թողեց ու գնաց։

Դարդըս լացէ՛ք, սարի սըմբուլ,
Ալա՛ն ալա՛ն ծաղիկներ,
Դարդըս լացէ՛ք, բաղի բըլբուլ,
Ամպ չող երկնուց զով հովեր,...։

Ա. Իսահակեան

Generated on 2016-06-14 06:50 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ՀՈՎ ԼԻՆԻ

Հո՛վ, հո՛վ, հո՛վ լինի,
Եարիս տունը ծո՛վ լինի.
Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ լինի,
Եարըս քամարո՛վ լինի։

Դէ՛, զանէ՛ք, զանէ՛ք, հո՛ղը հանէք,
Մեր թշնամու դո՛ղը հանէք։
Ծաղիկ ես ծաղկանց միջին,
Հո՛վ, հո՛վ, հո՛վ լինի,
Մի հատ ես աղջկանց միջին.
Եարիս տունը ծո՛վ լինի.
Եա՛ր, ինձ պարզերես արար,
Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ լինի,
Իմ ընկեր մարդկանց միջին.
Եարըս քամարո՛վ լինի։
Դէ՛, զանէք, զանէք, հո՛ղը հանէք,
Մեր թշնամու դո՛ղը հանէք։
Արի մի փաթպար խաղանք,
Տընկող մնանք չը կաղանք.
Հարսանիքիդ ալիւրը
Մուղնու ուխտից վաղ աղանք։

Իրար հետ բաղը գընանք,
Ուտենք, խըմենք, լիանանք,
Թշնամու աչքը հանենք,
Մեր Աստըծուց գոհանանք։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:50 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԱՌ ՀՆՉԱԿ

Հեռաւոր երկիր նստած դու նժդեհ
Հայրենեաց բաղդին մօտուստ ես տեղեակ,
Քարոզ քաջարի նոր սկզբանց վեհ,
Յեղափոխութեան ձայնատու Հնչակ:

Նոր դաղափարի քու ցանած սերման
Ազնիւ պտուղներ, հասունցան արագ,
Կարին եւ Պոլիս որոտման նման
Անդրանիկ շարժումնք ծնան քեւ, Հնչա՛կ:

Զար բռնակալը, Հայոց՝ կեղեքիչ
Վախէն պահուեցաւ ոսկի դահին տակ.
Խուլ Եւրոպայի թնդաց մէն դահլիճ,
Հայը ցնցուեցաւ, կարմրեցաւ Հնչակ:

Այսօր քո սերմանց նոր պտուղք ահա,
Հասած կարմրին արեան նմանակ,
Կենաց եւ մահու սուրբ ժամ մերձենայ,
Կարմիր հրաւէրիդ ակն ունինք, Հնչա՛կ:

Կոչնակդ հնչեցո՛ւր, հնչեցուր արագ,
Թող Հայք ոտք ելնեն ծագէ մինչեւ ծագ,
Փըշրի ժանտ չղթան ծագէ նոր արեգ,
«Ազա՛տ ենք» հնչէ ոսկեզո՛ծ Հնչակ:

Մ. Տամատեան

Generated on 2016-06-14 06:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ԿԱԼԵՐԳ

Հո՛, ռո՛լ, օ՛, լո՛, լո՛, լո՛, լո՛,
Արի՛, արի՛, իմ մատաղ,
Հո՛, ե՛զը ջա՛ն,
Հո՛, ռո՛ւեալ, հո՛,
Հո՛, ռո՛ւեալ, հո՛,

Հա՛, կա՛լ արա՛, մանն արար
Հո՛, ե՛զը ջա՛ն,
Հո՛, ռո՛ւեալ, հո՛,
Հո՛, ռո՛ւեալ, հո՛,

Հա՛ կա՛լը դարման արա
Հո՛, ե՛զը ջա՛ն,
Հո՛, ռո՛ւեալ, հո՛,
Հո՛, ռո՛ւեալ, հո՛,

Ցորենն ինձ, դարման քեզ.
Հո՛, ե՛զը ջա՛ն,
Հո՛, ռո՛ւեալ, հո՛,
Հո՛, ռո՛ւեալ, հո՛,

Հշանը դարման արա.
Պոէ՛րէ, հո՛մ, պոէ՛,
Պոէ՛րէ, հո՛մ, պոէ՛,
Պոէ՛րէ, ջա՛ն։

Generated on 2016-06-14 06:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ԵՐԳ ՊԱՆԴԽՏՈՒԹԵԱՆ

Հեռու եմ քենէ օտար, երկրի մէջ
Եղած եմ պանդուխտ, սիրուն Հայրենիք,
Ի լեռ եւ ի ձոր կ'ընեմ ելեւէջ,
Քեզ չեմ տեսներ ես, սիրուն Հայրենիք։

Ճարտարախօս չեմ Միլտոնի նման,
Որ դրախտի մը նմանցնեմ քեզ
Եւ ոչ Եունկի պէս ճարտարամիտ եմ,
Որ գովաբանեմ, սիրուն Հայրենիք։

Տելեմաքի պէս քաշեմ արկածներ,
Կը պատահին ինձ ճախորդ դիպուածներ,
Քեզ մոռնալու եմ, երբեք չեմ կարծեր,
Ծնած եմ քո մէջ սիրուն հայրենիք։

Կ'երեւակայեմ մտքիս մէջ քեզ միշտ,
Զէ թէ ցորեկներ՝ գիշերներն ի բուն,
Երբոր մըրափեմ կամ ըլլամ ի քուն.
Երազներս ես դու սիրուն հայրենիք։

Լեռներդ ծաղիկով դաշտերդ շուշանով,
Լեցուն ես միշտ դու, անուշ հոտերով.
Թէ որ ես քաղեմ խառն խոտերով,
Կը հոտուըտամ քեզ սիրուն հայրենիք։

Երբ կուգայ գարուն, կը բացուին վարդեր,
Խմբակ կը կազմեն երիտասարդներ,
Պար առեալ ցնծան եւ օրիորդներ,
Երգելով բերկրիմ, սիրուն հայրենիք։

Generated on 2016-06-14 06:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Զարդարուած պարտէզդ անուշ միրգերով
Առ ափն Եփրատեայ՝ պատուական դիրքով.
Քեզ դովաբանել կ՝ուզեմ նոր երգով.
Խարբերդ քաղաքն իմ սիրուն հայրենիք։

---

## ԼՈՐԻԿ

Գաղ աղբիւրի մօտ
Կանգնած հայ աղջիկ,
Սափորը ուսին՝
Ինքն էր գեղեցիկ։

Առաւօտուց թոնիր վառ,
Ես մայիլ եմ քեզ համար.
Նման ես կարմիր խնձոր լորի՛կ,
Լորի՛կ, լորի՛կ, ջանըմ լորի՛կ։

Գաղ աղբիւրի մօտ
Կանգնած հայ տղայ,
Հրացանը ուսին՝
Ինք էր քաջ հսկայ։

Առաւօտուց թոնիր վառ,
Ես մայիլ եմ քեզ համար
Նման ես կարմիր խնձոր լորի՛կ,
Լորի՛կ, լորի՛կ, ջանըմ լորի՛կ։

Generated on 2016-06-14 06:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ
Հին հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պըտրում եմ։

Բայց նոքա միշտ յեղեղուկ
Պըղտոր ջրով եզերքին
Դարիւ դարիւ խփելով՝
Փախչում էին լալագին։

—Արա՛քս ինչո՛ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Եւ դեռ ծովը չի հասած
Սըգաւոր ես ինձ նըման։

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սէջ հպարտ աչերից,
Ինչո՞ւ, արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։

Մի՛ պըղտորիր յատակըդ
Հանդարտ հոսէ խայտալով,—
Մանկութիւնը քո կարճ է,
Շուտ կը հասնի դէպի ծով։

Վարդի թըփեր թող բուսնին
Քո հիւրընկալ ափի մօտ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչեւ առաւօտ։

Մշտադալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քո ջրին
Ճրկուն ոստն ու տերեւ
Թող թաց անեն տապ օրին։

Ափերիդ մօտ երգելու
Հովիւք թող դան համարձակ,
Գառն ու ուլը քո վրձիտ
Ջուրը մտնեն միշտ արձակ»։—

Մէջքը ուռցուց Արաքսը.
Փրփուր հանեց իւր տակից,
Ամպի նման գոռալով՝
Այսպէս խօսեց յատակից։

—«Խիզախ անմիտ պատանի,
«Նիրհես ինչո՞ւ դարաւոր
«Վրդովում ես, նորոգում
«Իմ ցաւերը բիւրաւոր։

«Սիրելիի մահից յետ՝
«Երբ ես տեսել, որ այրին
«Ոտքից գլուխ պճնուի
«Իր զարդերով թանկագին։

Generated on 2016-06-14 06:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

«Որի՞ համար զարդարուեմ,
«Որի՞ աչքն հրապուրեմ.
«Շատերն ինձ են ատելի,
«Շատերին ես օտար եմ։

«Իմ ազգակից գէժ գուրը՝
«Թէեւ այրի ինձ մնան,
«Սարկօրէն տանում է
«Գայթակղիչի կուռ չղթան։

«Բայց նա չէ ինձ օրինակ,
«Ես Հայ՝ Հայիս կը ճանչնամ,
«Օտար փեսայ չուզելով
«Ես միշտ այրի կը մնամ։

«Կար ժամանակ, որ ես էլ՝
«Շքեղազարդ հարսի պէս՝
«Հազար ու փիւր պէրանքով,
«Փախչում էի ափերէս։

«Ցատակս պարզ ու վճիտ,
«Կոհակներս որորան,
«Լուսաբերը մինչեւ այգ
«Ջրերիս միջին էր լողում։

«Ի՞նչքս մընաց էն օրից,
«Ո՞ր ջրամօտ գեղերս.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

«Մ՞րբ իմ չէն քաղաքից,
«Մ՞ր բերկրալի տեղերքս։

«Տուրքը չրի ամէն օր
«Իր սուրբ ծոցէն Արարատ
«Մայրախնամ ինձ անուշդ
«Գարգեւում է լիառատ։

«Հայց ես այն սուրբ չրերով
«Սուրբ Ակոբի աղբիւրին
«Գիտի ցողե՞մ արտօրայքն
«Իմ ատելի օտարին։

«Մինչ իմ որդիք, ո՛վ գիտէ
«Ծարաւ, նօթի, անտէրունչ
«Օտար աշխարհ յածում են
«Թոյլ ոտքերով կիսաշունչ...

«Հեռո՛ւ հեռո՛ւ քըշեցին
«Բընիկ ազգն իմ Հայկեան,
«Նորա տեղը ինձ տուին
«Ազգ անկրօն, մոլեկան։

«Ընդա՞ համար զարդարեմ
«Իմ հիւրընկալ ափերը,
«Եւ կամ դոցա՞ հրապուրեմ
«Ճըպռոտ, պըլշած աչքերը։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:57 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

«Քանի որ իմ զաւակունք
«Այսպէս կը մնան պանդուխտ
«Ինձ միշտ սրդուր կը տեսնէք,
«Այդ է անխաբ իմ սուրբ ուխտ»։

Էլ չը խօսեց Արաքսը,
Յորձանք տուեց ահագին,
Օղակ-օղակ օձի պէս՝
Առաջ սողաց մոլեգին։

Գամառ-Քաթ-իպա

---

## ՀԱԲԸՐԲԱՆ

Հաբբրբան ջան է ջան։
Աղջի անունդ է Շուշան,
Արի երթանք սուրբ Նշան,
Ջան է ջան, մատնիք տըւի քեզ Նշան։

Հաբբրբան, ջան է ջան։
Արեւ դիպաւ սարերուն,
Կաքաւ թռաւ քարերուն,
Եղսօն կայնէ վըր դարուն։

Հաբբրբան, ջան է ջան
Զուկն էկաւ, նստաւ կալին,
Թըմահ չունիմ ձըր մալին,
Կարօտ եմ յերսիդ խալին։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:57 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ՀՕՀ ՆԱԶԱՆԸՄ...

Հոյ նազանըմ, նազանըմ
Գիւլ նազանըմ, նազանըմ,
Եար ջան, դուն բարով էկար.
Կանանչ կալերով էկար .
Կարմիր սոլերով էկար:

Եար ջան, դուն բարով էկար.
Կանանչ կալերով էկար .
Կարմիր սոլերով էկար:
Աղջի՛, մազերդ թուխ է,

Էս ի՞նչ բարութի մուխ է.
Մուխ անողը քոռանայ,
Ինծի, քեզի մոռանայ:
Հո՞յ նազանըմ եւ այլն:

Մեխակի ծառ եմ տնկել,
Քեզ համար հիւանդ եմ ընկել,
Օխտը տարի տեղումըս
Ես մի կըշտի եմ պառկել,
Հո՞յ նազանըմ եւ այլն:

Գիւլըս գիւլում ա դառել,
Եարս լէյլում ա դառել,
Ո՞նց ասեմ որ հասկանաք—
Մի հատ զուլում ա դառել:
Հո՞յ նազանըմ եւ այլն:

Generated on 2016-06-14 06:58 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Թեւդ թեւիս մօտեցնեմ,
Ձեռքդ ձեռիս կպցընեմ,
Մի կերպ դուրս արի՛ դուռը,
Բալքամ թաքուն թռցընեմ։
Հօ՞յ նազանքդ եւ այլն։

---

## ԶՈՒԼՈՒՄ ԱՇԽԱՐՀ

Սիրեցի եարըս տարան
Եարս տուին ու տարան
Էս ինչ զուլում աշխարհ է
Սիրտըս բռկեցին ու տարան։

Ցաւըս մեծ է ճար չըկայ
Ճար կայ ճարակ չըկայ
Էս ինչ զուլում աշխարհ է
Սրտակից ընկեր չըկայ։

Սարերի վըրով գնաց
Իմ եարը խռով գնաց
Ոչ լոր էր նա ոչ կաքաւ
Ձեռիցըս թռաւ գնաց։

Լաւ օրերս անցան գացին
Սեւ տարտերըս մնացին
Էս ինչ զուլում աշխարհ է
Նոր ցաւերըս մնացին։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:58 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Մանկութեան օրեր երազի նման,
Անցաք գնացիք, ալ չէք դառնալու,
Ո՛հ դուք երջանիկ, ո՛ անհոգ օրեր,
Ընդունակ միայն ուրախացնելու։

Ձեզնից յետոյ եկաւ դիտութիւն.
Իւր ծանր հայեացքով աշխարհի վերայ.
Ամէն բան ընկաւ մտածութեան տակ,
Որպէս չը մնայ ազատ կամ ունայն։

Դիտակցութիւնը յաջորդեց սորին,
Ազգի վիճակը ծանրացաւ սրտիս...
Ապոլլոն տուեց ինձ իւր քնարը,
Որպէս փարատիչ տրտում ցաւերիս։

Աւա՛ղ, այդ քնարը իմ ձեռքում հնչեց,
Նոյնպէս լալագին, նոյնպէս վշտահար,
Ինչպէս իմ սիրտն էր, իմ զգացմունքը
Ուրախացուցիչ՝ չի գտայ մի լար։

Ես այն ժամանակ միայն զգացի
Որ այդ ցաւերից ազատուելու չեմ,
Որչափ իմ ազգս կը մնայ ստրուկ,
Օտարների ձեռք անխօս տխրագէմ։

Մանկութեան օրերս ինչո՞ւ այդպէս շուտ
Թռուաք գընացիք անդարձ յաւիտեան.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:58 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Եւ այն ժամանակ անհոգ ու ազատ,
Կարծում էի ինձ աշխարհի իշխան։

Տէրութեան շղթան ինձ զգալի չէր,
Եւ ոչ բռնութեան անդութ ճանկերը,
Ձեզանից յետոյ ծանրացան նոքա,
Ոհ անիծում եմ ես այս օրերը։

Լուռ կաց դու քնար, այլ մի հնչեր ինձ,
Ապոլլոն, յետ առ դարձեալ դու նորան.
Տո՛ւր մի այլ մարդու, որ ընդունակ է,
Զոհ բերել կեանքը սիրած աղջկան։

Ես պիտի դուրս գամ դէպի հրապարակ,
Առանց քնարի, անզարդ խօսքերով,
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Խաւարի ընդդէմ պատերազմելով։

Ներկայ օրերում ալ ինչ սեւ քնար,
Սուր է հարկաւոր կտրիճի ձեռքին.
Արիւն ու կրակ թշնամու վերայ,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կեանքին։

Թող պատգամախօսը հնացած Դէլֆի,
Իւր եռոտանու վրայ փրփրի.
Թող միջին դարու գաղափարներով,
Ամբոխը խաբել ճգնի աշխատի։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:58 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թող նա թարգմանէ զրպարտութիւնը,
Թող մխիթարուի ծովի ափերում.
Մենք ազատութեան ենք միայն թարգման
Միայն այս խօսքըս ունիմ բերանում,
Ո՞վ Հայը, ով դու Հայը, որ երկնքում ես,
Աչքնայիր թշուառ մեր անտէր ազգին.
Մի տար զոհ գնալ թշնամիների,
Նա ալ չէ լսում Դէլֆեան հարցուկին։

Մ. Նալպանդեանց

---

## ՍԱՐԵՐԻ ՀՈՎԻՆ ՄԵՌՆԻՄ

Սարերի հովին մեռնիմ,
Իմ եարի բոյին մեռնիմ,
Էս օր օխտնօր չեմ տեսել,
Տեսնողի աչքին մեռնիմ։
Ախ էնիմ արուն կուգայ
Իմ սրտիս գարուն կըգայ
Ինչ էնիմ ես էն եարը
Գըրբտի տարուն կուգայ։
Եար, եար, եար, եար, նա նայ,
Ա՛խ, նանի ջան, նանի, վա՛ նանի, նանի ջան։
Լուսնակը կեռ ու կամար,
Քոյրը մեռնի եղբօր համար,
Օխտն օր պաս եմ պահել,
Իմ եարի ճամբի համար։
Ա՛խ էնիմ արուն կուգայ եւ այլն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:58 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՀՆՉԱԿԵԱՆ ԵՆՔ ՄԵՆՔ

Հնչակեան ենք մենք ուխտեալ զինուորներ
Կեանքի չափ սիրենք մօտին հրացաններ,
Նորից պիտ ելլենք Սասնոյ սարերը,
Զոր ու դաշտ ներկենք կարմիր արիւնով։

Մեզի ասացին հանգիստ նստեցէք,
Սուլթանին հետը գործ մի ունեցէք,
Ձեր ազգին դատը մեզի յանձնեցէք,
Նրա վճիռը մեզնից ուզեցէք։

Ուղիղ եօթ տարի ոչինչ չարեցինք,
Եւրոպի խօսքին ականջ դրեցինք
Ալ բաւական է, ինքզինքնիս գտնենք,
Հնչակեան դրօշը կրկին վեր առնենք։

Մենք պիտ՝ պաշտպանենք մեր արդար դա-
տը,
Սարսափ պիտ՝ ձգենք ամբողջ Եըլտըզը,
Գացէ՛ք ու ըսէք Սուլթան համիտի՛ն
Կեանքը շատ սուղ է Հնչակ-զինուորին։

Քանի որ Սուլթան չունի զթութիւն
Ուժով պիտ՝ առնենք ինքնավարութիւն.
Ողջ մնայ Սասուն, ապրի մեր Զէյթուն
Կարմիր տողերով թողնենք պատմութիւն։

Generated on 2016-06-14 06:58 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՇՈՂԵՐ ՋԱՆ

Ամպել ա, ձուն չի գալի, Շողեր ջան,
Սարից տուն չի գալի, Շողեր ջան,
Դուն օրօրա, դուն չօրօրա, Շողեր ջան,
Ամպի տակին ձուն կ'երեւայ, Շողեր ջան։

Սիրտըս կրակով լըցուած, Շողեր ջան,
Աչքերիս քուն չի գալի, Շողեր ջան,
Դուն օրօրա, դուն զօրօրա, Շողեր ջան
Ամպի տակին ձուն կ'երեւայ, Շողեր ջան։

Հուր է թափում վերիցը,
Ես վառայ քո սէրիցը.
Վարդավառին ինձ համար
Ձուն բեր դու սարերիցը։

Սարի գլխին ձուն եկաւ,
Շէկլիկ եարըս տուն եկաւ.
Դեռ մուրատիս չը հասած,
Վրէս խորունկ քուն եկաւ։

Տերեւ թափեց ծառիցը,
Աչունն եկաւ սարիցը,
Շողոն դարդով լըցւել ա,—
Հեռացել ա եարիցը։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ՀԱՅ ԱՊՐԻՆՔ

Հայ ապրինք, եղբարք, մարդկութեան մէջը,
Հայ կընքեր է մեզ պատմութեան էջը.
Հայ անուամբ ըզմեզ կ՝ողջունեն երկինք
Եղբարք, Հայ ապրինք։

Հայ ապրինք,— մեր հայրն է այն դիւցազուն,
Որ զԱզատութիւն սորվեցուց մարդուն.
Ու մեզ վեհ անուն մը տըւաւ բաժին.—
Եղբարք, Հայ ապրինք։

Մեր աշխարհն է սո՛ւրբ.— Մեր հողուն վրան,
Աստուա՛ծ է քալեր՝ հանելով զԱդամ.
Մեր լեզուն ստեղծեր ու խօսեր նախ ինք.—
Եղբարք, Հայ ապրինք։

Հայն ու մարդկութիւն՝ նոյն ունին որբան,
Երկիր փրկութեան է մերս Հայաստան.
Կըրօնից նախկին սեղան է Մասիսք.
Եղբարք, Հայ ապրինք։

Հայուն պերճ անուն՝ ոչ միայն յերկիր՝
Այլ եւ յերթերց մէջ շողայ լուսալիր.
Քաջ Հայկին աստեղք անմահ են երկինք.—
Եղբարք, Հայ ապրինք։

Հայ ապրինք.— Ո՞ր ազգ կայ հայուն նման,
Որ ունենայ հին պարծանքներ ա՛յսքան,
Ո՞ր ազգ Հայուն պէս չքեղ Հայրենիք.—
Եղբարք, Հայ ապրինք։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ըսէք, ո՞ր ազգին չորս առաքեալներ
Երկնից թագաւորն է դեսպան ղրկեր,
Ո՞ր թագաւորին հետ թղթակցեր ինք.—
Եղբարք, Հայ ապրինք։

Ո՛վ կըրնայ համբել սըրբոց մեր անուանք,
Մեր պատմութիւնն է նահատակաց ցանկ.
Մեր եկեղեցին յերկրի է երկինք.—
Եղբարք, Հայ ապրինք։

Քրիստոս ունինք անդրանիկ օրհնենք,
Հաւատոյ եղանք միշտ ախոյեան մենք.
Հայը զարմացուց զերկիր եւ զերկինք.—
Եղբարք, Հայ ապրինք։

Մեր Ազգ հետեւող է ճիշտ Յիսուսի,
Որ խաչն այսչափ դար առած է յուսի.
Ո՛չ, չը խոնարհիր, չըլլար դասալիք.—
Եղբարք, Հայ ապրինք։

Այո՛, խաչին կեանք. կեանք է վշտալից,
Այո՛, Հայուն կեանք՝ կեանք է ցաւալից,
Բայց խաչն՝ յաղթութի՛ւն ունի վեհ կնիք.—
Եղբարք, Հայ ապրինք։

Ո՛չ ճակատագիր՝ մեր չէ՛ միշտ տխուր՝
Ըզթշուառութեան ուտել հացն ու ջուր.
Նոր երջանկութեան ապագայ մ՝ունինք.—
Եղբարք, Հայ ապրինք։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հայ ապրինք, որ մեր որդիք ալ, եղբարք,
Կարենան պարծիլ որ մեզ ունին հարք.
Զըլլանք Հայ անուան, չըլլանք նախատինք.—
Եղբարք, Հայ ապրինք։

Խ. Եպ. Նար-Պէյ

---

## ՄՈՒՐԱՏԻ ԵՐԳԸ

Հայաստանէն եկած զինուոր.
Գատմէ ինծի հայրենիքէդ
Անդրանիկի զինուորները,
Վրէժ են լուծում քիւրտերէդ։

Ուրախ եղիր դու հայ տղայ,
Ունիս պաշտպան քաջ Անդրանիկ,
Մուրատի պէս հոտոտ ծաղիկ,
Էլ ի՞նչ է ուզում հայրենիք։

Վիթխարի պէս կտրիճ Սեպուհ
Գողպատի պէս բազուկները,
Կայծակի պէս կտրիճները,
Էլ ի՞նչ է ուզում հայերը։

Գէորգ Զավուշ եւ Հրայրը,
Սարսափ ձգեց Քիւրտիստանը
Կոտորեցաւ ողջ բանակը,
Ազատուած չէ Հայաստանը։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ՊԱՆԴԽՏԻ ՈՂՋՈՅՆ

Ողջոյն տուէք իմ հայրենեաց
Կիսակործան տաճարներուն,
Ողջոյն տուէք աւերակաց
Արարատեան գաւառներուն։

Ողջոյն տուէք Աւարայրին
Արիւնաներկ Ս. վայրերուն,
Ողջոյն տուէք տխուր լուանին
Որ լացն է սեւ չիրիմներուն։

Ողջոյն տուէք պանդուխտ Հայուն,
Թշուառ Հայուն, չուառ Հայուն,
Ո՛հ, ձեռք տուէք, ո՛հ սիրտ տուէք,
Հոգի տուէք անկեալ Հայուն։

Ողջոյն տուէք ոլոր մոլոր,
Բոլոր վազող գետակներուն,
Ողջոյն տուէք պղտոր բուլոր
Աղի, լեղի աղբիւրներուն։

Ողջոյն տուէք ի հող եղած
Արքայական պալատներուն
Ողջոյն տուէք գետնատարած
Սրբոց անբիծ մասունքներուն։

Ողջոյն տուէք խումբ ի խումբ
Որ կան թաղած հոգիներուն,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ուր Հայ սոխակ թումբէ ի թումբ
Կեանք կը խնդրէին դեռ չատերուն։

Ողջոյն տուէք հայ մուսային
Որ լայ զփիւռս իւր հաւերուն,
Ողջոյն տուէք իմ քնարին
Որ Հայկայ տանն է ողբերգու։

Գ. Շէրենց

---

## ՀԱԲԸՐԲԱՆ

Հաբրբան, ջան է ջան,
Արագից ջուր ա գալի,
Հարցըրէք ո՞ւր ա գալի
Մի լար սիրուն սիրական,
Բաժանման լուր ա գալի։

Հաբրբան, ջան է ջան,
Ապուր եմ եփել աղի.
Ուտողի սիրտը տաղի,
Ես ու դուն իրար սիրենք,
Թող տուչմանը կատաղի։

Հաբրբան, ջան է ջան,
Ոնց անկի ես բար չունիս,
Ոնց ջահել ես, եար չունիս,
Երկնքի ղուշ ես դառել,
Իջնելու ումուտ չունիս։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 06:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԵՐԳ ՀԱՅ ԱՂՋԿԱՆ

Ո՞վ ես որ գաս առանձին,
Ձեռքդ կուրծքիդ խաչապէս,
Ծունրը դրած ի գետին՝
Լռիկ առ ո՞ բողոքես։

Անբիծ ճակատդ է կնճռոտ,
Ցոնքերդ ի ծուփ ալեկոծ.
Կոյս, սիրտդ ինչի՞ է կարօտ,
Որ հրաչունչ հանէ բոց։

Երթալ կ՝ուզես, կը յուզուիս,
Արդեօք սիրո՞վը մարդու.
Կամ սուրբ սիրովն կրօնի,
Որ Աստուածն է սրբտերու։

Ես հայ աղջիկ եմ զինուոր՝
Տըղմուտի մէջ մըկրտուած.
Պատմուճաններս են բոսոր,
Ձէնքերըս խաչն է յաղթապանծ։

Զինուոր կ՝երթամ Հայաստան,
Օրօրոցիս օրօրով.
Զինուոր կ՝երթամ Հայաստան,
Իմ հայրենեաց կարօտով,

Աղաւնի Ֆելէկեան

Generated on 2016-06-14 07:00 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ ԵՐԳԸ

Հիմի՞ էլ լռենք, եղբարք, հիմի՞ էլ,
Երբ մեր թշնամին սուրն էդրել,
Իր օրհասական սուրբ, մեր կրծին,
Ականջ չի դնում մեր լաց ու կոծին
Ասացէ՛ք, եղբա՛րք, Հայեր ի՞նչ անենք,
Հիմի՞ էլ լռենք։

Հիմի՞ էլ լռենք, երբ մեր թշնամին,
Դաւով, հրապուրանքով տիրեց մեր երկրին.
Ջնջեց աշխարհքից Հայկայ անունը,
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը.
Խլեց մեզանից թագ եւ խօսք եւ զէնք
Հիմի՞ էլ լռենք։

Հիմի՞ էլ լռենք, երբ մեր թշնամին
Խլեց մեր սուրը—պաշտպան մեր անձին.
Մշակի ձեռքիցն էլ խոփը խլեց,
Այդ սուր ու խոփից մեր շղթան կլուեց.
Վա՜յ մեզ, շղթայով կապած գերի ենք։
Հիմի՞ էլ լռենք։

Հիմի՞ էլ լռենք, երբ մեր թշնամին
Սոսկալի զէնքը բռնած մեր գլխին,
Կուլ տալ է տալիս արտասուք առատ,
Աղեխարշ բողոք վաղուց ապիրատ,
Մեր գլուխ լալու Եփրատ ո՞ւր փնտռենք
Հիմի՞ էլ լռենք։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 07:00 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հիմի՞ էլ լռենք, երբ մեր թշնամին
Լիրը գոռոզութեամբ լցրած է հոգին,
Արդարութեան ձայնն հանած իր սրտից,
Արտաքսում է մեզ մեր բնիկ երկրից
Գանդուխտ, հալածեա՛լ, եղբա՛ր, ո՞ւր դիմենք
Հիմի՞ էլ լռենք։

Հիմի՞ էլ լռենք, երբ մեր թշնամին
Ազգութեանս վերջին կապը պատառեց.
Անգոհ մեր բերած ծանր զոհերին,
Իւր լիրը, նզոված ձեռքերը կարկառեց,
Հայի կորուստը մոտ է ի՞նչ անենք,
Հիմի՞ էլ լռենք։

Հիմի՞ էլ լռենք, երբ մեր թշնամին
Արհամարհելով մեր վառքն ազգային՝
Մեր եկեղեցւոյն ձեռնամերձ եղաւ,
Գայլազգեստ գառին մէջ գլուխը դրաւ.
Սուրբ խորան չունինք, արդ ո՞ւր աղօթենք,
Հիմի՞ էլ լռենք։

Հիմի՞ էլ լռենք, մարդիկ ի՞նչ կ՚ասեն,
Երբ մեր տեղ քարինք ապառաժք խօսեն.
Զե՞ն ասիր որ Հայք արժանի ին,
Այդ ստրկական անարգ վիճակին.
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը դիտենք։
Հիմի՞ էլ լռենք։

Generated on 2016-06-14 07:05 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Թո՛ղ լըռի մունջը, անդամալոյծը
կամ որոյ քաղցը է թշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Եկ՛ անվախ ելնենք թշնամու առաջ.
Գոնէ մեր փառքը մահով ետ խըլենք,
Եւ այնպէս լըռենք։

Գամառ–Քաթիպա

---

## ԶԻՆՈՒՈՐԻՆ ԵՐԳԸ

Ես եմ քաջ զինուոր
Զունիմ մաքուր շոր,
Հրացանը ձեռքիս
Շրջեմ ամեն օր։

Քայլ մ՝առաջ, քայլ մ՝ալ յետ
Դիմենք մենք իրար հետ,
Փշրեցէք թշնամին,
Այս խօսքերս լըսուին
Դէհ եղբայրք, ըշտապով
Քայլ փոխենք մենք շուտով։
Շուտ վանենք թշնամին,
Ազատել հայրենիք։
Պարզ արեւ երկնքում
Մեզ վրայ է խնդում,
Ինչո՞ւ մեր ազգութիւն
Սիրեց միութիւն։
Քայլ մ՝առաջ եւն.։

Generated on 2016-06-14 07:39 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Թո՛ղ լըռի մունջը, անդամալոյծը
Կամ որոյ քաղցը է թշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Եկ՛ անվախ ելնենք թշնամու առաջ.
Գոնէ մեր փառքը մահով ետ խըլենք,
Եւ այնպէս լըռենք։

Գամառ–Քաթիպա

---

## ԶԻՆՈՒՈՐԻՆ ԵՐԳԸ

Ես եմ քաջ զինուոր
Զունիմ մաքուր շոր,
Հրացանը ձեռքիս
Շրջեմ ամեն օր։

Քայլ մ՛առաջ, քայլ մ՛ալ յետ
Դիմենք մենք իրար հետ,
Փշրեցէք թշնամին,
Այս խօսքերս լըսուին
Դէհ եղբայրք, ըշտապով
Քայլ փոխենք մենք շուտով։
Շուտ վանենք թշնամին,
Ազատել հայրենիք։
Պարզ արեւ երկնքում
Մեզ վրայ է խնդում,
Ինչո՞ւ մեր ազգութիւն
Սիրեց միութիւն։
Քայլ մ՛առաջ եւն.։

Generated on 2016-06-14 07:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Թո՛ղ լըռի մունջը, անդամալոյծը
Կամ որոյ քաղցը է թշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Եկ՛ անվախ ելնենք թշնամու առաջ.
Գոնէ մեր փառքը մահով ետ խըլենք,
Եւ այնպէս լըռենք։

Գամառ–Քաթիպա

---

## ԶԻՆՈՒՈՐԻՆ ԵՐԳԸ

Ես եմ քաջ զինուոր
Զունիմ մաքուր շոր,
Հրացանը ձեռքիս
Շրջեմ ամեն օր։

Քայլ մ՛առաջ, քայլ մ՛ալ յետ
Դիմենք մենք իրար հետ,
Փշրեցէք թշնամին,
Այս խօսքերս լըսուին
Դէհ եղբայրք, ըշտապով
Քայլ փոխենք մենք շուտով։
Շուտ վանենք թշնամին,
Ազատել հայրենիք։
Պարզ արեւ երկնքում
Մեզ վրայ է խնդում,
Ինչո՞ւ մեր ազգութիւն
Սիրեց միութիւն։
Քայլ մ՛առաջ եւն.։

Generated on 2016-06-14 07:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ԳԱԻԱՌԱԿԱՆ

Հով արէք սարե՛ր, հով արէք,
Իմ դարդին դարման արէք։—
Սարեր հով չեն անում,
Իմ դարդին դարման անում։

Ամպեր, ամպեր, մի քիչ զով արէք,
Վարար անձրեւ թափէք, ծով արէք.
Գէշ մարդու օր արեւը
Սեւ հողի տակով արէք։

Հով արէք, ամպե՛ր ջան, հով արէք,
Իմ դարդին դարման արէք։—
Ամպերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում։

Սարեր ձորեր, դաշտեր ու ջրեր,
Մարմանդ մարմանդ վազող աղբիւրներ,
Մի՛ վեր կացէք, իմացէք,
Տեսէ՛ք իմ սրտի ցաւեր։

Հով արէք, սարե՛ր ջան, հով արէք,
Իմ դարդին դարման արէք։—
Սարերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում։

Generated on 2016-06-14 07:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Ողջոյն ընդ քեզ Հայաստան
Մեր դիւցազանց գերեզման.
Ողջոյն Հայոց թագուհի
Պսակեալ փառօք հայրենի։

Երկինք ղրկէ քեզ հրեշտակ
Բիւր վարդք ծըլին ոտքին տակ,
Իւր մէկ նայուածքն երկնագեղ
Քու արտասուացդ ըլլան տեղ։

Ո՛հ, ի՞նչ անուշ նուագներ
Պիտի հնչեն սոխակներդ
Երբ քու ճակատդ պսակէ
Ծաղկեոնեան դափրիէ։

Մանուկն յօրոց կը խայտայ
Եւ ծերունւոյն սիրտ ցընծայ,
Երբ որ նշոյլք կը ժպտին
Հայ աստեղաց նորածին։

Ո՛հ, չիրմացդ քով ալ հանգչի
Անմահութեան վեհ ոգի
Մինչ զուարթունք ի բարձանց
Պսակս սփռեն Հայկազանց։

Փափուկ մատունքդ թող դրօշմեն,
Այն տառերով ոսկեղէն,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 07:40 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ՀԱՑՐԵՆԻՔ

Ո՛Հ, ինչ անուշ եւ ի՞նչպէս զով
Առաւօտուց փչեց հովիկ,
Ծաղկանց վրայ գուրգուրալով
Եւ մազերուն կուսին փափկիկ։
Բայց չեմ հովիկ իմ հայրենեաց,
Գնա՛ անցիր սրտէս ի բաց։

Ո՛Հ, ի՛նչ աղու եւ սրտագին
Ծառոց մէջէն երգեմ թռչնիկ,
Սիրոյ ժամերն ի յանտառին
Զմայլեցան ի քո ձայնիկ։
Բայց չեմ թռչնիկ իմ հայրենեաց,
Գնա՛, թռիր սրտէս ի բաց։

Ո՛Հ, ի՛նչ մրմունջ հանեմ վտակ.
Ականակիտ եւ հանդարտիկ,
Քու հայելւոյդ մէջ անապակ
Նային զիրենք վարդն վարդն ու աղջիկ։
Բայց չեմ վտակ իմ հայրենեաց,
Գնա՛, հոսէ սրտէս ի բաց։

Թէպէտ թռչնիկն եւ հովն Հայոց
Աւերակաց թռչին վրայ.
Թէպէտ պղտոր վտակն Հայոց
Նոճիներու մէջ կը սողայ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 07:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Նոքա՛ հառաչքն են հայրենեաց,
Նոքա չերթան սրտէս ի բաց։

Մ. Պէշիկթաշլեան

---

## ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Ո՛վ մեծասքանչ դու լեզու,
Ո՛վ հեշտ բառբառ մայրական,
Փափկահընչիւն բառերուդ
Նման արդեօք այլ տեղ կա՞ն։

Դու որ նախ ինձ հընչեցիր
Սիրային, ո՜հ, հեշտ խօսքեր,
Այն նախ ըզքեզ թոթովելս՝
Դեռ իմ մըտքէն չէ ելեր։

Իմ մայրենի քաղցըր լեզու
Կեա՛ց անեսասան, կեա՛ց յաւէտ,
Կեա՛ց մինչ լեզուդ հայկարժան
Կեա՛ց ծաղկալից, ծաղկաւէտ։

Ի՜նչ դառըն վիշտ է սըրտիս
Երբ օտար տեղ ու լեզու՝
Բըռնի իրեն դիս քաշէ,
Սըրտէս արիւն կը հեղու։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 07:41 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ո՛հ, զայն օտարն ես սիրել
Բընաւ չեմ կարող ի սրտէ,
Զէ՛ այն չէ՝ քաղցրը իմ լեզու,
Որ սիրով զիս կ՝ողջունէ։
Իմ մայրենի քաղցրը լեզու եւն.։

Լեզու համակ սիրաշարժ,
Քանի ճոխ, պերճ ու պայծառ
Մինչ կը հընչես դուն քեզի
Սըրտերն ամէն դողահար,

Հընչէ՛, հընչէ՛ յաւիտեան,
Վեհ դիւցազանց պերճ երգ դու.
Թօթուէ՛ փոշիդ, խոր մութէն
Ե՛լ Երեւան, պերճ երգ դու։
Իմ մայրենի քաղցրը լեզու եւն.։

Յաւերժական սուրբ Գրոց մէջ
Կեա՝ց միշտ նորէն ու նորէն,
Կըշռեալ անոյշ քու տողերդ
Թող ամեն սիրտ արծարծեն.

Շընորհ ունել Արարչէն
Կամ պէտք ըլլայ աղօթել,
Շըրթունքս սըրտէ բորբոքած
Կ՝աղաղակէ անարգել։
Իմ մայրենի քաղցրը լեզու եւն.։

Generated on 2016-06-14 07:42 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ՀԱՅՍ

Հերիք ալ, հայեր այս չափ լռութիւն,
Դատաւորներու մեր այս գերութիւն,
Մեզ ի՞նչ վայել է այս չափ լռութիւն.
Ազգատեաց սրտեր, հերի՛ք, ա՛լ հերի՛ք։

Հայե՛ր, ի՞նչ խնդաք փրկեալ ազգի պէս,
Ի՛չխան եւ ընչեղ՝ գիտուն մարդու պէս,
Մեզ ի՞նչ վայել է ապրիլ հայու պէս.
Դպրոց ատողներ, հերի՛ք, ա՛լ հերի՛ք։

Հայե՛ր, խորհեցէք ի՞նչ վիճակ ունիք,
Կրօնք, ազգութիւն հայու սիրտ չունիք,
Մեզ ի՞նչ վայել է ծախսել հայու պէս.
Եղբայր ատողներ, հերի՛ք, ա՛լ հերի՛ք։

Հայե՛ր, ի՞նչ կ՚ապրիք ազատ մարդու պէս
Ուր են թագն ու սուրն ամեն ազգի պէս,
Նայեցէք չորս դին, կա՛յ ազգ ձեզի պէս,
Ամենուն գերի՛, հերի՛ք, ա՛լ հերի՛ք։

Հայե՛ր, խորհեցէք ի՞նչ վիճակ ունիք,
Ո՛չ կեանք, ո՛չ պատիւ ոչ ափ մ՚հող ունիք,
Ամենուն ձեռքը մենք ենք խաղալիք,
Ջապրած ալ մեռնինք, հերի՛ք, ա՛լ հերի՛ք։

---

Generated on 2016-06-14 07:42 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՍԵՐՈԲ ՓԱՇԱՅԻ ԵՐԳԸ

Ով որ քաջ է ի՞նչ կ՝սպասէ,
Արդէն ժամանակն է Թո՛ղ գայ,
Մահ–պատերազմի օրհաս է,
Ո՛վ որ անվախ, քաջ է, Թո՛ղ գայ։

Կամ կռուելով մեռնինք անցնինք,
Կամ զէնքով փրկուԹիւն ստանանք,
Կռուելով փրկենք Հայրենիք,
Ազնիւ մտածողը Թո՛ղ գայ։

Մերթ Սասնոյ մէջ, մերթ ի Սիփան
Կռիւ անենք միշտ անխափան,
Կռուելով փրկենք Հայրենիք.
Այս յոյս ունեցողը Թո՛ղ գայ։

Այս հինգ դար է մեզ կ՝սպաննեն,
Բռնի՝ կրօնքէն մեզ կը հանեն,
Մեր կին, աղջիկներ կը տանեն,
Պատիւ ունեցողը Թո՛ղ գայ։

Քարէ հոգի, երկաԹէ մարդ
Հալածէ Թո՛ղ վատը նամարտ.
Քարի կուշտը անվախ չոքող՝
Անսխալ խփողը Թո՛ղ գայ։

Generated on 2016-06-14 07:42 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Վերջապէս մենք ունինք կռիւ,
Զէնքով պիտի մաքրենք հաշիւ,
Մեր հայրենեաց փառքն ու պատիւ
Սերոբ փաշան սիրողը թո՛ղ գայ։

---

## ՇՈՐՈՐԱ, ԱՆՈՒՇ

Շորորա՛, անուշ ջան, շորորա՛.
Անուշի շորերով ես կորայ։
Անուշ, լուանակ նորել է,
Շորորա՛, Անուշ ջան, շորորա՛.

Նորել՝ բակ բոլորել է.
Անուշի շորերով ես կորայ։
Շարան–շարան ամպի մէջ
Շորորա՛, Անուշ ջան, շորորա՛.
Մըտել ու մոլորել է։
Անուշի շորերով ես կորայ։

Ծամեր ունիս ծիրանի,
Քամին տա՛ թել–թել անի.
Էդ կապուտակ ծով–աչեր,
Ո՞ւմ խելքն ասես՝ կը հանի։

Ալ վարդ բացուել է հովին,
Սոխակ կայնել է քովին.
Բացի իրնից ձեռ տալու՝
Մո՛տ չի թողում ոչոքին։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 07:42 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԷՐԶՐՈՒՄ

Զայն մը հնչեց Էրզրումի հայոց լեռներէն
Թունդ թունդ ելան հայոց սրտեր զէնքի շաչիւնէն
Հայ գիւղացին դարուց ի վեր սուր, զէնք չէր տեսած,
Դաշտը թողուց, սուր հրացան՝ բահի տեղ առած։

Հայ ծերուկը ցուպն ի ձեռին լալով խնդրում է
Հայրենիքի ազատութիւն տեսնել ու մեռնիլ։
Հայ տիկինը ստիպում է ամուսնոյն գնալ,
Պատերազմի դաշտին վրայ վէրք տալ ստանալ։

Փնքուշ կեանքը ծանր է թւում Հայ օրիորդին
Զէն ի ձեռին սիրտ է տալիս հայոց քաջերին։
Երիտասարդք զէն ի ձեռին գոռում գոչում են
Պատերազմիլ ազգին համար եւ արիւն թափել։

Հայ քաջերը արիւն գրով նամակ ցրուել են,
Արարատեայ դաշտին վրայ զինուոր խմբել են։

Ա՛լ բաւ լռացիր, Մայր Հայաստան երկիրդ փառաց
Քու զինուորներդ միշտ կտրիճ են ,որչափ ալ քաղցած։

Առ ու ՀՀՀուէ այդ քաջերը քու սրտիդ վրայ,
Որք կը թափեն իւրեանց արիւն սուրբ հողիդ վրայ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 07:42 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Անմիութիւն, տուն ը քանդող Հայոց խեղճ ազգին
Հրաժարեցաւ, տեզի տուաւ միութեան ձայնին.
Լըսեց Թուրքը ու ստեցաւ արիւնը խեղճին
Չէր երազել Հային տեսնել նա այդ վիճակին։

Ցնծա՛, մայր մեր ,ով Հայաստան, որդիքդ մի-
ացան
Տասը տարուան սուգ ու թախիծ մեզնից վերացան
Ուրախացաւ Մայր Հայաստան ելաւ կանգնեցաւ,
Վեց դարերի սուգ, տառապանք մի քիչ մեղմա-
ցաւ։

---

## ՈՒՌԻ ԵՍ

Ուռի ես կռանալ մի
Մեր տնից հեռանալ մի
Վայ լէ, լէ, վայ լէ, լէ
Վայ լօ, լօ ջան։
Թէ Աստուածդ կը սիրես
Սիրել ես մոռանալ մի
Վայ լէ լէ եւ այլն։
Հեռու, հեռու, սիրտէս
Ճնճղիկի թեւ ա սիրտս
Վայ լէ լէ եւ այլն։
Քանց վարդը կարմիր չկայ
Բաց անիմ սեւ ա սիրտս
Վայ լէ լէ եւ այլն։

Generated on 2016-06-14 07:42 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՄԵՆՔ ԱՆԿԵՂԾ ԶԻՆՈՒՈՐ ԵՆՔ

Մենք անկեղծ զինուոր ենք առանց ի վիճակ.
Ուխտեր ենք ծառայել երկար ժամանակ.
Պարսկաստանի խորքից եկել խիստ նամակ,
Գնում ենք բարով, կ'ուշանանք տարով,
Արիւն, սուր ու հուր պատերազմի դաշտ կ'սպասեն մեզի:

Դուշմանը մեզ տուեց «Ջանֆէդայ» անուն
Այդ անուան համաձայն տեսաւ զօրութիւն.
Մենք չենք ուզեր ազատ կամաւ բռնութիւն,
Ուխտել ենք կռուիլ այդ սիրով մեռնիլ,
Համոզուած ենք որ այդպիսով միայն կայ մեզ փրկութիւն:

Ստամպօլը պիտի լինի արեան ծով.
Ամեն կողմից կռիւ կ'սկսի շուտով.
Կոտորենք Բաշկալայ, անցնինք հեշտ կերպով
Աջից Վարդանը ձախից Իշխանը,
Գրաւենք Աղբակ տարածենք սարսափ.
Փառք Դաշնակցութեան:

Բաշկալայ գաւառում, այն պատերազմին,
Աւելի մեծ սարսափ տիրեց թշնամուն.
Քաջ Զէյթունը յաղթեց վատ չար գազանին.
Կեցցէ՛ Զէյթունը, խրոխտ Սասունը, կուսակցութիւնը
Բաղդաւոր օրեր, պարծանք Հայերուն:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 07:43 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ո՛վ սուրբ վայրեր, անհոգ ժամեր իմ կենաց,
Որ մտացս մէջ քաղցր յիշատակ մ՚էք թողած,
Ըսէ՛ք ինծի չէ՞ կարելի ետ դառնանք,
Այրած սրտիկս զովացնել դալ փութանք։

Ի՞նչ քաղցր է սէր դպրոցական ընկերաց,
Որով մարդիկ մանկութենէ հետ միմիանց,
Գաղափարաց սերտ կապով մը կը կախուին
Եւ այդ կապով միմեանց եղբայր կը լինին։

Բարեկամաց մէջ ամէնէն քաղցրներըն
Են՝ դպրոցի, պատերազմի ընկերներ,
Որոնց սիրուն յիշատակներ՝ քան զայլոց,
Թողուն ի սիրտ՝ կարօտոյ հուր, բոց եւ խոց։

Ո՛հ երջանիկ էք դուք, մանկունք դպրոցաց,
Որ ձեր անմեղ ժամերն ուսման նուիրած,
Մեղուի պէս ծաղիկներէն մեղր քաղէք
Եւ աշխարհիս ո՛չ հոգն ո՛չ վիշտ կը կրէք։

Կար ատեն մ՚որ ես ալ ձեզ պէս երջանիկ,
Դպրոցին մէջ աշխարհն ու իմ հայրենիք՝
Մի ուրիշ կերպ կ՚երազէի, եւ չէի
Գիտեր թէ ինչ մեծ ցաւ սրտիս տան պիտի։

Բայց երբ անձամբ ի Հայաստան դիմեցի,
Եւ հայրենի այս թշուառութիւնք դիտեցի,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 07:43 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ուրախութիւնն հառացաւ ալ սրտէս,
Հառաչանքով միշտ «ա՛հ» լսում արդ բերնէս։

Զմնաց մէկն որ հոգայ դոնել քեզ մի ճար.
Ա՛հ հայրենիքս ինչո՞ւ այդպէս կաս թշուառ,
Ա՛հ, ամենքն ալ կը տեսնեմ որ անզգայ,
Անգութ դարձեր, ողբերդ լսող մ'ալ չի կայ։

Երանի թէ ես ալ մանուկ մի դպրոց,
Եւ կամ տղայ մ'որ դեռ հանգչի իր մօր ծոց
Ըլլայի եւ չզգայի այս բիւր ցաւեր,
Մինչ հայրենեացս այսպէս անկար եմ օգնել։

---

## ՃԱՄԲԱՑ ՏՈՒԷՔ

Ճամբայ տուէք առաջ գամ,
Սիրած եարիս բարեւ տամ.
Ուխտ եմ արել, որ առնեմ,
Թող տեսնէ աշխարհ ալամ։

Սարեր ձորեր, հետ կացէք,
Իմ եարին ճամբայ բացէք.
Եար եարի հետ խօսելիս
Ականց արէք, ամացէք։

Ընչի ծառին նուշ կըլնի,
Վարդի հոտն անուշ կըլնի,
Երանէկ էն աղջկան
Սիրած եարին թուշ կըլնի։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 07:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՎԱՆԵՑՈՑ ԱՂՕԹՔԸ

Տէ՛ր, ողորմեա՛ Հայոց ազգին
Տո՛ւր զօրութիւն մեր թոյլ բազկին,
Հալածէ՛ դու մեր թշնամին.
Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛ ։

Շընորհեա՛ մեզ մէկ քաջ զօրավար.
Ժողուել Հային միագումար,
Մարտնչեցնել կրօնի համար.
Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛ ։

Թո՛ղ դադրի մեր գերութիւնը,
Յառնէ Հայի ազգութիւնը,
Վերջանայ մեր հէքութիւնը,
Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛ ։

Յիշեա՛ զմեզ, Տէ՛ր այս անգամը,
Ունայն չանցնի պատեհ ժամը,
Հայքս ալ ազգաց 'լայք անդամը.
Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛ ։

Տէ՛ր, թէ այժմ ալ չես ողորմիլ,
Ա՛լ հայիս մէկ բան չի օգնիլ,
Մեզ կը մնայ ջուրը ընկնիլ,
Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛ ։

Generated on 2016-06-14 07:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Ապա թըշուառ եղբայր Հայեր,
Ձեռքերս առնենք մէյմէկ սուրեր,
Դրօշակ բանանք, փըշենք փողեր.
Տէ՛րըն խղճայ ի վերայ մեր։

---

## ՁԱՑՆ ՏՈՒՐ

Ձայն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ ես լըռում
Ողբակից լինիլ չկամի՞ս դժբաղդիս.
Շարժեցէ՛ք զեփիւռք, ալիքը վէտ վէտ,
Խառնեցէք զարտասուս այս ջրերի հետ։

Հայաստանի մէջ անցքերին վրկայ,
Սկզբից մինչ այժմ, խընդրեմ, ինձ ասա՛,
Մի՞թէ միշտ այսպէս պիտ՝ մնայ Հայաստան,
Փըշալից անապատ՝ երբեմն բուրաստան։

Մի՞թէ միշտ այդպէս ազգն խղճալի,
Կը լինի ծառայ օտար իշխանի,
Մի՞թէ Աստուծոյ աթոռին մօտին
Անարժան է Հայն եւ Հայի որդին։

Արդեօք գալո՞ւ է մի օր ժամանակ՝
Մասիսի գլխուն տեսնել մի դրօշակ,
Եւ ամէն կողմից պանդուխտ ազգայինք,
Դիմեն դէպի Իւրեանց քաղցր հայրենիք։

Ռաֆֆի

Generated on 2016-06-14 07:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Ոտքըս բոպիկ, կուծքս միշտ բաց,
Ի՛նչ փոյթ թէ քոյրս ալ մերկ մնաց.
Ինձ մօտ մէկ է արեւ, բուք, ցուրտ,
Բա՛ւ է չիշխեր հոս թուրք կամ քուրդ։

Իմ կեանքըս խիստ է ու չարքաշ,
Փափուկ կեանքի վայլից չեմ վարժ,
Բընակարանս է ապառաժ,
Ընկերս՝ մրրիկ ու երկրաշաժ։ Հայ եւն։

Թո՛ղ այլք բնակին հովիտ ու դաշտ,
Վատ ազգին հետ թող լինի հաշտ,
Ես պիտ՝ մնամ միշտ աննըւաճ,
Թէեւ վրաս գայ քառասուն վաշտ։

Ցորենի տեղ կ՝ուտեմ կորեկ,
Երկաթ ծեծեմ գիշեր ցորեկ
Շինեմ փէտատ, խոփ, խաչ—երկաթ.
Ծանր է դատումս, բայց եմ ազատ։

Հարստութիւն, ուսում, հանճար,
Փառք ու պատիւ չեն ինձ համար.
Բա՛ւ է ունիմ տէգ, թուր, խանչար,
Բնաւ չի կոխեր հոս ոտք օտար։ Հայ եւն։

Սիրած զէնքերս չեմ ձգեր ձեռքէս,
Առիւծն անվախ չէ ինծի պէս.
Կը սիրեմ որս, կըռիւ, աւար,
Կ՝ըսպասեմ երբ ընկնի հաւար։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 07:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Գիշերն ալ զէնք վերաս քընեմ,
Երազիս մէջ կռիւ կ՚ընեմ,
Կռուիլ ինձ մօտ միշտ խաղալ է.
Կռուով մեռնիլը հալալ է։ Հայ եւն։

Այծեամի պէս կը ցատկռտեմ.
Առիւծի պէս կը մռընչեմ,
Ծովի նման կը փրփրիմ,
Կայծակի պէս կը հարուածեմ։

Կռուոյ դաշտը բաղդն է կեանքին,
Երբ կը ծագի արշալոյսը.
Կամ աւետիս տայ դրօշակին
Կա՛մ պաղ տեսնէ քու երեսը։ Հայ եւն։

Հաւար ընկնի երթամ յառաջ,
Սասնոյ լերինք հանեն հառաչ,
Հառաչ հանեն եւ ներկուին
Կորիճներու արիւնով քաջ։

Կորիճին սիրտ, կորիճին ձեռք,
Ի՞նչ փոյթ քաջին հազար մէկ վէրք,
Մէկ հարուածին կուտաս հարիւր,
Ադաւին լէշ կ՚ոնես հազար։ Հայ եւն։

Մ. Տամատեան

---

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 07:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՕՐՕՐ

Ննջեա՛, որդեակ անուշ քնով,
Օրօր կ՚ասեմ ու նանի,
Քնոյ հրեշտակն իւր թեւերով
Քո երեսին հով անի,
Օրօր, օրօր իմ զաւկիս, (Ամեն տան
Օրօր, կ՚ասեմ հրեշտակիս վերջը կրկնէ)

Ննջեա՛, ննջեա՛, անուշ զաւակ,
Շուտ մեծացիր ու մարդ դառ,
Հայրենիքիդ լեր պիտանի,
Նորա արեան վրէժն առ։

Գիտես արդեօք ո՞վ էր պապրդ,
Եւ ի՞նչ գործեր նա արաւ.
Նա Վարդանն էր որ իւր գործով,
Հայրենիքին փառք բերաւ։

Քո անունն էլ նոյնպէս Վարդան,
Դու էլ նորան նմանիր.
Նորա տուած օրինակով
Հայրենիքիդ ծառայիր։

Դէ՛հ մեծացիր ու քաջացիր,
Ազգիդ վերայ մտածիր.
Զեռքէդ եկած ամեն բարիք
Նորա մի՛ խնայիր։

Generated on 2016-06-14 07:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՎԵՐՋԻՆ ՎԱՐԴ

Վերջին վարդ, վերջին վարդ,
Սիրականիս վերջին զարդ,
Նա քեզ հանեց իւր կրծքից,
Ինձ պարգեւեց, վերջին վարդ։

Մանկութեան վերջին ժամերն,
Անցել են անդառնալի,
Կորած սիրոյս յիշատակ,
Դու ես միայն իմ վերջին վարդ։

Գարնան օրերն անցել են,
Տօթ ամառն է ինձ էրում,
Միշտ սպասում եմ քու տեսքին,
Դուն ամառուա վերջին վարդ։

Երջանիկ կեանքիս օրերը,
Ցաւ են դառել առաջիս.
Ուրիշ օրեր, ուրիշ կեանք,
Միտքըս բերիր, վերջին վարդ։

Շատ չի տեւել, կը բացուի,
Առաջիս սեւ դերեզման,
Էս աշխարհից միացն քեզ
Հետըս կ'առնում, վերջին վարդ։

Գ. Տ. Պ. Պատկանեան

Generated on 2016-06-14 07:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ՔԱՑԼԵՐԳ ԶԷՅԹՈՒՆԻ

Քանի՞ թմբինք, բաւ է. եղբարք.
Շրջենք աչերնիս աչ ու ահեակ,
Շատ ստրուկներ եղան ազատ,
Միայն մենք մնացինք հլու հնազանդ։
Բաւ է եղբարք որչափ կրեցինք զերութիւն
Քիչ մ՝ալ ելլենք, ցոյց տանք նրանց քաջութիւն։

Կեցցէ՛ Զէյթուն, ապրի՛ Զէյթուն
Թող չտեսնէ ստրկութիւն,
Քանի ունի մեզ պէս քաջեր
Կեցցէ՛ Զէյթուն, ապրի՛ Զէյթուն
Բաւ է եղբարք եւն։

Զէյթունցի ենք, մեր զբօսանք՝
Է պատերազմ եւ արշաւանք.
Սուր, թուր, զնդակ եւ հրացան
Մեր խաղալիք են յաւիտեան։
Բաւ է եղբարք եւն։

Զէյթունցի ենք, քաջեր ունինք,
Ոսոխներէն մենք վախ չունինք,
Մեր զբօսանքն է պատերազմ,
Պատերազմներ ու արշաւանք
Բաւ է եղբարք եւն։

Generated on 2016-06-14 07:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՀԱՑՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

Տո՛ւր ձեռքդ եղբայր, ժամ է զարթելու
Ժամ է ժամ յառաջ ոտքի ելլելու
Մօտ է վախճանին Հայերուս օրհաս,
Լինել չլինել մեզնից է կախուած։

Տո՛ւր ձեռքդ, եղբայր, հերիք համարենք
Հերիք օգնութիւն ուրիշից հայցենք,
Մենք ենք տաջուողը, մենք ենք չարչրուողը
Մենք պիտի լինինք մեզի փրկողը։

Մեր վեհ Հայրենիք դարերով ճնշուած
Դարեր շատ ու շատ մեր արեամբ ներկուած
Պահանջէ մեզնից արիւնով ներկել
Թշնամու արեամբ լեռներ ու դաշտեր։

Շտապիր, եղբայր, ա՛ռ, ահա քեզ զէնք
Սրբանով միայն փրկուելու ենք մենք.
Այս է գործածում մեր դէմ թշնամին,
Այս պիտի լինի պաշտպան մեր անձին։

Շտապիր, եղբա՛յր ի դաշտ պատերազմ
Սպասում է քեզ թշնամին մեր կազմ.
Աշխարհի սկիզբից ամեն մարդկութիւն
Այնտեղ է գտնել իւր ազատութիւն։

Generated on 2016-06-14 07:50 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Այնտեղ է քո կեանք, այնտեղ է քո մահ,
Ելի՛ր ընդ առաջ, ելի՛ր դու անմահ,
Արդարութիւն է գործին նշանակ,
Այնտեղ կը կանգնէ նա իւր յաղթանակ։

Գ. Թադէոսեան

---

## ԹԻՖԼԻԶՈՒ ՔԷՖ

Զմեռն ինչ կ'ուզէ թող ըլլի, (եար եարալի),
Թէ ազուաւն էլ սարերը ըլլի, (թար եարալի),
Մեզի ցուրտն չի վախցընի, (եար եարալի),
Թէ գլխներուս տակ կ'ուլլի, (եար եարալի)։

Երբ Նոյին գինին կամեցաւ,
Հասած խաղողը քամեցաւ,
Էն վախտը նա գինին կոնծեց,
Ջուրը անասնոց յանձնեցաւ։

Հարբստութիւն ոչինչ է,
Կեանքը ոսկւով էրծըթով չէ,
Հարուստ տեսած ենք տարեկան,
Ախ ու վախը մեզ համար չէ։

Երբ կուգան սիրուն գարունքը,
Գընանք դափը մեր թիկունքը,
Մենք լաւ կարմիր գինին կոնծենք,
Թողնենք վարդ պըլպուլի սուգը։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 07:50 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԱՂՔԱՏ ԿԻՆ

Ցուրտը փչեց, ձմեռ սաստիկ,
Զիւնը ծածկեց գետինը,
Ամենայն մարդ մտաւ իւր տուն,
Պատսպարուիլ ցրտից։

Ժամի դռնում դողդողալով
Կանգնում էր մի աղքատ կին.
Նորա հանդերձ պատառ պատառ,
Ցունի չապիկ իւղ հագին։

Անհամարձակ նա իւր ձեռքը
Պարզում էր անձկացողին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն անտէր աղքատին»։

Զե՛զ, սիրելիք ասեմ ո՛վ էր
Այս խղճալի աղքատը,
Այն ցրտումը ոտաբոպիկ
Կանգնած, ժամի դռնումը։

Շատ ժամանակ դեռ չէ անցել,
Երբ նա փառքով ու պատուով
Ման էր գալիս փողոցներուն
Իւր սեփհական կառքերով։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 07:50 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Այժմ, վախով նա իւր ձեռքը
Պարզում էր անցկացողին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Մ. Նալպանդեանց

---

## ԱՂՋԿԱՑ ԵՐԳԸ

Հանգիստ իմ անուշ, անցար դնացիր,
Միայն վէրքն անբոյժ սրտումս թողուցիր.
Սոխակն դեղեցիկ կանաչ պարտիզում,
Երգելով քաղցրիկ ինձ չէ գրաւում։

Քեզանով միայն երջանիկ էի,
Տիկին ինքնիշխան ինձ կարծում էի
Ցերեկը մինակ փակուած սենեկում,
Ողբում եմ անյաղ ոչ ոք չէ լսում։

Գիշեր է գալիս մահիճ եմ մտնում,
Տրտում է հոգիս քունս չէ տանում.
Մազերդ թուխ երկայն, աչերդ գրաւիչ,
Ի՞նչ հասակ ի՞նչ ձայն, ինչ հոգի կտրիճ։

Ո՞հ սիրտս այրուած ողջ քեզ է կանչում,
Ողջ քո անմոռաց անունդ եմ յիշում,
Անգութ ինձ խաբեց, ուրիշին սիրեց,
Ա՜խ, նա ինձ դեռ վա՜ղ, դաղաղ պատրաստեց։

Ս. Շահազիզեանց

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 07:50 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՆԱԶԷԻ ՕՐՕՐԸ

Քնի՛ր իմ բալիկ, օրօր ել արա՛,
Դու լաց մի՛ լինիր, ես չատ եմ լացել։

Կոյր կռունկները սուգ ու չիւանով
Մեր սեւ երկնքից եկան անցկացան,
Ա՛խ, մեր լեռներում նրանք կուրացան.
Դուռ լաց մի՛ լինիր, ես չատ եմ լացել։

Հողմն է հեծեծում սեւ անտառներում,
Անտէր մեռելի սուգն է այն, բալիկ,
Անտէր ու անթաղ մեռելները չա՛տ.
Դու լաց մի՛ լինիր, ես չատ եմ լացել։

Կարաւանն անցաւ, բարձած արցունքով,
Սեւ անտառներում ծունկ չոքեց մնաց.
Այն մեր աշխարհի դարդ ու զուլումն է,
Դու լաց մի՛ լինիր, ես չատ եմ լացել։

Ցուլունք եմ չարել, կապել օրօցքիդ՝
Զար աչքերի դէմ մեր չար դուշմանի—
Քնի՛ր ու աճի՛ր, չուտ արա՛, բալիկ՛,

Դու լաց մի՛ լինիր, ես չատ եմ լացել։
Դալուկ չրթունքիդ իմ կաթը սառեց,
Գիտեմ, այն դառն է, չես ուզում բալի՛կ—
Ա՛խ, վչտաց թոյնն է քամուել նրա մէջ..
Դու լաց մի՛ լինիր, ես չատ եմ լացել։

Generated on 2016-06-14 07:50 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Կաթիս հետ մէկտեղ սեւ վիշտը ծծիր,
Հոգուդ մէջ թո՛ղ նա սեւ վրէժ դառնայ՝
Մլի՛ր, բոյ քաշիր, բոյի՛դ ես ղուրբան,
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել։

Ա. Ահարոնեան

---

## ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Իբրեւ արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ
Թնդացնում ես երկինք դետինք տենչավառ,
Քաջ անունդ պիտի յիշուի դարէ դար.
Հըսկայ լերինք քեզ ապաստան, Անդրանի՛կ։

Թըշնամիներ երբ լսեն քո անունը,
Օձերու պէս պիտի սողան իւրեանց բունը.
Երակներիդ ազնիւ քաջի արիւնը
Զը ցամաքի մինչ յաւիտեան, Անդրանի՛կ։

Հայոց կուսանք դափնեայ պսակ թող հիւսեն.
Քնքոյշ ձեռամբ քո ճակատը պըսակեն.
Անվախ կուրծքդ գոհարներով զարդարեն,
Կեցցե՞ս յաւէտ դու անսասան, Անդրանի՛կ։

Հայաստանի սոխակները քեզ համար
Թող դայլայլեն գիշեր ցերեկ անդադար.
Անյաղթ մընաս դափնիներովդ անհամար,
Ո՛վ քաջ հերոս հայրենիքի, Անդրանի՛կ։

Generated on 2016-06-14 07:50 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՄԱՂԹԱՆՔ

Տէր, կեցո դուս, ըզհայս.
Եւ արա զնոսա պայծառս,
Կեցո՛ զհայս։

Զողորմութիւնդ վերին (պար)
Հաճեա ձօնել նոցին,
Զի նովաւ մարթասցին
Ապրիլ յաստիս։

Ով տէր մեր, տէր փութա՛,
Զազգ մեր համայն փրկեա՛,
Ի թշնամեաց։

Կափո՛ զաչս նոցուն,
Հաստ զարմատոցն զբուն.
Եւ զազգ մեր պարտասուն
Արա՛ հըզօր։

Ի քո իջեալ տեղի
Զաթոռ հայրապետի
Մեր հաստատեա՛։

Զերկարութիւն կենաց
Հօր մեր Աստուած ազգեաց
Շնորհեա՛ պետին մեր հարց,
Որ զմեզ հովուէ։

Աջովդ համատարած
Զազգ մեր արտահալած
Փոյթ գումարեա՛։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 07:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Յաշխարհ արարատեան
Ի վայր մեր ծննդեան,
Որ այժմ է սեփհական
Օտար ազգաց։
Առաքեա ի բարձանց
Զհամակցութիւն կամաց
Ի մերազնեայս։
Զոմն ի մէնջ յարո՛
Պաշտպան ազգի մերոյ
Տուր նմա ցուպ հուժկու
Հովուել զմեզ։

---

## ՊԱՆԴԽՏԻ ԵՐԳ

Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ,
Դու, Հայրենիք, քեզ յիշելով կ՝արտասուեմ։
Զկայ ծնող, չկան որդիք, քոյր, եղբայր,
Զիք ամուսին, որով ցաւերս մեղմանայ։
Օտար երկիր, արեւ, աստղեր եւ լուսին
Թէեւ պայծառ, ինծի խաւար կը թուին։
Բնակարանս՝ տխուր պանդոկ օտարաց,
Օդս օտար, ջուրս օտար, օտար հաց։
Ո՞ւր է հայրս, ո՞ւր է մայրս քաղցրանուն,
Ո՞ւր զաւակունքս, ո՞ւր սիրելիքս սիրասուն։
Սակայն ունիմ քովս Յիսուս. փրկէ զիս,
Նա օտար չէ, նա իմս է, սիրէ զիս։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 07:51 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ԱՐԱԶՆ ԵԿԱՒ

Արազն եկաւ լափին տալով,
Ժեռ քարերին ափին տալով,
Ո՞րտեղ թաղեմ ես իմ տարտը,
Զոր գըլուխս տափին տալով։

Ա՛յ իմ արազ, ջուրըդ վարար,
Սիրուն եարիս եարաբ տեսա՞ր,
Ես չը հասայ իմ մուրազին,
Արազ, եարաբ կարօտս առա՞ր։

Ամպերն ընկան Մասիս սարին,
Կարօտ մնացի ես իմ եարին,
Աստուած սիրես, էրւած սրտիս
Ջուղաբ բերես, եկող տարին։

Գիշերն անքուն գիր կը գրեմ,
Արտասուքըս գետ կը չինեմ,
Արա՛զ , ծէգը ջըրիդ չառած՝
Իմ սեւ տարտը քեզ կը բերեմ։

Կասես չողքը քարին ընկաւ,
Կրակը սրտիս մէջն ընկաւ,
Կամար ունքից, թուխ աչքերից.
Ցաւն իմ ջիւան ջանիս ընկաւ։

Generated on 2016-06-14 08:23 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԸ

Մինչ բընութիւն էր զբաւրթ
Բացօդեայ պարզ երկնից տակ,
Հայ հերոսներ անտառին մէջ
Երգում էին երդ մ՝յստակ.

«Մենք ենք ազատ Հայ պատանիք,
Աշխարհն է այս լեռները.
Սուրն է միայն մեր սիրելին.
Եւ ընկերը պէրտանը։

Մեր զարդերն են մեր զէնքերը
Եւ թանգ ոսկի փամփշտաման,
Անկողինը կանանչ խոտ՝
Փափուկ, մաքուր, պատուական։

Մեզ ապաստան՝ ժայռ քարերը,
Եւ լապտերը՝ վառ լուսնակ,
Բնակարան՝ անտառները
Եւ հայելին պարզ վըտակ։»

Կարկաչահոս առուակները
Օձապտոյտ թաւալմամբ,
Անտառի խոր ձորերու մէջ
Թափուում էին ցոլացմամբ։

Քաղցրահնչիւն պուլպուլներ
Մատների նուրբ շօշափմամբ,
Մեղմիկ մեղմիկ զարնուում էր
Մելամաղձիկ շառաչմամբ։

Generated on 2016-06-14 08:24 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Բնութեան շքեղ այս վայրերը
Սիրահարած սրտերով,
Թնդացնում էին անտառները
Երգ երգելով պարելով։

Ծածանում էր նրանց գլխին
Ոսկի բանուած մի դրօշ,
Նահատակի արեամբ ներկուած
Սա բառերը բացորոշ.—

«Ազատութիւն, արդարութիւն,
Թշուառների լոկ պաշտպան.
Անձնուէր Հայ ազգութիւն
Ընդդէմ չարին բռնութեան»։

Միօրինակ զգեստները՝
Կարմիր ռազմի ձեւի տակ,
Ոսկի բանուած բաշլիքները՝
Փայլում էին լուսնի տակ։

Փամփուշտները նրանց կրծքին՝
Խաչաձեւ ուսից ձգուած,
Փոքրիկ սիրուն պէրտանիներ՝
Ամենաց վերայ միշտ դրուած։

Ցանկարծ հսկիչ մը այդ խմբին,
Խորհրդաւոր մի սուլով.
Դադար տուեց այդ հանդէսին՝
Դէպ ընդ առաջ քալելով։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 08:24 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Երիտասարդ լրաբերը
Արագաշարժ նժոյգով,
Բերում է յաջող լուրեր.
Զուարթերես, վառ ճակտով։

Լրտեսապետն էր խրկեր
Հրահանգ մը այդ խմբին
Դէպի լեռն Էյրիպէլի
Սպասել մի մատնիչի։

«Տղե՛ր», գոչեց խմբապետը.
«Շուտ ընդ փոյթ ի ճանապարհ.
Զարնենք փչրենք այդ վատերը,
Թող խնդայ Հայաստան Մայր»։

---

## ՄԱՌՇ

Մնացեր բարեաւ, սէր իմ սէր,
Հրաւէր մարտին որոտաց.
Թէ չեմ քաջաց ես ընկեր,
Զկայ բաժին ինձ փառաց։

Մի լար, հոգւոյս իմ հատոր,
Գուցէ դառնամ, ո՜հ, մի լար
Թ՝անկայց մարտին ես ի գոռ.
Տեսցուք յերկինս մենք զիրար։

Եղբայրասպան չէ նախանձ,
Որ բորբոքեալ յիս վառի.
Ի սուրբ հողոյ հայրենեաց.
Բառնամ ըզլուծ օտարին։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 08:24 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ՔԷԼԷՐ ՑՕԼԷՐ

Քէլէր, ցօլէր՝ իմ եարը,
Արեւի տակին
Քէլէր, ցօլէր, իմ եարը.
Սարի սովոր, մեն մենաւոր,
Մէկ տղայ, հող արեգակ,
Թո՛ղ արեգակ, ե՛կ, տղայ։

Քէլէր, ցօլէր՝ իմ եարը,
Աղբիւրի ակին
Քէլէր, ցօլէր՝ իմ եարը,
Կանաչ առուով, ճանաչ առուով,
Ե՛կ տղայ, բաղովն արի,
Շողովն արի, չէկ տղայ։

Քէլէր, ցօլէր, իմ եարը.
Գերանդին ուսին
Քէլէր, ցօլէր, իմ եարը.
Հով ծառի տակ, զով ծառի տակ,
Ե՛կ տղայ, հունձ ես արել,
Քրտինք դառել չէկ տղայ։

Քէլէր, ցօլէր՝ իմ եարը,
Ջան աչքի լուսին,
Քէլէր, ցօլէր՝ իմ եարը,
Հով է, քընիր, զով է քընիր,
Շէկ տղայ, հունձ ես արել
Հար, բեզարիլ, չէկ տղայ։

Generated on 2016-06-14 08:24 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Ահա իմ գործ, ահա իմ դրօշ,
Շուտ ձի հեծիր քաջի պէս,
Գընա փրկել մայր հայրենիք,
Պատերազմի վառ հանդէս։»

«Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ՝ մեռնի,
Բայց երանի՛ որ իւր ազգի
Ազատութեան կը զոհուի։»

«Գընա՛, եղբայր, Աստուած քեզ յոյս,
Ազգի սէրը քաջալերը,
Գընա թէեւ չեմ կարող գալ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր։»

«Գընա մեռիր դու քաջի պէս,
Թող չը տեսնէ թըշնամին
Քո թիկունքը, թող նա չասէ
Թէ վատ է Հայաստանցին»։

Ասաց տուեց օրիորդը
Իւր եղբօրը մի դրօշ,
Մետաքսից էր, աղնիւ գործած,
Ուր երեք գոյն կար որոշ։

Եղբայրն առաւ եւ ողջունեց
Իւր սիրական քընքուշ քոյր,
Առաւ զէնքը, սուր, հրացան,
Հեծաւ իւր ձին սեւաթոյր։

Generated on 2016-06-14 08:25 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

«Քոյրիկ, կանչեց քաջ պատանին,—
Մընաս բարեաւ սիրական.
Այս դրօշակին պիտի նայի
Ամբողջ բանակն Հայկական

«Նա սուրբ է ինձ երբ մկրտուած
Արտասուքով ուր կընքած
Դու յանձնեցիր ինձ յիշատակ,
Հայրենիքի նուիրուած։

«Թէ մեռանիմ դու մի սըգար,
Իմացիր որ տարեցի
Դէպի մահու արքայութիւն,
Իմ հետ քանի թըշնամի։»

Ասաց վազեց դէպի հանդէս
Տաճիկներուն յանդիման,
Իւր անունով գընել յաւէրժ,
Ազատութիւն Հայկական։

Ո՛հ, իմ սիրտը կտրատվում է
Տեսնելով այսպէս սէր.
Դէպի թշուառ մի հայրենիք,
Որ ոտնակոխ եղած էր։

Սորա կէսը, կէսի կէսը,
Գէթ երեւէր մեր աչքում,
Բայց մեր կանայք...ո՞ւր, Եղիշէ,
Ո՞ւր մեր «Տիկնայք փափկասուն։»

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 08:25 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ո՛հ...արտասուք ինձ խեղդում են,
Այլ չեմ կարող բան խօսել,
Չէ՛...Թըշուառ չէ Հայաստան,
Եթէ կանայք այսպէս են։

Մ. Նալպանդեանց

---

## ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆ ԱՌ ԾԻԾՆՈՒՆԱԿ

Ով ծիծեռնակ վարանաց թըռչնիկ, ի՞նչ տըխրագին
Ձայնիւ, ձայնիւ կ՝եղանակես մօտ իմ բանտին.
Միթէ վարուժանըդ սիրուն
Հոս միայնա՞կ թողուց զքեզ.
Եւ դուն անմըխիթար կը հեծես,
Ո՛հ, լա՛ց ուրեմն ինծի պէս։

Բայց երանի՛ քեզ, բի՛ւր երանի, կրնաս թըռչիլ,
Թեթեւ թեւոցդ ի ծայր ընդ սար ու ձոր.
Իսկ հոս արեւուն նշոյլն աղօտ
Մութ բանտիս է անթափանց,
Եւ ոչ մեղմ հովիկ մ՝ալ կը փչէ
Որ տանի ձայն իմ սիրելեաց։

Դէթ դու գնա՛ գտնել սիրելիդ, սլացիր արագ,
Սակայն դարձիր նորէն մօտ չուառիս,
Եւ հոս հանգչէ այս իրիկուն
Լէ՛ր դու վրկայ տըխուր մահուանից
Եւ իմ շիրմիս վրայ ճըւճըւալով
Դէթ դու յիշէ զիս անմոռաց։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 08:25 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԲՕԼԳԱՐ ՄՕՐ ՕՐՕՐԸ

Քընի՛ր, բալիկ, հանգիստ քընիր ու խաղաղ.
Քո արիւնից մեր դաշտերը հազար ծաղկով վառուեցին,
Ամեն մի մայր ծաղիկ ունի, միակ ես եմ անծաղիկ.
Քընի՛ր, բալիկ, հանգիստ քընիր ու խաղաղ.
Մեր լեռների կատարներին ազատութեան բոցավառ
Խարոյկները կէս գիշերի սեւ խաւարը վանեցին։

Քընի՛ր, բալիկ, խաղաղ քընիր ու հանգիստ։
Կէս գիշերին մեր դըռները էլ չի բաղխում հարամին,
Մանուկները ահ ու դողով էլ չեն նայում հերթիկին։

Քնի՛ր, բալիկ, խաղաղ ու հանգիստ։
Հօտ ու նախիր լուսաբացին խայտալով են դաշտ վազում
Հովիւների սըրինգ չըւին ողջ ձորերն են թունդ հանում
Ամեն շաբաթ երեկոյին ես այց կը տամ քո շիրմին,
Օրօր կասեմ, որ խոր քընես, մատաղ լինիմ քո հողին,

Քընիր բալիկ, քընիր...։
Բայց թէ մի օր մեր լեռների մայրիները կորանան.
Եւ մեր գըլխին հազար կողմից սեւ ամպերը դիզանան,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 08:25 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թէ ժըպիտը նորից խամրի մեր կոյսերի չբբթունքին,
Եւ մեր անմեղ մանուկները օրօրոցում դողդողան,
Այն ժամանակ նորից կը գամ, կասեմ, բալի՛կ, մի քընիր,
Ե՛լ, ոտքի ե՛լ, սեւ ամպերը մեր լեռներին դիզացան,
Եւ փոթորկի գոռ չընչի տակ, մայրիները կորացան՝
Վե՛ր կաց, մէկ էլ, հըսկայ զաւակ, ձըգուիր քո վէս հասակով,
Շարժի՛ր մէկ էլ յաղթ բազուկդ, մատաղ լինեմ քո բազկին.
Ցետոյ նորէն հանգիստ քընիր, անուշ, անվերջ, խոր քընով։...

---

## ՏԱՊԱՆԱԳԻՐՍ

Աշնան չորցած թուփերու հետ
Հովիկն ա՛յն ալ քըշեց տարաւ.
Վաղաթարշամ ծաղիկն անհետ,
Դեռ չը բուրած իսպառ կորաւ։

Սեւ գերեզմա՛ն մը փորեցին,
Լացող չեղաւ անոր վրան.
Սիրոյ հատաղ ծընած հոգին,
Անսէ՛ր ի՞ջաւ ի գերեզման։

Generated on 2016-06-14 08:25 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՊՕՑԸԴ ԲԱՐՁՐ

Պօյըդ բարձր սալվի չինար,
Աչքդ նաշխուն, ունքդ կարմիր,
Դուն ստեղծուել ես ինձ համար,
Անգին ծաղիկ ես նոր բուսած։

Գոյնդ նման է մարմարի,
Հագիդ շորերն է յարմարի,
Դուն ես վարդը այս աշխարհի,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած։

Քեզ չտեսնելը ինձ մեծ մահ է,
Հոգիս հանեմ քեզ տամ պահէ.
Ինձնում եղած ինձ ի՞նչ չահ է,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած

Գիշեր ցորեկ նստած լալով,
Աղի արտասունք թափելով,
Ինձ թողել ես տանջուելով,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած։

Ես քեզ տեսայ ծաղկանց միջին,
Աղաչեցի ես իմ փրկչին՝
Որ չկտրէ յոյսն իմ վերջին,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած։

Generated on 2016-06-14 08:25 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ՀԱՌԱՋԱՆՔ

Նպատակիս հասնիմ միակ,
Թող զիս հանեն կախաղան,
Կախաղանէն խեղդուկ ձայնով
Պիտի գոչեմ, ա՛խ, Հայաստան։

Ա՛խ, Հայաստան, սիրտս ու հոգիս
Քեզ նուիրեմ ընդունէ՛
Թէ կարելի. Թո՛ղ ես մեռնիմ,
Հայրենիքս դուն ապրէ։

Անոր սիրուն բանտն ալ դրուիմ,
Պալատ է այն ինձ համար.
Ձեռքերս, ոտքերս շղթան զարնեն,
Երջանկութիւն է ինձ ան ալ։

Թէ մինչեւ իսկ աքսորուիմ ալ,
Թափառական ընէ զիս բաղդ,
Հայաստանի սիրոյն համար,
Փըշոտ վայրերն կ՚ըլլան դրախտ։

Ա՛խ, Հայաստան, դու սիրուն մայր,
Մինչ ե՞րբ այսպէս քու որդիք,
Քեզնէ հեռո՛ւ պիտ՚ հառաչեն.
Երբ դու այստեղ անտէր կ՚մնաս։

Ե՞րբ պիտի գայ իմ թագաւոր,
Որ ես հասնիմ իմ ուխտին,
Դրօշակներ ծածան ծածան
Ականակուռ թագը գըլխին։

Generated on 2016-06-14 08:25 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Ա՛խ, Հայաստան, աչքդ դարձուր
Քեզ փնտռող որբերուն,
Պէս պէս ցաւոք կը տանջուին,
Դարման եղիր հայ քաջերուն։

Վախնամ մեռնիմ ես այս ցաւով
Ու իջնեմ սեւ գերեզման,
Գերեզմանէն մեռած ձայնով
Պիտի գոռամ, վա՛խ Հայաստան։

---

## ԿԱՆՉԷ ԿՌՈՒՆԿ

Կանչէ՛, կռունկ, կանչէ, քանի գարուն է,
Ղարիպներու սիրտը գունդ գունդ արիւն է։
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, գարուն է,
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, գարուն է,
Ա՛խ, սիրտըս արիւն է։
Կանչէ՛, կռո՛ւնկ կանչէ՛, քանի արօտ է,
Աչխարհս է արեգակ, սիրտըս կարօտ է։
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, արօտ է,
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, արօտ է,
Ա՛խ, սիրտըս կարօտ է։
Կանչէ՛, կռո՛ւնկ, կանչէ՛, քանի արեւ է,
Աչնան կերթաս երկիր, եարիս բարեւէ։
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան արեւ է,
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան արեւ է,
Ա՛խ, եարիս բարեւէ։

Generated on 2016-06-14 08:26 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՍԻՐԷ ՀԱՑԸ

Սիրէ հայը թէ ըլլայ
Աղքատ, տնանկ, անկարող,
Հագուստները հին ու մին,
Դռնէ ի դուռ մուրացող։
Անունն է հայ՝ պարտ է քեզ
Սիրել զնա հայու պէս։

Սիրէ հայը թէ ըլլայ,
Հայուստ, փարթամ, մեծատուն,
Ունենայ պէյ, էֆէնտի,
Կամ ամիրա պատուանուն.
Անունն է հայ եւ այլն։

Սիրէ հայը թէ ըլլայ,
Հայը սուրբ, տէրտէր, վարդապետ,
Վրան փիլոն, ծոցը խաչ,
Կաթողիկոս, հայրապետ,
Անունն է հայ եւ այլն։

Սիրէ հայը թէ ըլլայ,
Բողոքական, այլ կրօն,
Ըստ քո կարծեաց սնապաշտ,
Հերետիկոս, անկրօն։
Անունն է հայ եւ այլն։

Գ. Շմաւոն

Generated on 2016-06-14 08:26 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ԹԻՖԼԻՍԵՑՈՑ ԳԱՆԳԱՏԸ

Ցեռաբ մէկը շլապայով,
Քաշած ձեռին շան կաշին,
Շուշի կըտորն աչքերին,
Լուս ընկաւ քո առաջին։
Էսէնց է, մօղա է, մօղա է, մօղա է
Գետերբուրգումը միթօմ
Աւարտիլէ իր ուսում,
Փիլիսոփայ է կօսես,
Խուրը տըրկէմէն է խօսում։
Էսէնց է, եւն։

Մէկ էլ տէհնում իս պուչէ
Թռեւ է տալիս զայրաթով,
Կօսիս քուչի աւլիլը
Վիր է կալել փուղրաթով։

Մէկ էլ տեհնիս բըժիշկը
Իւր վիզիթի փուղն առած՝
Դեռ ինքն էլ տուն չը հասած՝
Հիւանդն էլ յետեւէն մեռած։

Մի ձեռը նա փըքուելով
Ունի չալուարի ջիբում,
Կոտրատուելով միւս ձեռով
Իւղած մազերն է քօքում։

Ու բերանում ծըխելով
Սատանայի բուրվառը,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 08:26 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մէջքը կոտրած կատուի պէս
Երբ չափում է բուլվարը։

Մէկն էլ ոչխարի նըման
Էդնէն է կախել է դըմակ,
Կօսիս դարբնի մեծ փուքսով
Փչած ըլին իր քամակ։

Ախ էն դամբի պէս գործած
Էրէսների էն քուղը,
Սապոկների ճըռճռոցը
Քանդում է իմ ըղուղը։

Չիմ կանացի, հա՛խ Աստծու,
Բարկութիւնը իմ սանձել,
Ըսկըսում են վայ տալով
Միր կնանիքն անիծել։

---

## ՍԱՐԵՐԸ ՀՈՎԵԼԱ

Սարերը հովելա ծիրան ջան
Հօ՛ հովել հօ։
Բաներուս մնացելա ծիրան ջան
Հօ՛ հովել հօ։
Օրերը դնացելա ծիրան ջան
Հօ՛ հովել հօ։
Էլ դնալով անելով ծիրան ջան
Հօ՛ հովել հօ։

Generated on 2016-06-14 08:26 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԵՐԳ

Ս. Դ. Հ. Կ. Կանանց Զարգացական Միութեան
Մարգուան

Պարտքի, իրաւանց գիտակցութիւնով,
Զարգացականներ՝ նետուած ասպարէզ,
Կամք, ոյժ ու եռանդ չեն պակսիր մեր քով,
Պայքարի կայծը հրդեհած է մեզ.
Օ՛ն, ընկերուհիք, դիմենք դէպ յառաջ,
Մերն է յաղթանակն, յառա՛ջ, օ՛ն, յառաջ։

Նախապաշարման շղթաներ ամուր,
Ալ բաւ կաշկանդեն սեռը իգական,
Փշրենք մեր վզին երկաթն ու անուր,
Կը մերժենք ՏԿԱՐ բառն անարգական.
Օ՛ն, ընկերուհիք եւ այլն։

Պարտ ու իրաւունք, հաւասար այր մարդուն
Է՞ր կը վայելենք, օրէնքն անարդար
Օ՛ն, թող ջախջախուին, կռուինք եռանդուն,
Մարտին մէջ վսեմ, անդուլ անդադար.
Օ՛ն, ընկերուհիք եւայլն։

Հաւասարութեան փողը ուժգնակի
Հնչած է արդէն Հարաւ, Հիւսիսէն.
Զարգացման կոչին մեր հոգին հակի.
Մեր մատներն անոր դափնիներ հիւսեն։
Օ՛ն, ընկերուհիք եւայլն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 08:47 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ԽՆԿԻ ԾԱՌ

Մեր դրոանը խընկի ծառ,
Գիւլո՛ւմ ջան,
Ձեր դրոանը խընկի ծառ,
Գիւլո՛ւմ ջան.
Խընկենին ա բերել բար,
Իմ խորոտիկ, պըզտիկ եար,
Գիւլո՛ւմ ջան։

Մեր դրոանը խընկի ծառ
Նաշխուն բըլբուլ վըրէն թառ,
Երթար ու դար շորոր տար,
Սիրուն եարին օրօր տար։

Մեր դրանը խընկի ծառ,
Մարջան բըլբուլ վըրէն թառ,
Գընար ու դար, շըւան տար,
Անուշ եարին թեւին տար։

Մեր դրոանը խընկի ծառ,
Ոսկի բըլբուլ վըրէն թառ.
Կարմիր խընձոր անել տար
Ալուան ծաղիկ տանել տար։

---

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 08:47 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ՏԱՂ ՍԻՐՈՑ

Իմ եարբն ներստել դամով,
Լեղուն քանց շաքար համով,
Ինձ կու սիրէ իւր կամով.
Զա՛լում, ուրախ եմ, ամա՜ն, ամա՜ն։

Երեսըդ վարդի թերթ է.
Խօսքըդ սիրտըս կու երէ.
Ո՞վ ինձ խարար կու բերէ.
Զա՛լում, կարօտ եմ ,ամա՜ն, ամա՜ն։

Աչքերիդ բանդիւան եմ,
Կ՚ուզեմ որ հոգիս հանեմ.
Հէքիմէս դանդատ կ՚անեմ,
Զա՛լում, դարդլու եմ, ամա՜ն, ամա՜ն։

Սեւ խալերը, ծամերը դաստայ,
Գէնի սալուբտուր խաստայ.
Իմ եարբն ինձ մէկ թաս տայ.
Զա՛լում, ծարա՛ւ եմ, ամա՜ն, ամա՜ն։

Ծաղկած պաղչի նըման ես,
Ի՞նչ կ՚ելնի ըռահմ անես,
Ներսերըն ծոցէդ հանես.
Զա՛լում, համբուրեմ, ամա՜ն, ամա՜ն։

Գըլխիդ ձըգել ես մանտիլ,
Գոզլարըն ետնար զանդիլ.

Generated on 2016-06-14 08:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Խոցուած սիրտըս մի՛ քանդիլ.
Զա՛լում, դարի՛պ եմ, ամա՜ն, ամա՜ն:
Գաղչումըն ծաղիկ քաղես,
Ծածուկ դէպ ինձ ծիծաղես,
Կըրակով սի՛ըտըս դաղես.
Զա՛լում, երվէլ եմ, ամա՜ն, ամա՜ն:
Գիր ես գըրել տոշխարով,
Մէջըն լըցել շաքարով,
Ցովնաթանէն շատ բարով.
Զա՛լում, կարդացի, ամա՜ն, ամա՜ն:

---

## ՔԱՅԼԵՐԳ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Մշակ, բանուոր ըէնջպէր ախբեր,
Արի՛ք միանանք յառաջ գնանք...
Աշխատանքի դաշտի պաշտպան
Դաշնակցութեան թեւ թիկունք տանք:

Ա՜խ, մենք տանջւենք քրտինք թափենք,
Արիւն՝ վաստակ դատենք դիզենք.
Շահագործող ցեցեր վատնեն.
Իսկ մեզ՝ չոր հաց բաժին հանեն:

Դէ՛հ սեւ օրեր, բողոք դարձէ՛ք,
Արիւն, քրտինք երկունք մտէ՛ք.
Տանջանք, զրկանք լեզու առէ՛ք,
Սոցեալիզմի ճամբան բացէք...:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 08:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՏԱՂ ՍԻՐՈՑ

Նոր ծաղկեցաւ այգին, եկել է գարուն.
Է՞լ իմ սիրտը կ՚անես եարալու արիւն.
Դու ես իմ սիրելի աղա եւ պարոն.
Ես եղէ քեզ հէյրան, դու մարալ ջէյրան։
Պախչի դուռը բաց է, այս է լաւ վախտը,
Զալում ծոցը էլ բաց, մըտնեմ դըրախտը,
Թող ես շամամ քաղեմ, դու նըստիր թախթը.
Ես եղէ քեզ հէյրան, դու մարալ ջէյրան։
Գիտեմ որ դու քանց զիս սիրոյ թամահ ես.
Նըռներդ հող կու դառնայ, է՞ր պինդ կու պա—
հես .
Թող համբուրեմ օրհնեմ, հոգով զարդարվիս.
Ես եղէ քեզ հէյրան, դու մարալ ջէյրան։
Զինչ ձուկը ջըրէն դուրս ես կուգամ տապակ,
Դու էլ իմ սիրովը ծարաւ ես պապակ,
Ապա է՞ր կու մընամք մեք միմեանց փափաք.
Ես եղէ քեզ հէյրան, դու մարալ ջէյրան։
Էլ չունիմ սիրելի քանց քեզ պատուական,
Ինձ կարօտ մի՛ թողուլ նազլու սիրական.
Կու մեռնիմ, կու մընաս դու ինձ պարտական.
Ես եղէ քեզ հէյրան, դու մարալ ջէյրան։
Երեսըդ նըման է կարմրափարլ վարդին.
Թող քու հայրըն մեռնի, ապրի իւր որդին.
Բալքի ըռահմ անես զարիպ ճամբորդին.
Ես եղէ քեզ հէյրան, դու մարալ ջէյրան։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 08:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մարմինըդ զառաքֆով նոր զարդարեցիր,
Ծոցըդ նըշանց տըւիր, այլվի ծածկեցիր,
Իմ սիրտըս երելով կարօտ պահեցիր.
Ես եղէ քեզ հէյրան, դու մարալ ջէյրան:
Բարձին վրայ բաղմիս ի մէջ դարպասին.
Մայիլ եմ աչքերիդ, հագիր ադլասին.
Թող Յովնաթան մէկ տաղ ասէ քո թասին.
Ես եղէ քեզ հէյրան, դու մարալ ջէյրան:

---

## ԵԱՐԱԼԻ ԲԼԲՈՒԼ

Նպատակիս դէթ մի մասը կատարուէր.
Եարալի բըլբուլ եմ.
Հայրենիքիս ազատութիւնը տեսնեմ ու մեռնեմ.
Եար արի, տուն արի, չուտ արի բըլբուլ.
Սարերի գիւլն եմ:

Ա՜խ իմ դարդըս չատացել է չեմ կարող,
Եարալի բըլբուլ եմ.
Դարդի ձեռից ո՞ր ջուրն ընկնեմ ազատուեմ,
Տուն արի, չուտ արի, եարալի բըլբուլ եմ,
Սարերի գիւլն եմ:
Ա՜խ, անբաղդ հայդուկիս, Տէր իմ, դու խղճայ,
Եարալի բըլբուլ եմ.
Մի՛ թողնիր քուրդի դնդակով զուր դնում կորչեմ:
Եար արի, տուն արի, չուտ արի բըլբուլ եմ.
Սարերի գիւլն եմ:

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 08:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՑԼԵՐՔ

Հայե՛ր, այսօր ազատ կեանքի նոր արեւ
Երբ խանդավառ կը չողչողայ մեր վերեւ,
Պէտք չէ բնաւ որ մեր սիրտն ու մեր հոգին
Սին անարժան բաղձանքներով բորբոքին,
Պէտք չեն մեզի սիրտ միջոցներ, ոյժ, զէնք,
Ազատութիւն մենք կ՝ուզենք։

Թուրք ազգին հետ, իբր ազգական խնամի,
Զէինք երբէք, պիտի չըլլանք թշնամի,
Զաւակներ՝ նոյն հայրենեաց, նոյն սուրբ հողին
Թշնամին ենք մեզ իրարմէ բաժնողին,
Պէտք չեն մեզի բիրտ միջոցներ, ոյժ ու զէնք,
Եղբայրութիւն մենք կ՝ուզենք։

Միշտ ձեռք ձեռքի, հաստատ քայլով անխափան
Պիտի կտրենք մենք լուսաւոր այն ճամբան,
Որ հեշտաբոյր ծաղկանց մէջէն ընտանի
Դէպի լաւն ու դէպի բարին կը տանի։
Պէտք չեն մեզի բիրտ միջոցներ, ոյժ ու զէնք,
Արդարութիւն մենք կ՝ուզենք։

Ա. Փանոսեան

Generated on 2016-06-14 08:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ՔԱՑԼԵՐԳ Հ. Ս. Ռ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Եկէք, բոլորուինք մեր սուրբ ուխտին շուրջ,
Մեր գործն է վրսեմ, մեր պայքարն է լուրջ,
Վառուած ողջամիտ սկզբունքներով,
Մեր պարտքն անվրհատ կատարենք սիրով։

Նոր սիրտ, նոր հոգի, նոր խանդ առէք, Հա՛յք,
Ռամկավարութեան ծագեցաւ մեզ այգ։

Ցրուած Հայութեան սիրտերէն բաժան,
Բառնանք թունաւոր քէն ու ոխ դաժան
Ջանանք փոխարկել բիրտ նիւթը՝ լոյսի
Եւ թող միտքն ըլլայ ուղեցոյց յոյսի։
Նոր սիրտ,...եւն։

Իջնե՛նք ռամկին մօտ, ժողովրդին մէջ,
Ձեռքերնիսբռնած լոյսի ջահն անշէջ.
Քննենք, պրպտենք ցաւոց աղբիւրն յորդ,
Նոր կեանքին ըլլանք խիզախ ռահայորդ։
Նոր սիրտ,...եւն։

Հերիք՝ տարուեցանք պատրանքներով սին,
Հերիք սնուցիք կեղծ յոյսեր մթին,
Հասած է արդէն ողջմտութեան ժամ
Մէկդի՛ վանեցէք երազներ ունայն։
Նոր սիրտ,...եւն։

Գ. ԽԱՆՃԵԱՆ

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 08:48 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԿՐԱՄԲԱՄԲՈՒԼԻՆ

Կրամբամբուլին էն օղին է,
Որ մեզի քաջ ծանօթ է,
Որու համը չգիտնալը
Ուսանողին ամօթ է,
Բայց հանապազ իմ սիրելի,
Մենք կոնծում ենք կրամբամբուլի,
Կրամբամբուլին, կրամբամբուլին։

Հայրս անդադար ինձ գրում է,
«Որդի ջան, շուտ աւարտէ,
Տես, գրքերդ դու լաւ սերտէ,
Ժամանակդ արագ անցնում է
Բայց ես նորա պարոն որդին
կոնծում ենք միշտ կրամբամբուլին.— (կրկ.)։

Թէ դասն ու հոգն ինձ նեղում է
Թէ իմ քէյֆը տեղը չէ,
Թէ աղջիկը ինձ խաբում է,
Ու հաւատարիմ էլ չէ,
Կ'ասեմ աղջիկ իմ նազելի,
Քու տեղ կը սիրեմ կրամբամբուլին.— (կրկ.)։

Թէ Լերբաս ու Թոքս իմ մաշուել է,
Գլուխս էլ սաստիկ ցաւում է,
Թէ որ խմելն ու քէյֆ անելը
Բժիշկն ինձ արգիլում է.

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 08:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Բայց ինչ ցաւ որ կուզէ ըլլի,
Ես կը կոնծեմ կրամբամբուլի։ (կրկ.)

Երբ մայրս ինձ մի հարս ճարել է,
Ասում է որ պսակուիմ,
Եւ պարտքն ու կարգն ինձ ստիպել է,
Որ ես ճաշ ու քէյֆ սարքեմ,
Եւ ճաշի տեղ իմ սիրելի՝
Կ'առնում առատ կրամբամբուլի։—(կրկ.)

Բայց երբ կուգայ կեանքիս վերջը
Մահս էլ առջիս տեսնեմ.
Օղին կ'ածեմ բաժակիս էջը,
Հոգեհանիս էլ կ'ասեմ,
Վերջին անգամ իմ պատուելի
Ե'կ առաքացնենք կրամբամբուլի,
Կրամբամբուլի', կրամբամբուլի։

---

## ՆԱԶԼՈՒ ՋԱՆ

Եկաւ գարուն բացուաւ սարերի վարդը
Ա'խ, նազլու ջան, ով սպաննեց քո մարդը։
Եկաւ գարուն կթինք ոչխարի կաթը
Ա'խ, նազլու ջան, էս ինչ սեւ էր քո բաղդը։
Արեւն թափուաւ մահու ճաղի թեւերուն
Ա՛խ, նազլու ջան, մնացել գիշերուն։
Վա՛յ, վայ, վայ, վայ շատացել են դարդերս
Ա'խ նազլու ջան, եղէմ մնային բալէքդ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 08:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՀԱՌԱՋԱՆՔ

Իմ անուշիկ մայրիկս
Կանչէ թող գայ քուրիկս
Տամ իմ վերջին համբոյրս
Կանչում է Հայրենիքս։

Գնում եմ կռուելու
Օգնելու, յաղթելու յոյսով՝
Դէմ դնել քաջի պէս՝ թշնամուն
Փրկել հայրենիքս։

Բացուել է Սուրբ Դրօշակ
Գնանք մտնենք նրա տակ
Սերոբ Փաշային նմանակ
Լինինք ազնիւ նահատակ։

Ուխտել եմ, զինուել եմ, անձնուէր
Քաջի պէս կռուել
Ազատութեան դրօշներով
Փրկել խեղճ հայրենիք։

Այնտեղ Ռուսն է մեզ տանջում
Այստեղ Թուրքն է մեզ մորթում,
Համարում են մեզ մրջիւն
Ինչ որ մեզ թանկագին է
Մեր ձեռքից են խլում։

Գնում եմ եւն.։
Ուխտել եմ եւն.։

Generated on 2016-06-14 08:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ՏԵՍԻԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Թէ իմս Հայրենեաց քնար սգաւոր
Հեծէ տխրագին, իմ հոգիս է այն.
Թէ նորա բեկբեկ թելեր վշտաւոր
Խօսի ողբաձայն՝ իմ սրտիկս է այն։

Թէ հայ մուսային սրտառուչ նուագ
Դեռ կ՝եղերգէ՝ հառաչանքս է այն,
Թէ Հայաստանի սեւ բաղդին հազագ
Լայ աղեկտուր՝ հեծեծանքս է այն,

Թէ իմս Հայրենեաց կիսամեռիկ չունչ
Դեռ ըսի տխուր՝ իմ ողբերս է այն.
Թէ լռիկ մնջիկ հեծէ անշըշունչ,
Ո՛հ անկարեկիր իմ լալքս է այն։

Եւ Հայկայ փառաց յօժար ողբերգուն
Հարազատ լացողն՝ իմ ձայնիկս է այն.
Զորս հազար տարուան պարծանաց գարուն,
Արձագանգ տուողն՝ աղաղակս է այն։

Իմ Հայաստանիս ցաւերուն հատոր
Ահա այս մաշած իմ կուրծքս է այն.
Սեւ սեւ թերթերուն էջ սրտակոտոր
Արտասուօք գրուած իմ աղիքս է այն։

Generated on 2016-06-14 08:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Թէ բանաս կարդաս արիւնոտ դաշտեր
Վարդագոյն ներկուած՝ իմ կողերս է այն.
Թ՝աչքէ անցընես շամփրած նիզակներ
Մահահոտ ցցուած՝ իմ թիկունքս է այն։

Թէ Հայկ եւ Արամ, Վահան Վարդաններ
Ինկած տեսանես՝ իմ ուժըս է այն.
Թէ զէնք, թէ զրահ թէ սուր թէ սուսեր
Փշրած կոտորած՝ ոսկորներս է այն.

Թէ արեամբ ներկեն ափունք Եդեմին
Նշխար քաջերուն՝ իմ բիրերս է այն.
Թէ քաղցր ու անբիծ ալիք Եփրատին
Լեղի են դարձեր՝ արտասուքս է այն։

Թէ վճիտ գետերն, աղբերքն արծաթի
Լալիք առուակեն՝ երակներս է այն,
Թէ Տիգրիս, Գոհոն, Փիսոն մռնչեն՝
Թէ պղտոր գնան՝ իմ արիւնս է այն։

Թէ սառնամանիք ձմրան բքաբեր
Լեռներն է պատեր՝ իմ գագաթս է այն.
Եւ քաղցրիկ զեփիւռն, անուշակ հովեր
Ցրտագին փչեն՝ զիմ նշիկս է այն։

Թէ վտակ վտակ ցօղէ զյիշատակ
Զայս տրտմավաստակ. աչքերըս է այն.
Թէ արտաճայնիկ երգէ զՀայաստան,
Կանչէ զՀայաստան՝ անկեղծ սէրս է այն։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 08:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թէ մթին խորշերն ու ձորեր լռին,
Սեւերով ծածկեն՝ մենաստանս՝ է այն.
Թէ ողբ կը կարդան վայրէն Եդեմին,
Ճնշած լերդերուս՝ արձագանգն է այն։

, Եւ Հայաստանիս հողերը ուխտիւ՝
Գինդ սիրով գրկողն՝ իմ ձեռքերս է այն.
Թէ կը համբուրեն կաթոգին սրտիւ,
Ո՛հ, մայրակարօտ շրթունքներս է այն։

Եւ կիսակործան տաճարն հայրենի
Սեւ սուգ է պատեր՝ տաղաւարս է այն.
Ուր չիջելավառ կանթեղ դեռ հիւծէ
Նուաղ առ նուաղ՝ իմ յոյսըս է այն։

Ուր տխուր նստեր, մազերն են ծածկեր
Իւր սեւուկ աչքեր՝ սերականս է այն.
Ձեռքերն ի ճակատ, կռնակն ի հողեր
Ցուսով կոթըներ՝ գերեզմանս է այն։

Ու երբ տեսնեմ զիմ հէգն Հայաստան,
Ի մէջ իւր փառաց՝ իմ բաղձանքս է այն.

Ս. Հ. Ֆէլէկեան

---

Generated on 2016-06-14 08:49 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ԵՐԳ ՄԻՈՒԹԵԱՆ

Մենք Հնչակեան ենք, եղբայր դուք Դաշնակցական
Մենք երկուքս էլ կուլանք ի սէր Հայկական։
Արիք եղբարք հոգւով սրտով միանանք,
Ձեռք ձեռքի տանք ապա գործենք արշաւանք։

Արիք եղբարք, միանանք,
Բաւական է մեր տանջանք,
Ի սէր ճնշուած Հայ ազգին,
Գործ դնենք մեր ճիգ ու ջան։

Մեր պապերն ալ ներկայիս պէս գործեցին,
Իրենց ձեռքով իրենց տունը քանդեցին.
Արիք եղբարք եւն.։

---

## ՀԱՅՐԵՆԻՔ

Օդդ սիրուն, ջուրդ սիրուն, դուն սիրուն,
Պէս պէս գոյնով ծաղիկներդ գալարուն.
Ձեն դադրիր աշխատելուց օրն ի բուն,
Քու հարազատ մշակներդ, Հայրենիք։

Երբոր լինի գարնանամուտ նոր գարուն,
Կը բազմանան վտակներդ, Հայրենիք,
Շաբ ի շաբ ցնծութեամբ երգերով զուարթուն,
Շարժվում են բանակներդ, Հայրենիք։

Generated on 2016-06-14 08:50 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Մարդիկ կուգան քու սարերը ման գալու,
Իբր որսորդ եղնիկներդ որսալու.
Երբ կը փոխեն երկը ուրախ կարդալու,
Քու սդազեաց սոխակներդ, Հայրենիք։

Դուն դրախտն ես, քեզի սուրբ գիրքը վկայ
Քու միջիցդ անմահութեան հոտ կուգայ,
Հազար ափսոս լուսաւորուած չեն գիմա,
Ժողովուրդ, զաւակներդ, Հայրենիք։

---

## ԿՈՒԺՆ ԱՌԱՑ

Կուժն առայ, ելայ սարը,
Զըգըտայ Ֆիդան եարը.
Ֆիդան եարը ինձ տուէք,
Զըքաշեմ ահ ու զարը։

Մեծ սարի հովին մեռնիմ.
Շէկ տըղի բոյին մեռնեմ.
Մի տարի ա չեմ տեսել.—
Տեսնողի աչքին մեռնեմ։

Բըլբուլը դարի վերայ,
Խընձորը ծառի վերայ.
Սիրած սիրածի տային,
Զոր գետնին՝ քարի վերայ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 08:50 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ՄՈՒՇ

Թո՛ղ երգէ բլբուլ, Մշու դաշտերում
Թո՛ղ վարդեր բացուին Սասնոյ լեռներում,
Թո՛ղ մեր թշնամիք սարսեն սարսափեն—
Գաղան ոսոխներ ճաքեն, տրաքուեն։

Մշու դաշտեր ծաղկունքով բացուած,
Հայու սերունդը կը պահէ Աստուած,
Ինչքան որ կ՝ուզեն թշնամիք թող գան,
Սասնոյ լեռներէն ի՞նչ պիտի ստանան։

Ինչո՞ւ չը ծաղկէ ծաղիկն անխնայ,
Այդ թշնամոցը ո՞վ կը վախենայ
Թող հայ աղջիկը երգէ վառվռուն,
Սուր զէնքը ձեռին՝ ջարդ տայ թուրքերուն...։

---

## ԷԳՈՒՑ

Ինձ մի տանջել, մի չարչարել, սիրական,
Լոկ խոստմունքդ իմ սրտին չեն բաւական.
Բոց աչքերդ ու շրթներդ վարդանման,
Երջանկութիւն խոստանում են յաւիտեան։

Քեզ տեսնելիս, ա՜խ, մոլորում է միտքս,
Ուժգին ուժգին թափ է տալիս վառ սիրտս,
Մէկ ջերմաջերմ, մէկ սառ վազում է քիրտըս,
Զօրութիւնս հատաւ ինձնից, սիրական։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 09:54 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ՄՈՒՇ

Թո՛ղ երգէ բլբուլ, Մշու դաշտերում
Թո՛ղ վարդեր բացուին Սասնոյ լեռներում,
Թո՛ղ մեր թշնամիք սարսեն սարսափեն—
Գաղան ոսոխներ ճաքեն, տրաքուեն։

Մշու դաշտեր ծաղկունքով բացուած,
Հայու սերունդը կը պահէ Աստուած,
Ինչքան որ կ՝ուզեն թշնամիք թող գան,
Սասնոյ լեռներէն ի՞նչ պիտի ստանան։

Ինչո՞ւ չը ծաղկէ ծաղիկն անխնայ,
Այդ թշնամոցը ո՞վ կը վախենայ
Թող հայ աղջիկը երգէ վառվռուն,
Սուր զէնքը ձեռին՝ ջարդ տայ թուրքերուն...։

---

## ԷԳՈՒՑ

Ինձ մի տանջել, մի չարչարել, սիրական,
Լոկ խոստմունքդ իմ սրտին չեն բաւական.
Բոց աչքերդ ու շրթներդ վարդանման,
Երջանկութիւն խոստանում են յաւիտեան։

Քեզ տեսնելիս, ա՜խ, մոլորում է միտքս,
Ուժգին ուժգին թափ է տալիս վառ սիրտս,
Մէկ ջերմաջերմ, մէկ սառ վազում է քիրտըս,
Զօրութիւնս հատաւ ինձնից, սիրական։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 09:59 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Էգուց, էգուց լըսում եմ քո բերանից,
Ցոյսըս հատաւ, հատաւ էսքան խափուելից
Քունս փախաւ, փախաւ իսպառ ինձանից,
Դե՞ւ ես դու չար, թէ հրեշտակ ես աննման։

Էլ մի՛ խաբիր ու մի՛ խաբուիր, անձկլիս,
Էգուցները միշտ նման չեն յետ գալիս.
Վա՛յ թէ էգուց աղի արցունք թափելիս,
Դու ինձ ճամբէս դէպի մըթին գերեզման։

Գամառ–Քաթիպա

---

## ՀԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Հայ երիտասարդներ, շուտ ըշտապեցէ՛ք,
Ռոպէն շատ թանկ է առաջ քալեցէք.
Օտարն հայերին կ՚ասէ վախկոտ են,
Քաջութեան կարմիր դրօշը պարզեցէք։

Մի՞թէ մենք Վարդանի ցեղիցը չենք.
Մէկս հազարի դէմ կը կուենք.
Մի ժամանակ մենք շղթայուած էինք
Այժմ ազատ ենք եւ ունինք շատ ղէնք։

Օգնութեան հասան քաջ Խանն ու Մուրատ,
Ճիշտ հայու զաւակ–ծնունդ հարազատ.
Մոկացի Գրիգոր եւ երկու Արշակ՝
Գնդակ էին թափում կարկուտից արագ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:07 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԼՃԱԿ

Ինչո՞ւ ապշած ես, լըճա՛կ,
Ու չեն խայտար քու ալեակք,
Միթէ հալւոյդ մէջ անձկաւ
Գեղուհի մը նայեցաւ։

Եւ կամ միթէ կըզմայլի՞ն
Ալեակդ երկնի կապոյտին,
Եւ այն ամպոց լուսափթիթ
Որք նըմանին փրփուրիդ։

Մելամաղձոտ լըճա՛կ իմ,
Քեզ հետ ըլլանք մըտերիմ,
Սիրեմ քեզի պէս ես ալ
Գրաւիլ լռել ու խոկալ։

Ո՛րքան ունիս դու ալի՝
Ճակատս ա՛յնքան խոկ ունի,
Ո՛րքան ունիս դու փրփուր՝
Սիրտըս ա՛յնքան խոց ունի փիւր։

Այլ եթէ գոգդ ալ թափին
Բոյլքն աստեղաց երկնքին,
Նըմանիլ չե՛ս կրնար դուն
Հոգւոյս՝ որ է բոց անհուն։

Generated on 2016-06-14 10:07 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԼՃԱԿ

Ինչո՞ւ ապշած ես, լըճա՛կ,
Ու չեն խայտար քու ալեակք,
Միթէ հալւոյդ մէջ անձկաւ
Գեղուհի մը նայեցաւ։

Եւ կամ միթէ կըզմայլի՞ն
Ալեակդ երկնի կապոյտին,
Եւ այն ամպոց լուսափթիթ
Որք նըմանին փրփուրիդ։

Մելամաղձոտ լըճա՛կ իմ,
Քեզ հետ ըլլանք մըտերիմ,
Սիրեմ քեզի պէս ես ալ
Գրաւիլ լռել ու խոկալ։

Ո՛րքան ունիս դու ալի՝
Ճակատս ա՛յնքան խոկ ունի,
Ո՛րքան ունիս դու փրփուր՝
Սիրտըս ա՛յնքան խոց ունի փիւր։

Այլ եթէ գոգդ ալ թափին
Բոյլքն աստեղաց երկնքին,
Նըմանիլ չե՛ս կրնար դուն
Հոգւոյս՝ որ է բոց անհուն։

Generated on 2016-06-14 10:08 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Հոդ լուսաւորք չեն մեռնիր,
Ծաղիկները հոդ չեն թոռմիր,
Ամպերը չեն թրջեր հոդ,
Երբ խաղաղ էք դու եւ օդ։

Լըճա՛կ դու ես թագուհիս,
Զի թ՚հովէ մ՚ալ խորշոմիս,
Դարձեալ խորքիդ մէջ խռով
Զիս կը պահես դողդղալով։

Շատերը զիս մերժեցին,
«Քնար մ՚ունի սոսկ» ըսին,
Մին՝ «Դողդոջ է, գոյն չունի»։—
Միւսն ալ ըսաւ.—«Կը մեռնի՛»։

Ոչ ոք ըսաւ.—«Հէ՛գ տըղայ,
Արդեօք ինչո՞ւ կը մըխայ,
Թերեւս ըլլայ գեղանի
Թէ որ սիրեմ, «չը մեռնի»։

Ոչ ոք ըսաւ. «Սա տըղին
Պատռենք սիրտը տրտմագին,
Նայինք ինչե՛ր գրուած կան...։»
—Հոն հրդեհ կայ, ոչ մատեան։

Հոն կայ մոխի՛ր...յիշատակ...

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:08 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ալեակքդ յուզուի՛ն թող լըճա՛կ,
Զի քու խորքիդ մէջ անձկաւ
Ցուսահատ մը նայեցաւ...։
Հայաստա՛ն, քաղցր իմ Հայաստան,

Պ. Դուրեան

---

## ՍԻՐՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Էյ ճան հայրենի՛ք, ինչքան սիրուն ես,
Սարերդ կորած երկնի մոմի մէջ,
Ջրերդ անո՛ւշ, հովերդ անուշ,
Մինակ պալէքդ արուն-ծովի մէջ։

Քու հողին մեռնիմ, անդին հայրենիք,
Ախ, քիչ է թէ որ մի կեանքով մեռնիմ,
Երնէկ ունենամ հազար ու մի կեանք,
Հազար էլ սրտանց քեզ մատաղ անեմ։

Ու հազար կեանքով քու դարտին մեռնիմ,
Պալէքիդ մատաղ, մատաղ քո սիրուն,
Մինակ մի կեանքը թող ինծի պահեմ,
Էն էլ քու փառքի գովքը երգելուն։

Ու արտուտի պէս վեր ու վեր ճախրեմ,
Նոր օրուայ ծեգիտ, ազիզ հայրենիք,
Ու անուշ երգեմ, բարձր ու զիլ գովեմ,
Կանանչ արեւդ, ազատ հայրենիք։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:08 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՄՇԵՑՈՒ ՈՂԲԸ

Ընկաւ տարին, հայոցս էլ փառք ընցաւ հետ.
Դրախտի սարէն գարուն յետին լարեւ ետ.
Կորիճք առան ղէնքեր, իջան տակ հողին,
Վա՛յ մեր դլխին, սեւ մութ էկաւ էն օրին։
Հայու աչքեր թող մեզ լա՛ն,
Ա՛խ, մեզ լան, վա՛խ, մեզ լա՛ն։

Հայերս գերի եղանք բախտին անողոք,
Աստուած, հրեշտակ, մարդ չլսեց մեր բողոք.
Մըր լարերու ծէն ծածկըւաւ Տարնոյ տակ,
Մշու դաշտեր պահես սրտիս հառաչանք։
Հայու աչուղք թո՛ղ մեզ լա՛ն,
Ա՛խ, մեզ լան, վա՛խ, մեզ լա՛ն։

Մըր աշխարհի քակվուկ չէնքերու ներքեւ
Ընստուկ մամ, պաղ, ճիժեր մնացին անարեւ,
Նօթի, տկլոզ, ա՛խ, չկայ տէր տիրական,
Անգութ քըրդու զուլմին եղած ենք խուրպան։
Ղարիպ աղբերք թո՛ղ մեզ լա՛ն,
Ա՛խ, մեզ լա՛ն, վա՛խ, մեզ լա՛ն։

Մատղաշ աղջիկ ու հարս հալաւ մի չունի,
Որ իր մարմին անօրէնին դէմ ծածկի.
Էնպէս դրած ձեռքերն աչից ամըչկոտ
Գութի, սիրոյ, ողորմութեան է կարօտ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:08 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հայ աղջիկներ թո՛ղ մեզ լա՛ն,
Ա՛խ, մեզ լա՛ն, վա՛խ, մեզ լա՛ն։

Կեցէ՛ք, Մշու դաշտի քամիք, քիչ մ՚կեցէ՛ք,
Մըր ողբաձէն բարեւն ալ ձըր հետ տարէք,
Ու՝ երբ ընցնիք Սահմանադրութեան կամարից,
Հոնկուց ըսէք դարիպ մըր հայ ախբերից—
Մըր արտասունք սրբեն թող մըր աչվընուց,
Կ՚անցնի տարին էլ չը լա՛նք, էլ չը լա՛նք։

---

## ՊԱՐԵՐԳ

Փափուրի ջա՛ն,
Մըտայ պըլպուլի բաղը
Փափուլի ջան,
Երգեցի անուշ տաղը։
Լուսնակը չողղ ա գցել
Իմ եարը դողղ ա գցել։
Փափուրի ջան եւն։
Բարակ քամին տալիս ա,
Ալ թողը դողղ ա գցել.
Փափուրի եւն։
Ծամեր ունիս ծիրանի
Քամին տայ թել թել անի
Սիրուն աչերըդ եարս
Խելք ու միտքիս կը տանի։
Փափուրի եւն։

Generated on 2016-06-14 10:08 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Բայց թէ լեզուէդ չահ չունի Հայաստան,
Մեծ ուսում առիր եղար գիտնական,

Թըքել ենք քո ալ լեզուիդ ալ վըրան։
Գովքովըդ լեցուած է մարդոց բերան,
Թէ ուսումէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քո ալ, ուսմանդ ալ վըրան։

Կուտամ քեզ պատիւ, կ'ունենաս դու յարգ
Ու կը դնեմ քեզ ազնիւ մարդոց կարգ.
Երբ օրօրանէդ մինչեւ գերեզման,
Զըգտումըդ լինի փրկել Հայաստան։

Գամառ–Քաթիպա

---

## ԱՌ ՍԻՐՈՒՀԻ

Գիշեր ցերեկ կը հառաչեմ,
Ա՜խ, օրիորդ քո սիրուդ,
Սեւ աչերուդ վարդ այտերուդ
Զարնուեցայ, ի՞նչ օգուտ։
Գիտես անգութ, որ պատանին
Չի դիմանար այս ցաւոյն,
Քեզի համար ալ չի դադրիր,
Աչքիս արցունքն օրն ի՛ բուն։
Քեզի համար թափառական,
Ես սար ու ձոր ինկեր եմ,
Քեզի համար ոչնչացեր,
Ոսկոր ու մորթ եղեր եմ.

Generated on 2016-06-14 10:09 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՀԱՅՐԻԿՆ ՀԱՅՈՑ

Եկել է գարուն, սոխակը սիրուն
Վարդի թըփի տակ, Հայրիկճան,
Երգէ Հայրենիք։

Միծեռնակ, բազէ, թըռչունք համօրէն
Քաշում են միշտ ա՛խ Հայրիկճան,
Օտարաց երկրէն։

Կռունկ մեր պանդուխտ՝ իւր բարձր դիրքով,
Փութայ ձայն տալ մեզ, Հայրիկճան,
Հայրենեաց սիրով։

Վասպուրականի երիտասարդներ
Եւ օրիորդներ, Հայրիկճան,
Սեւեր են հագեր։

Պատանիք, մանկունք, օրիորդք, կուսանք,
Հայրիկ կանչելով, Հայրիկճան,
Քաշեն հառաչանք։

Մեր սիրտն ու հոգին քու հոգւոյդ ղուրպան,
Հրեշտակ Հայ ազգի, Հայրիկճան,
Դարձիր Հայաստան։

Մեր սիրտն ու հոգին դու մորմոքեցիր,
Քաղցր, անուշիկ Հայրիկճան,
Թողիր գընացիր։

Generated on 2016-06-14 10:09 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Վոսփորի ափեր, գիտեմ, չես սիրում,
Վարագայ վանքիդ, Հայրիկճան,
Կարօտ ես քաշում։

Հրաժարական քարոզիդ տուիր,
Խեղճուկ սրտերնուս, Հայրիկճան,
Կըրակ վառեցիր։

Իսկ Երկուշաբթի, որ օրն էր Աւագ,
Ի սուրբ Յակոբէն, Հայրիկճան,
Դառնայիր Արագ։
Ո՛ւր որ ալ լինիս, ո՛ւր որ ալ երթաս,
Քու փայլուն Ջահէդ, Հայրիկճան,
Մեզի լոյս կուտաս։
Եւրոպ՝ ճանաչէ քու բարձր արժանիք.
Մինչ քու կարօտովդ, Հայրիկճան,
Կայրինք, տոչորինք։

---

## ՕՏԱՐՆԵՐԷՆ ՉԿԱՑ ՅՈՅՍ

Ո՛չ, եղբա՛ր, ո՛չ. օտարներէն չկայ յոյս,
Մի՛ աչուընիդ, մի՛ դարձընէք յայս յայն կոյս,
Օտարն զձեզ թէեւ սիրէ հիւրաբար,
Օտարն, ա՛հ, միշտ է օտար։

Օտարը ձեր վիշտ կը դիտէ անգորով,
Ի՞նչ փոյթ թէ դուք թափէք արցունք արիւնով,
Ով որ Հայ չէ, Հայուն ցաւեր նա չըզգար,
Ի՞նչ կը խաբուիք անդադար։

Generated on 2016-06-14 10:09 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Մի՛ դուք ձեր յոյս, մի՛ աւանդէք օտարին,
Մի՛ խոր վէրքերնիդ ցուցնէք անգութին,
Յարգահատա՞նս կը յուսաք օգնութիւն
Ձեր կը ծաղրեն մերկութիւն։

Գիտեմ ձեր բեռը ծանր է ծանրը. ո՛վ Հայեր,
Բայց կը կարծէ՞ք զայն վերցընեն օտարներ.
Թողէ՛ք զօտար, ուէք եղբայր եղբօր թեւ
Եւ զօրացէ՛ք անդեղեւ։ Խ. Նար-Պէյ

---

## ՁՄԵՌՆ ԱՆՑԱԻ

Ձմեռն անցաւ, եկաւ գարուն,
Հալաւ բանձրիկ սարերու ձուն.
Ճամբայ բացուաւ ղարիբներուն։
Իմ ղարիբէն խաբար չը կայ,
Սիրտըս ճամբին դաղար չը կայ։

Ղարիբ երկիր ամպ-մշուշ է,
Իմ ղարիբի սիրտ քնքուշ է ,
Ոտքը փոխէ քար ու փուշ է։
Հերի՛ք մնաս դարձիր վաթան,
Իմ սխպէ՛ր ջան, ղարիբ եա՛ր ջան։

Ջուրն է պրծեր, կուգայ սարէն,
Սարէն, ձորէն, իմ աչքերէն...
Իրար մի՛ տար սրտիս եարէն.
Դարձի՛ր վաթան, հողն անու՛շ է,
Հողն անու՛շ է, ջուրն անու՛շ է...։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:09 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԳԱՐՈՒՆ

Գարունն է եկել նաչխուն թեւերով,
Նաչխուն թեւերը պէսպէս ձեւերով,
Գոյն ծաղիկներ կարմիր ու սպիտակ,
Վարդ մեխակ, շուշան անուշ հոտերով։

Երկինք ու երկիր քեզ տօնեն, գարուն,
Զի ես քան զամեն եղանակ սիրուն
Նա անձրեւ ցօղէ առատ 'ի վերէն,
Դա օրհնեալ տայ քեզ երկւոր հաւերուն։

Ոսկի արեւը փայլէ քեզ վերէն
Կենսաբեր հովը փըչէ 'ի լեռէն,
Ա՛խ ազնիւ գարուն, եղանակ սիրուն,
Արդեօք դու ի՞նչ բախտ բերիր ինձ Տէրէն։

Գլխաքարշ երթամ 'ի պարտէզ այգուն,
Ա՛խ ու վա՛խ քաշեմ ես անդ օրն ի բուն,
Զի կայ ինձ հանգիստ, ցընծութիւն սրտիս,
Ես վաղ եմ մոռցել՝ զի՞նչ անդորը է քուն։

Մոռցած պատանքած գետնին կեանք տուիր,
Տերեւաթափ ծառին ստուերախիտ արիր,
Քեզ թռչնոց երամ հանդէս կանչեցիր,
Ի՞նձ մենակ խեղճիս էսպէս մոռացար։

Առաջ գնա՛, գարուն, դէպ հիւսիսն 'ի խոր,
Գընա՛, կանանչցո՛ւր դու անդ սար ու ձոր,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:09 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Որոց անհամբեր քեզ կան՝ ասո՛ւր բարեւ,
Քո հեշտ գալըստամբ նոցա զըւարճացուր։

Կուզաս գալ տարի դու ինձ կը գտնես
Ո՛չ 'ի մեր այգին եւ ո՛չ 'ի պարտէզ.
Այլ անզարթ քընով հողի տակ պառկած,
Գերեզմանաքար մը վրաս կը տեսնես։

Գ. Ց. Տ. Պատկանեան

---

## ԶԻՆՈՒՈՐԻՆ ԵՐԳԸ

Զինուորին երգերը, եղբարք լսեցէք,
Աշխարհիս բաները լաւ ճանաչեցէք։
Ոմանք հոյակապ պալատներ ունին
Ոմանք չէն դղեակ խաղաղ բնակին։

Մէկն ունի մեծ տըներ, միւսն գիւղ ունի,
Միայն խեղճ զինուորը ոչինչ բան չունի։
Շորերը թանկագին, փորը միշտ քաղցած,
Տուր ձիուդ միշտ զարի, ինքդ կեր չոր հաց

Թէ քաջ պատերազմիս՝ կըտան մեծ պարգեւ,
Թէ ուրդ կորցնես՝ կ'ասեն մնաս բարեւ։
Ո՛ւր գնամ ես մինակ աշխարքիս վրան,
Ահա քեզ վաստակ քսան մէկ տարուան։

Generated on 2016-06-14 10:10 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԱԿԻՆԻ ԵՐԳԸ

Առաւօտ արշալոյսին
Զորս կողմերնիս պատեցին,
Բոցաճաճանչ գնդակներ
Կարկուտի պէս տեղացին։

Արիւնների ներկերով
Խեղճ Ակինը ներկեցին,
Եւ հայերուն դիակներ
Ասդին անդին փռեցին։

Ա՛խ Հայրիկճան ուր տեղ ես
Էջմիածին բազմեր ես,
Հայրը արիւն է թափեր,
Եկուր Հայաստանը տես։

Կացիններու հարուածով
Դուռ պատուհան կոտրեցին.
Չի թողուցին փայլուն տուն,
Բոլորն ալ այրեցին։

Ա՛խ Հայրիկճան դուն եկուր
Սուրբ Խաչը ձեռքդ եկուր,
Տէրը խիստ զօրաւոր է
Թոյլ վրան դիր եկուր։

Generated on 2016-06-14 10:10 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ՖԷՏԱՆ

Եվ Ֆէտայի առ զէնքերդ,
Գնա դէպի բանակը,
Զօրքեր ցրուէ բանակ ջարդէ,
Ճաթեցուր չար Սուլթանը։

Ցոյց տուր որ Սերոբ Փաշային
Ցաջորդն ես դուն յոյս Հային,
Կռիւ, սարսափ, ահ ու վրէժ
Մահ տարածէ թշնամիին։

Երկու Արշակն ալ միասին
Քաջ տղամարդ Մէշէտին,
Ուխտ ու պայմաններ ալ ձեռին
Մեկնիլ հպօր Մուրատին։

Տաք երեսիդ հով դպչի,
Եվ սարերը արծիւի մօտ
Նոր սիսթէմի հետ տինամիտ
Գազան պետին թող դպչի։

Անյաղթ քաջեր հետը առած
Ամպրոպ կուգար օգնութեան
Ջիֆթէ ղումբիներն ալ հետը
Շէֆ Անդրանիկ քեզ մատաղ։

Գործեր գործենք որ ամաչէ
Կռապաշտ հայ հարուստը,
Անզգամը գուցէ զգայ
Թշուառ հայուն կորուստը։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:10 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Գործեր գործենք հեռու տեղեր,
Զարմանալի լուր առնէք,
Ընթերցողն ալ բայցադանչէ,
Շէֆ Անդրանիկ քեզ մատաղ։

---

## ՔԷԼԷ ՔԷԼԷ

Քէլէ, քէլէ, քէլքիդ մեռնիմ.
Քո գովական խելքիդ մեռնեմ։
Սիրաւոր լորիկ,
Վիրաւոր լորիկ,
Լորիկ,
Սեւաւոր լորիկ
Լորիկ ջան։

Քէ՛լէ, քէ՛լէ, սոյիդ մեռնեմ,
Քո չինարի բոյիդ մեռնեմ

Քէլէ, քէլէ, քողիդ մեռնեմ,
Քո լուսնկայ շողիդ մեռնեմ։

Քէլէ, քէլէ, բերնիդ մեռնեմ,
Քո սիրունիկ ձեռնիդ մեռնեմ,

Քէլէ, քէլէ, ձեռիդ մեռնեմ.
Քո հուր կըրակ սէրիդ մեռնեմ։

Քէ՛լէ, քէլէ, աչքիդ մեռնեմ,
Քո անուշիկ պաչիդ մեռնեմ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:10 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՏԱՂ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ

Եկա՛յք այսօր, որդի՛ք մարդկան,
Ցնծասցուք ձայնիւ միաբան,
Զի եկեալ է բարեկենդան.
Ածէ՛ք խըմէ՛ք կարմիր կթիան,
Գնա՛ լի՛ց բե՛ր գինու շուշան։

Ժամանակ է թազայ գառան,
Անուշ հոտ կուգայ ամառան,
Ընստէք, բարեկամք եւ եարան.
Ածէ՛ք խըմէ՛ք կարմիր կթիան,
Գնա՛ լի՛ց բե՛ր գինու շուշան։

Սեղան զարդարէք ամանով,
Քուֆթան պիպարով չամանով,
Ուրախացէ՝ք տեղով տանով,
Ածէ՛ք խըմէ՛ք կարմիր կթիան,
Գնա՛ լի՛ց բե՛ր գինու շուշան։

Մէջլիսըն ճըգեցէք տուզան,
Կարմիր գինով լըցէք քուզան,
Կանչէք ածէք ղարատուզան
Ածէ՛ք խըմէ՛ք կարմիր կթիան,
Գնա՛ լի՛ց բե՛ր գինու շուշան։

Գինդ լըցէք տօլու ի թասըն,
Զըլնի մարդոյ տաք վընասըն.

Generated on 2016-06-14 10:16 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Քանի եկած չէ մեծ պասըն,
Ածէ՛ք խըմէ՛ք կարմիր կթխան,
Գնա՛ լի՛ց բե՛ր գինու չուշան։

Շաբաթըս դարտկեցէք մառան,
Մեծ պասըն ձեզ ապաշխարան,
Շուտ արէք, ուտիսըն տարան.
Ածէ՛ք խըմէ՛ք կարմիր կթխան,
Գնա՛ լի՛ց բե՛ր գինու չուշան։

Բերէք տաղարան չարական,
Թողէք մանկունք ձայնիւ կարդան,
Ցիշեցէք նաղաշ Յովնաթան,
Ածէ՛ք խըմէ՛ք կարմիր կթխան,
Գնա՛ լի՛ց բե՛ր գինու չուշան։

---

## ՇՂԹԱՑԱԿԱՊ ՀԱՅ

Ի՞ զո՞ւր են ի զո՞ւր բըռնաւոր,
Ըսպառնալիք քո ամենայն,
Ո՛չ քո շղթայք չեն զօրաւոր
Ցընկճել զոգիս մեր Հայկական։

Ըզմարմին միայն զայս մարմին
Կարես գերել՝ քեզ ի նախատ.
Սակայն ոգիք մեր երկնային՝
Միրտք Հայկազեանց են միշտ ազա՛տ։

Generated on 2016-06-14 10:16 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Ազատ են, ազատ մեր լեզուք,
Մաղթել ըզչանթ Արդարութեան,
Ի գլուխ ձեր ո՛վ արիւնաբբուք՝
Որ աւրէք ըզՀայաստան։

Ի դժոխս անկցին թշնամիք,
Անհետասցին մինչ յաւիտեան,
Կեցցէ՛ անմահ մերս Հայաստան։

---

## ՍԱՐԷՆ ԵԼԱԻ

Սարէն ելաւ երկու մուխ,
Բոյիդ մեռնեմ,
Մինը հանք ա, մինը ծուխ.
Սոյիդ մեռնեմ։
Բոյիդ մեռնիմ,
Երկու սիրուն երեւաց,
Մինը չէկ ա, մինը թուխ։
Սոյիդ մեռնեմ։

Կապոյտ քուռակն առել ա,
Ոսկի սարքը ճարել ա.
Դէմի կանաչ սարի լանջ
Արեւի պէս վառել ա։
Իմ եարն ա շատ խորոտիկ,
Մէջքին ա ոսկի գօտիկ.
Աստուած սիրէք, աղբըրտիք,
Ինձ տարէք եարիս մօտ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:16 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ԻՂՁ ՊԱՆԴԽՏԻՆ

Թէ թեւ ունէի
Ո՞հ, կը թռչէի
Ազատ Մասեաց սարերն ի վեր ես ուժգին,
Անկէ ձեզ, Հայեր,
Կարդայի հրաւէր
Թ՝եկէք Հայեր, ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին,

Սիրենք ընկեր զընկեր՝ սիրենք կաթոգին
Թէ դեռ յիմ արիւն
Չի խառնուէր թոյն.
Դեռ երակացս մէջ աշխոյժ խաղային

Ո՛հ քանի հրպարտ
Կանչէի ազատ.
Թ՝եկէք, Հայեր, ըլլանք մէկ սիրտ, եւն.։

Թէ կեանք ունէի
Ո՛հ, կը լարէի
Թել քընարի բաղդին Հայոց անկենդան

Որ նա ձեզ խօսէր,
Ձե՛զ, պանդուխտ Հայեր.
Թ՝եկէք, Հայեր, ըլլանք մէկ սիրտ, եւն.։

Թէ սէր ըլլայի
Կամ անմաշ հոգի,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:16 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Կը կապէի Հայոց սրտերն անմեկին,
Ցայնժամ եւ նոքա
Մի որդիք Հայոց
Կ'ըլլան ի մի անշուշտ մէկ սիրտ մէկ մարմին.
Սիրենք ընկեր զընկեր, սիրենք կաթոգին։

Ս. Յ. Ֆէլէկեան

---

## ՀՈՎԻՒԸ ՍԱՐՈՒՄ ՏԽՐԵՑ

Հովիւը սարում տխրեց,
Սիրոյ երգը նուագեց.
Երգը վառ աչերին, երգը վառ այտերին,
Երգը վառ օրերին։

Հէ՛յ, խեղճ հովիւ, քեզ բաժին
Խոր ձորին մընացին։
Երգը վառ աչերին, երգը վառ այտերին,
Երգը վառ օրերին։

Ահա կուգայ նոր գարուն
Ծաղիկներով զարդարուն,
Սիրում եմ գոյնզգոյն ծաղիկներ
Հա՛, հա՛, հա՛, գոյնզգոյն ծաղիկներով։
Հէ՛յ, խեղճ հովիւ, քեզ բաժին
Խոր ձորին մընացին։
Երգը վառ աչերին, երգը վառ այտերին,
Երգը վառ օրերին։

Generated on 2016-06-14 10:17 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՏԱՐԱԳԻՐՆ

Ընդ աստեղօք օտար ափանց
Տարագրելոյս չի՛ք բերկրանք.
Լքեալ հոգւոյս, յոյս Հայրենեաց,
Դու ես միայն ըսփոփանք։

Օտար աստղեր լոյս չունին,
Օտար երկիր ինձ մըթին։

Օտար բոյսեր դառն ու անհամ,
Ջրեր պըղտոր ու լեղի,
Դաշտք, անապատք, հովիտք, արտեր,
Ու պարտէզներն անբերրի։

Օտար ծառեր չուք չունին,
Օտար ծաղիկք հոտ չունին։

Օտար երկիր երջանկաբեր՝
Ծանր այդ պայման ինձ համար.
Ձիւն ձրմեռ են իւր գարուններ,
Ցունի երբեք ինձ ամառ։

Օտար երկինք ամպոտ են,
Օտար սրտեր անգութ են։

Թէեւ օտար չընչեմ ես օդ,
Ցաւօք սահին իմ օրեր,
Քեզ, Հայաստան սիրակարօտ
Սիրտըս համայն քեզ նըւէր։

Generated on 2016-06-14 10:17 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Օտարութիւն փուշ ես դու,
Այլ Հայրենիք, վարդ ես դու։

Մ. Գափամաճեան

---

## ԵՐԳ ՕՐՕՐՈՑԻ

Քուն եղիր պալաս, աչքերդ խուփ արա՛,
Նաշխուն աչքերուդ քուն թող գայ վերայ,
Օր օր օր պալաս, օր օր ու նանի,
Իմ անուշիկիս քունը կը տանի։

Ոսկի խաչ վիզիդ՝ քեզի պահապան,
Նարօտ կապել է ծարէն տէր պապան,
Օր օր օր պալաս, օր օր ու նանի, եւն։

Մավի հիլուններ կապել եմ ես ալ,
Նազար չես առնուլ քուն եղի՛ր մի՛ լար։
Օր օր օր պալաս, օր օր ու նանի, եւն։

Օրոցքերդ օրեմ, օրով բոյ քաշիս,
Մըղկըտան ձայնով սիրտըս չի մաշես.
Օր օր օր պալաս, օր օր ու նանի, եւն։

Դուն ալ քուն եղիր. ինծի ալ քուն տո՛ւր,
Սուրբ Աստուածամայր, իմ զաւկիս քուն տո՛ւր։
Օր օր օր պալաս, օր՝ օր ու նանի, եւն։

Գամառ–Քաթիպա

Generated on 2016-06-14 10:17 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԱՐՏԻՆ ՄԷՋ

(Կրկներգ)

Հունձք կը ժողվեմ մանգաղով,
(Լուսնակը եարս է.)
Ակօս ակօս ման գալով։
(Սիրածըս հարս է։)
Գըլխերաց եմ ու բոպիկ,
(Անո՛ւշ են հովեր.)
Արտերուն մէջ թափառիկ։
(Մաղե՛րն են ծովեր.)
Ցորեն, կակաչ, կարօտով,
(Կաքաւը կուլայ.)
Կապեցի մէկ նարօտով։
(Ձեռքերն են հինայ։)
Հասկերուս մէջ, վերեւէն,
(Ասուպը անցաւ։)
Աստղեր միւռոն կը ծորեն։
(Դէմքը լուսացաւ։)
Քանի՛ խուրձեր՝ չաղերով՝
(Վարդերնին թաց է։)
Ես կապեցի խաղերով։
Ծոցիկը բաց է.)
Սիրտըս խոզանով մընաց.
(Կ'երթայ լուսնակը.)
Դէզերով լեռ եմ շինած։
(Սիրտս է կրակը։)

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:17 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մանգաղըս քարին եկաւ
(Եարըս եա՛ր ունի,)
Քարէն լորիկը թըռաւ։
(Հոգի՛ս կ՚արիւնի։)

---

## ԱՐՇԱՒԱՆՔ ԴԷՊԻ ՎԱՆ

Դատարանի դաշտում դատը վերջացաւ,
Մեր հայ մանկանց սրտեր յոյսով լեցուեցաւ։
Մեր հայկական մի խումբ կոտոլէն անցաւ
Արշաւենք, սիրելիս դէպի սիրուն Վան,
Արշաւենք, հայ տղերք, դէպի Հայաստան։

Հայդուկների ճամբան Դաւիթ Հաֆթեան
Կանչեցէք հայ տղերք պատրաստուած ինձ դան
Մէջքերնիս պատրօնտաշ, ձեռներ հրացան.
Արշաւենք, եւն.։

Եկէ՛ք դուք Հայ տղերք, վառուած սրտերով
Ճամբորդել սկսինք քաջ ընկերներով.
Հալածենք վատ Թուրքին փայլուն զէնքերով,
Արշաւենք, եւն.։

Կանչեցէ՛ք Հայ տղերք, յոյսով հաւաքուած
Ուղղենք մեր մաղթանքներ Ս. սրտէ բղխած,
Մեզի օգնական է Աստուած պետական։
Արշաւենք, եւն.։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:17 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Հայե՛ր, մինչեւ ե՞րբ արտասուենք,
Լանք յուսահատ, յիշենք, հեծենք.
Կնոջ անկ է ողբալ, կոծել,
Մեզի՝ քրտինք արիւն թափել՝

Կ՝ուզե՞նք փրկութիւն,
—Սիրենք գիտութիւն,
Սիրենք միութիւն
Ու ազատութիւն.
Սիրե՛նք Հայութիւն,
Սահմանադրութիւն։

Թող մեր աչեր հո՛ւր արձակեն,
Ու մեր լանջեր թընդան, տրոփեն,
Երակաց մէջ, փոխան արեան,
Հայրենասէր բոցք ընթանան։

Կ՝ուզե՞նք փրկութիւն եւն.։

Անցա՛ն, անցա՛ն սուգի դարեր,
Սէր, յոյս ու լոյս խայտան յեթեր.
Օ՛ն, շարժեցէ՛ք, ճակա՛տք արի,
Զարթի՛ք, առի՛ւծք, Հայաստանի։

Կ՝ուզե՞նք փրկութիւն եւն.։

Generated on 2016-06-14 10:18 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

## ԱՐՑՈՒՆՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Ոգիքս յանունդ հալեցան,
Մինչեւ ցե՞րբ ես ի քէն պանդուխտ,
Սիրտիս իմ ե՞րբ լրցի ուխտ։

Արդեօք աչքս անձկալից,
Երբեմն ըզքեզ տեսցե՞ն,
Աչքըս այս արտասուալից
Երբեք դադարեսցե՞ն։

Շուրթն իմ հողդ կենսաւոր
Տացէ՞ զհամբոյրն ուխտաւոր.
Արդեօք գլխուս, վշտակոծ
Հանգիցէ՞ քոյդ ի ծոց.

Հայաստա՛ն, սէր իմ Հայաստա՛ն,
Ոգիքս ի տենչդ հայեցան,
Մինչեւ ցե՞րբ ես ի քէն պանդուխտ
Սրտիս իմ ե՞րբ լրցի ուխտ։

Հայաստա՛ն, իմ պերճ Հայաստան,
Ո՛վ երկիր նուիրական.
Հընոց կենաց եւ որորան,
Հաշտարար երկնից խորան,

Ի քէն սուրբ հովանիս
Ո՞ զնըժդեհս տանէր զիս,
Ո՞ ի ստուերսդ երազմոյն
Ըզնախնեացս հեղցէ քուն

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:18 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Անմահութեանց, վեհազուն,
Ծընծել անդ զօդ եւ զարիւն,
Եւ զաստեացս վշտաց
Գընանել կատարած։
Հայաստա՛ն եւն.։

Հայաստա՛ն, սիրուն Հայաստան,
Ցուսոյ խարիսխ մարդկութեան.
Ակնկալեաց դու իմ լոկ վայր
Ցոր աչք իմ ձգին յամայր։

Ո՞ զմին գէթ տայր լընուլ
Զիմս ըղձից ի քեզ հոյլ.
Ո՞ զփափաքս յարատեւ
Իբր ըզսիւք մի թեթեւ,

Հասուցանէր մինչ առ քեզ.
Եւ զայս ողջոյնս սըրտակէզ
Եւ զհառաչս ոգւոյս բիւր,
Զոր ընդ բլուր տա՛յր ի սփիւռ.
Հայաստա՛ն եւն.։

Հայաստա՛ն, իմ վեհ Հայաստան,
Երանութեան օթարան.
Ո՛ տայր զաւուրս իմ ցաւալիս
Փոխել, ո՛հ, յերանելիս.
Ոչ փառօք վայլելով՝
Վաղանձուկ ոչ ոսկով,

Generated on 2016-06-14 10:18 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Այլ զքեզ տեսանել
Սուրբ ըզսարօք ողջունել,
Զաւերակօք քո փարել
Եւ վհարցս անդուստ վայն լսել.
Եւ զնոցիս հետս անանց
Համբուրել գետնամած:
Հայաստա՛ն եւն.:

---

## ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ

Թէ իմ ալեւոր հերքը սեւնային,
Ոյժս ինձ հետ գար, կտրիճ դառնայի.
Նըժոյգ ձի նըստած, պեխերս ոլորած,
Զեռքս թուր առած ես դաշտ կ'երթայի:

Ես դաշտ կ'երթայի, դաշտ Աւարայրի,
Ողողած, ցօղած Հայոց արիւնով,
Ազգ իմ սիրական, դու ազգ Թորգոմեան,
Քու կորցրած թագը քեզ յետ կուտայի:

Կ'ասէի Հայոց օրիորդներին.
Ծախեցէ՛ք հագի ձեր թանգ շորերը,
Թողէ՛ք պաճուճանք, զարդ մարգարիտներ,
Ժանգոտած ու դուլ են մեր թըրերը:

Տուէ՛ք բեհեղեայ մեզ ձեր շապիկը.
Որ մենք փաթաթենք մեր մարմնու վէրքը,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:18 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Վիրակապ հիւսէք դուք ձեր մազերից.
Այսպէս յայտնեցէք դուք մեզ ձեր սէրը։

Թէ ես լինէի հարուստ մեծատուն՝
Սընտուկներս լի ոսկւով արծաթով.
Շատերի նըման ես չէի լինէր,
Երբեք ազգասէր ունայն խօսքերով։

Շանբանեա գինու, ալմաս խաչին տեղ
Կ'առնէի առատ գնդակ ու վառօդ,
Արձակ համարձակ կ'երթայի հանդէպ,
Հայատեաց ազգին անթիւ զօրքերով։

Թէ ես լինէի մի երկրի իշխան,
Կուտայի զօրքիս սաստիկ հրաման,
Շուտաքայլ երթալ դէպի Հայաստան,
Խեղճուկ Հայ ազգին լինել օգնական։

Բայց՝ եթէ մի օր, մի ժամ, մի րոպէ,
Աստուած լինէի մեր հողագնդին,
Ի'նչ սուր ալաքներ պիտի չաղ տայի,
Մեր արիւնարբու թշնամեաց գլնդին։

Ներեցէք՝ վաստ ու մոլի, Պարսիկ ոխերիմ,
Դարաւոր ոսոխ դու Ցոյն կրօնամոլ.
Գիտցի'ր որ քի մայն երկայրի սրից,
Անմաս չեն մնալ ոչ մի ձեր որդին։

Գամառ–Քաթիպա

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:18 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՄԱՀԱՄԵՐՁ ՀԱՅՐԵՆԱՍԷՐԸ

Ազնիւ ընկեր, մեռանում եմ,
Բայց հանգիստ եմ ես հոգւով.
Իմ թշնամիքս ես օրհնում եմ,—
Օրհնում եմ քեզ Աստուծով։

Հեռանում եմ, անգին ընկեր,
Զգնահատուած ոչ ոքից,
Բայց հաւատեաւ անձնանուէր
Ազգիս մըշակ կը հաշուիմ։

Ազնիւ ընկեր, չը մոռնաս,
Անդաւաճան ջերմ սիրով
Ես սիրել եմ իմ հայրենիք.—
Գընա՛ եւ դու նոյն շաւղով։

Խեղճութիւնը Հայոց ազգի
Կարեկցաբար մըտածիր՛,
Ոսկեգրքոյկն Եղիշէի
Քաջ առաջնորդ քեզ ընտրիր։

Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան՝
Ազատ կամքով ու խղճով,
Այնտեղ Վարդան, անմա՛հ Վարդան՝
Իւր խընկելի քաջերով։

Հայրենի՛ք,—սեղան սրբութեան—
Ես՝ Աստուծոյ առջեւ

Generated on 2016-06-14 10:19 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Շատ կ'աղաչեմ, շատ կ'արտասուեմ
Որ ծադէ քեզ նոր արեւ։

Իմ մըտերի՛մ, մահս մօտ է,
Բայց հանգիստ եմ ես հոգւով,
Որովհետեւ խիղճս արդար է,
Ճշմարտութեան ջատագով։

Մ. Շահազիզեանց

---

## ՎԱՆԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Մի գեղեցիկ պարզ գիշեր էր՝
Երկինքը լի աստղերով.
Եւ լուսինը մեղմ փայլում էր
Կաթնանըման իր լոյսով։

Նա նայում էր լռիկ մնջիկ
Իբրեւ մի կոյս դիպի Վան.
Նըրա աչքին երեւում էր
Բիւր ցաւալի տեսարան։

Նա տեսնում էր անթիւ քիւրդեր
Բռնած սուր, թուր, հրացան
Կոտորում են կողոպտում են.
Աւերում են անտէր Վան։

Եւ կարծեմ թէ վեր երկնքից
Խօսում էր այդ լուռ վկան.
«Վրայ հասի՛ր, Հայ ազգասէր,
Ձեռքից կ'երթայ Հայաստան»։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:37 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ԳԱՐՈՒՆ

Սիրո՛ւն գարուն, կանա՛չ գարուն,
Քեզ ի՞նչ սրտով ողջունեմ.
Դու մեզ բերիր լաց ու արիւն—
Էլ ես ուրախ երգ չունեմ։
Երգում էի ջերմ կարօտով,
Գովքերդ անում ամէն օր,
Երբ մեր երկրում քո քաղցր հոտով
Միշտ լցուած էր սար ու ձոր։
Երգում էի քնարս լարած՝
Մեր կեանքի լոյս օրերում,
Երգում էի բըլբուլ դառած՝
Քանի վարդ կար հայ երկրում...
Ա՛խ, ի՞նչ սրտով երգեմ հիմիկ,
Քեզ ի՞նչ սրտով ողջունեմ.
Փուչ են դառել վարդ ու ծաղիկ,
Էլ ես ուրախ երգ չունեմ։
Մեր տունն ու տեղն—հող, աւերակ,
Մեր լոյս օրերն խաւարել.
Մեր յոյսերը սեւ մոխրի տակ,
Մեր դարդերը ծով դառել...
Ամպութուխպ է եկել, պատել
Խեղճ եղբօրս սեւ կեանքին.
Անվերջ լալուց արցունքն հատել.
Էլ վերջ չկայ տանջանքին...
Սիրուն գարուն, կանանչ գարուն,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:37 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Քեզ ի՞նչ սրտով ողջունեմ.
Դու մեզ բերիր լաց ու արիւն—
Էլ ես ուրախ երգ չունեմ։

Ա. Ծատուրեան

---

## ԱՔՍՈՐԻ ԵՐԳԵՐ

Հալածուած ենք Հայաստանի լեռներէն,
Ո՛վ չի վախնար հուրով սուրով մեռնելէն։
Դար ու սարեր անցանք դադար չունեցանք,
Դիակներէն անցանք արցունք չունեցանք։

Արեւին տակ մեռնիլն, Աստուա՛ծ իմ, վատ է,
Գուտ մը ջուրի մեր չրթունքը կարօտ է...։
Մանուկները կուրծքերուն վրայ մորթեցին,
Հորերուն մէջ ողջ մայրերը լեցուցին...։

Ո՞ւր է մայրի՛կ, ո՞ւր է իմին հայրիկը,
Ձե՞ս գիտեր որ վատ է թուրքին դանակը։
Ո՞ւր է, մայրիկ, ո՞ւր է անոր դիակը,
Արցունքն իջաւ մինչեւ սրտիս յատակը։

Կոյս աղջիկներ իրարու ձեռք բռնեցին,
Իրենք զիրենք Եփրատ գետը նետեցին։
Երկ՝ օր վերջն ալ խեղճ մայրերուն գիտցուցին
Խեղճ մայրերն ալ անմխիթար մնացին։

Մոխիր դարձան այն պատուական տունները,
Արիւններով ներկուեցան քարերը։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:38 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ԵՐԳ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Ահա՛ բաժակ ուրախութեան,
Ի սէր յաւերժ միութեան,
Զի վայելուչ որդիք հայկեան,
Մէկ տեղ հրճուին եւ ցնծան։
Կեցցէ՛ սէր եւ միութիւն,
Կրեմք մի սիրտ, մի արիւն։

Վերցուր աչքդ յերկնից կամար,
Փայլի հեռուն աստղ մը պայծառ.
Եւ դու ո՛ Հայ զարթի՛ր սիրտ առ
Հայոց բաղդն ալ չէ խաւար.
Կեցցէ՝ սէր եւ միութիւն,
Կրեմք մի սիրտ, մի արիւն։

Բա՛ւ է այսչափ բաժանում.
Ըլլամք ուրախ եւ խնդում,
Նախանձ վրէժ ձեզ թողում,
Անդունդք եւ վիհք անհատնում։
Կեցցէ՝ սէր եւ միութիւն,
Կրեմք մի սիրտ, մի արիւն։

Փորձ մը ըրինք բաժանման,
Փորձ մ՝ալ ընենք միութեան.
Լեցուի փափաքդ Հայաստան,
Տես որդիք քո միանան։
Կեցցէ՝ սէր եւ միութիւն,
Կրեմք մի սիրտ, մի արիւն։

Generated on 2016-06-14 10:38 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՆՈՐ ՆՇԱՆԱԲԱՆ

Հ. Ս. Ռ. եւ Կ—Նոր նշանաբան՝
Համայն Հայերու համերաշխութեան,
Ի ծառայութիւն Ազգիս պէտքերուն
Հայրենի երկրին բարձրացման Հայուն
Հ. Ս. Ռ. եւ Կ—Հայ սահմանադիր՝
Ռամկին կուսակից միշտ պարտինք լինիլ.
Զափ մեր իրաւանց ըլլայ ազգիս պէտք—
Հայ գաւակի օգտին մեր ջանքեր զոհենք։
Հ. Ս. Ռ. եւ Կ—Զորս թեւն Հայ խաչին,
Կենն է պատուանդան, Ռան ձախ, Սէն յաջին
Գլխուն վրայ Հայ ի կուրծին վառ սէր։
Փարինք այս խաչին ազգիս անձնուէր։
Հ. Ս. Ռ. եւ Կ—Հայ դըրօշակին
Զորս գունոց վրայ պէտք է ծածանին,
Որ Հայ սըրտից մէջ միշտ թըրթռան
Հայ Սէր Ռամկավար Հայոց Միութեան։
Հ. Ս. Ռ. եւ Կ—Մեր Դրօշ քառածալ՝
Հայուն տան վրայ կանգնի պանծացեալ,
Օտարք իսկ տեսնեն Հայ...կուսակցութեան
Բազմազան արդիւնքն ընդ աշխարհս համայն։

Ա. Մ. Ի.

Յունվար 9, 1909

Generated on 2016-06-14 10:38 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# Ի ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ա՛լ թող դադրին արցունք հայուն աչքերէն,
Փոչոտ քնարն վար առնուի ա՛լ որմէն
Եւ սիրարծարծ նուագս իր լարք թող հնչէ,
Զի հայք այսօր սէր միութիւն կը դոչեն։

Այն սիրոյ նշան
Մեր ընկերութեան
Մաղթենք բարձր ձայն
Կեցցէ՛ յաւիտեան։

Հայեր, երթանք լեռ, ձոր զըւարթ պարելով,
Հայաստանի մեր սիրելի հէգ մօր քով.
Զմեզ բաժնող խաւարն վանենք եւ յառաջ
Երթանք սփռել ծաղկունս ոտքին ընդ առաջ։

Հայրենեաց ի նուէր
Պատրաստ մեր սրտեր
Մեր ընկերութեան
Կեցցէ՛ ձայն կուտան։

Մեր հայրենեաց արիւնաղանգ սուրբ դաշտեր,
Ե՞րբ կը բուսնին արդեօք փչոց տեղ վարդեր.
Ե՞րբ կը կանգնին աւերակներն եւ հայեր
Ճաշնան իրանց պարտք, իրաւունք, այս ուխտ մեր։

Generated on 2016-06-14 10:38 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Հայրենեաց ի նուէր
Պատրաստ մեր սրտեր
Սէր եւ միութիւն
Կեցցէ՛ ձայն կուտան։

Մ. Փորթուգալեան

---

## ԱՐԵԻՆ ԻՋԱՒ

Արեւն իջաւ սարի գլխուն,
Դար ու դաշտում լոյս չը կայ.
Հաւք ու թռչունք մտան խոր քուն.—
Ա՛խ, ինձ համար քուն չը կայ։

Լուսնակն ընկաւ երթըկից ներս,
Կշիռքն ելաւ երկնքում,
Ջով հովերն էլ մըթնշողէս
Աստղերու հետ են զրցում։

—Սիրուն աստղե՛ր, անուշ հովեր,
Եարըս ո՞ւր ա՛ էս գիշեր,
Պարզ երկնքի նշխուն աչե՛ր,
Եարիս տեսա՞ք էս գիշեր...
Լուսը բացաւ, դուռը բացաւ,
Ամպ ու զամպ է, ձօն կուգայ.
Ալ ձին եկաւ, անտէր եկաւ,
Ա՛խ, եարս ո՞ւր ա՛, տուն չի գայ։...

Ա. Իսահակեան

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:38 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ԶԵՓԻՒՌ

Դու փափկաթեւ մանկիկ զեփիւռ,
Աղբերց վրայէ լուսակարկաչ,
Անուշ հոտով ծաղկանց ըսփիւռ,
Ի՞նչպէս թրուչիս ինձ ընդ առաջ.
Ու խունկ եւ զով ընծայելով,
Զիս կը պահես հեզիկ շնչով։

Ո՛հ, կը սիրեմ ըզքեզ հողմիկ,
Երբ դու փութաս ինծի գալու,
'Ի պար, 'ի թռիչ, 'ի սոյլ մեղմիկ,
Այրած ճակտիս ինձ այցելուս։
Ծաղիկ հոգւոյս քեւ զովացած,
Ծիլ ծիլ բացուի 'ի լոյս կենաց,

Սլացի՛ր փափկիկ դու սուրհանդակ,
Լուր տուր հովտին ու ծործորին.
Եւ անտառաց բարձրադիտակ,
Ուր երամով սոխակք թառին.
Թէ մըտերիմն իւրեանց եկաւ.
Բիւր ըզմայլմանց յիշատակաւ։

Ո՛հ, կորսըւած իմ հաճոյքներ,
Հոս վերստին գըտնեմ ըզձեզ.
Ծառոց շըքով էք ծածկըւէր,
Ու փրփուրով առուակին հեզ.
Ահա կայտռէք 'ի յայս ծլմակ,
'Ի յայս թըփուտ հովանոցակ։

Generated on 2016-06-14 10:39 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Հոս դառն հոգեր մէկիկ մէկիկ,
Ճակատէս 'ի բաց հեռանային.
Ու փունջք ժամուց գեղապարիկ,
Սիրտըս թեթեւ օրօրէին.
Եւ բնութիւն մայր որդեսէր՝
Քնքուշ գրկաց մէջ զիս գըգուէր։

Հոս ճեմէին երեկոյեան,
'Ի զով ըստուեր պար մը կուսից,
Մազերը հովուն բազմաբուրեան,
Սիրտք ընծայուած հեշտ վայելից,
Շող լուսնակին կոյսն ու ծաղիկ,
Զիրար շոյեն սիրատարփիկ։

Մտերմութի՛ւն, սէր կրակուքոց,
Ի՞նչ անուշ էք յոյս տեսարան,
Ուր դալարիք ձեզ հանգըստաց,
Ու անհուն դաշտեր ըզբօսարան.
Մտերմութի՛ւն, ինձ երանի,
Թէ հոս ծոցէդ հոգիս թառանի։

Դու փափկաթեւ մանկիկ զեփիւռ,
Աղբերց վրայէն քաղցրակարկաչ,
Անուշ հոտով ծաղկանց ըսփիւռ,
Թըռի՛ր, թըռի՛ր ինձ ընդ առաջ,
Ու խունկ եւ զով ընծայելով,
Պատմէ չորս դիս հեզիկ շնչով։

Մ. Պէշիկթաշլեան

Generated on 2016-06-14 10:39 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ԱՆԻ ՔԱՂԱՔ

Անի քաղաք նըստեր կուլայ,
Զըկայ ասող, մի՛ լար, մի՛ լար.
Կասեն թէ չէ՛ թող նըստի լայ,
Ա՛խ ե՞րբ կըսեն, մի՛ լար, մի՛ լար.

Շատ ցաւերով կ՚այրիմ, տապիմ,
Զըկայ մէկ մարդ հաւատարիմ,
Որ խըղճալոյս գայ մօտենայ,
Գոնէ ասէ, մի՛ լար, մի՛ լար։

Ա՛յ հայ տըղայ, խըղճա՛ ինծի,
Տե՛ս քո Անին թէ ի՞նչպէս է,
Հերիք ես լամ, դուն չը գըթաս,
Զէ՛ քո Անին շատ ափսոս է։

Ախ ու վախով օրերս անցաւ,
Լալով աչերս կուրացաւ,
Որբ մընալն ինձ վիճակուեցաւ։
Բաղդըս բընաւ զիս մոռացաւ։

Կորուսեր եմ թագաւորներ,
Ժողովեր եմ գլխուս բուեր,
Որ միշտ կ՚երգեն, «Անին անցա՛ւ,
Անին անտէր աւերեցաւ»։

Ա՛յ Հայ տըղա, խըղճա՛ եւն.։
Անին եմ շատ մարդաբընակ,

Generated on 2016-06-14 10:39 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Մընացեր դառն աւերակ.
Իմ լացն, իմ կոծ, իմ աղաղակ,
Անտէր որբոցըն նըմանակ։

Երբեմն էի շատ աննըման՝
Հայոց քաղաք արեւելեան,
Այժըմ աւեր հիմնայատակ,
Ներստեր կուլամ ես միայնակ։
Ա՛յ Հայ տըղա, խըղճա՛ եւն.։

Եկար, տեսար, դարձեր կ՝երթաս,
Լալով կ՝ասես «Բարեաւ մընաս».
Աստուած սիրես զիս չը մոռնաս
Մասիս սարին երբ մօտենաս.

Ասա՛ իմ քաջ Արարատին,
«Ներստեր կուլայ քո խեղճ Անին».
Կասես, ե՞րբ դաս աւետիք տաս.
Թէ՝ «Իմ Անին, հերիք է լաս»։

Ա՛յ Հայ տըղա, խըղճա՛ եւն.։
—Ողբերգութիւնդ հերիք Անի,
Թըշուառացեալ դու լաս քանի՛
Օր մը գըթած աչն Անեղին
Մարդասիրեալ առ քեզ հայի։

Գան ժողովին Հայք միաբան,
Գեղեցկանաս շատ աննըման,

Generated on 2016-06-14 10:39 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Հա՛պա մի լար սիրուն Անի,
Անի, Անի, իմ ջան Անի։

Ա. Վ. Արարատեան

---

## ՄՇԵՑՈՑ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ

Երբոր մայրը երկունքով
Աշխարհ բերէ երէխայ,
Հայրը որդուն մի սրբած
Պիտի դաշոյն տայ ընծայ։

Երբ երեխան մեծանայ,
Խաղալիքներու փոխան՝
Հայրը ձեռքը պիտի տայ
Մի մահաբեր հրացան։

Երբոր տըղան վարժատուն
Գայ ժամանակ երթալու,
Նախ սուր խաղցնել եւ ապա
Պիտ՝ սորվեցնենք կարդալու։

Կարդալ, գրել լաւ բան է...
Բայց որ հասաւ քննութիւն՝
Աշակերտին հարցուցէք—
Վաթել գիտէ նա արիւն։

Լոկ դուք այսպէս յուսացէք
Փըրկել խեղճուկ Հայաստան,
Ազատ, անկախ մարդ երբէք
Լինելու չէ մուրացկան։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:39 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ԿԱԽԱՂԱՆ

Բերին աթոռ ելաւ, չորս կողմ նայեցաւ,
Կայծում են աչերը, լուռ է ամբոխը.
Լուռ է դահիճը։ Ցնցուեց եւ այսպէս խօսեց.

«Ընկերնե՛ր, ազատ ընկերներ,
Ձեր կարգն է արդ, ձեր ժամն է հնչում։
Դէ՛հ, ի զէն ընկերներ, արդ ի՛ զէն,
Դէ՛հ յառաջ, ընկերներ, արդ յառաջ։
Քեզ, հէ՛զ Հայրենիք, քեզ են յառած
Մեր սուգ աչեր, մեր սուգ աչեր։

Քեզ համար առինք մենք հրացան
Եւ մերկացուցինք մեր սուր սուրեր։
Թող թշնամին դեռ խրոխտայ.
Հեռու չէ ժամը կ՝ընկնի նա,
Եւ մենք, որ այսքան զոհեր տուինք,
Մենք պիտ՝ հասնինք մեր իտէալին»։

Լռեց։ Ձուան առաւ վիզը անցուց...
Լուռ է ամբոխը...լուռ է դահիճը...
Աթոռը հրեց, ցնցուեց, ուղղուեցաւ,
Օրօրուելով այսպէս նա խօսեց.

«Ընկերնե՛ր, ազատ ընկերներ,
Ձեր կարգն է արդ, ձեր ժամն է հնչում։
Դէ՛հ, ի զէ՛ն, ընկերներ, արդ ի զէն.
Դէ՛հ, յառաջ, ընկերներ, արդ յառաջ։
Վրէ՛ժ, վրէժ ենք ուզում, վրէժ պահանջում,

Generated on 2016-06-14 10:39 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Եթէ ճակտովս արտօսրաշօծ
Ձիս պատանքի մէջ ցուրտ գերեզմ
Փաթթեն, դնեն սեւ դագաղը,
Գիտցէ՛ք, որ դեռ կենդանի եմ։

Եթէ հնչէ տըխուր կոչնակ,
Թրթռուն ծիծաղն մահու դժխեմ,
Դագաղս առնէ իր համբ քայլ,
Գիտցէ՛ք, որ դեռ կենդանի եմ։

Եթէ մարդիկն այն մահերգակ
Որք սեւ ունին ու խոժոռ դէմ,
Համասփռեն խունկ ու աղօթք,
Գիտցէ՛ք, որ դեռ կենդանի եմ։

Եթ՝ հարդարեն իմ հողակոյտ ,
Եւ հեծեծմամբ ու սգալէն
Իմ սիրելիքը բաժնըւին,
Գիտցէ՛ք, որ դեռ կենդանի եմ։

Իսկ աննշան եթէ մնայ
Եբկրի մէկ խորշն հողակոյտն իմ,
Եւ յիշատակս ալ թառամի,
Ո՜հ, այն ատեն ես կը մեռնիմ։

Պ. Դուրեան

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:44 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ՃԱԽԱՐԱԿ

Մանի՛ր, մանի՛ր, իմ ճախարակ,
Մանիր սպիտակ մալանչներ
Մանի՛ր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցաւեր։
Զէթ եմ ածել ականջներդդ
Նոր չինել եմ չրտրուիկ,
Դե՛հ, չուտ չարժիր լայն թեւերդդ
Ոստեր չինիր սրրուլիկ։
Մանի՛ր, մանի՛ր, իմ ճախարակ,
Լիսեռնիկդդ պրտտիր,
Մանի՛ր թելեր հաստ ու բարակ,
Իլկիդ վրայ փաթաթիր։
Տիգրանիկըս գուլպայ չունի,
Հանդ է գնում ոտաբաց,
Գաբրէլըս չուխա չունի,
Միշտ անում է սուգ ու լաց։
Մանի՛ր, մանի՛ր, իմ ճախարակ,
Մանի՛ր սպիտակ փաթիլներ,
Մանի՛ր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցաւեր։
Զրուալ չունինք, չաթու չունինք,
Ոչ սամոտէն, ոչ պարան,
Այսպէս աղքատ դեռ եղած չենք,
Կրտրրուել է ամէն բան։
Դեռ հարս էի որ գործեցի

Generated on 2016-06-14 10:44 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Քանի կարպետ խալիչա,
Բայց դըրանցից չուտ զըրկուեցի,
Հիմա չունիմ մի քեչա։

Կարմիր օրս երբ սեւացաւ
Եւ պարտք մընաց թէեւ քիչ,
Պարտատիրոջ սիրտն էլ սեւցաւ.
Եկաւ տարաւ ամէն ինչ։

Մանի՛ր, մանի՛ր, իմ ճախարակ,
Մանի՛ր սպիտակ քուլաներ,
Մանի՛ր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հագամ իմ ցաւեր։

---

## ԶԱՐՆԵ՛ՆՔ ԶԱՐՆԵ՛ՆՔ

Զարնե՛նք, զարնե՛նք անխնայ
Հոսի՛ արիւն.
Հոսեց մերն մինչ հիմայ,
Արդ թշնամուն։

Կտրիճնե՛ր, քոյրեր կոյս,
Կռիւն է մեր միակ յոյս։
Բաւ գերութիւն։

Օրհնեա՛լ է մեր Աստուած,
Կ'օրհնէ մեր զէնք,
Մեծ օրուանս այս հասած
Երջանիկ ենք։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:44 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Անխտիր ջարդելի՛
Ջարդարարն երէկի,
Վատոգին նենգ։

Մեր հոգիք, ընկերնե՛ր,
Ձեզի զուրպան.
Ձեզի հետ անվեհեր
Կռուիլ կ՚երթան.
Երբ հատնի մեր փամփուշտ,
Հատնի՛ վատն արիւնռուշտ,
Գազա՛ն անկուշտ։

Բահ, բրբիչ եւ արօր
Մընան անտէր.
Եզերք, եւ ո՛չ արօր
Երգեն մայրեր.
Վատն անխիղճ սանսատակ
Կորչի անյիշատակ։
Հապօ՛ն, քաջե՛ր։

Թող լսէ՛ մարդկութիւն
Լացէն մեր ետք
Մեր վերջին արութիւն.
Օ՛ն, Հայկայ ճետք։

Մարդ ւ՚ երկինք են անհոգ.
Թշնամին՝ անողոք։
Ընջուի՛ իր հետք։
Զարնե՛նք, զարնե՛նք եւն.։

Խոսրով

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:44 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Բարեկամի, դիպուածի
Եւ գուցէ վաղն ան ըլլայ

Զեռքերուն մէջ կը մեծնայ։
Ռազմիկ մ'հրաչեայ, չանթող ամպ,
—Մեզ մսուրն Ցիսուս մը կուտայ՝
Իսկ Հայ օրոցքն՝ Ապստամբ...։

---

## ՆԱԽԱՆՁ

Երբ կը տեսնեմ աչերուդ փայլ,
Երբ կը լսեմ լեզուիդ դայլայլ,
Կ'ուզեմ աշխարհ ըլլայ խուլ, կոյր,
Որ ես միայն քեզ լըսուիմ, քոյր,
Երբ կը տեսնեմ ծոցիդ երեր
Երբ կը լըսեմ հոգւոյդ երգեր
Կ'ուզեմ դառնալ մարտիկ անյաղթ
Եւ ի բաց վանել պահպան հրեշտակք։

Երբ կը տեսնեմ բիբերդ ի վեր,
Երբ կը լըսեմ իղձերդ առ տէր,
Կ'ուզեմ յարձան փոխուիս քոյր իմ.
Ես Աստուծոյ կը նախանձիմ։

Մինաս Չերազ

1870

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 10:45 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՀԱՅ ԴՐՕՇԻՆ

Մրրկահա՛ւ ծով արեան,
Վիշապազա՛նց դաստառակ,
Վեց գըլխատուած գաւառներ
Կարմիր լոյսիդ պատարագ։

Ո՛վ կոյս պատանդ դրօշացա՛ծ,
Ըրիր արիւնդ գինի
Որ գերութեան սեւ շղթան
Արձագանգ տայ Քընարի։

Հայ կարապի Ե՝րգն հսկայ
Եփրատին վրայ լուսաւոր,
Զորերուն մէջ գերաճիւն
Վերջին հսկողն ահաւոր։

Խաչուած խաչըդ կը շողայ
Խորանիդ մէջ եռագոյն,
Լոյսերուդ մէջ՝ նորագիր
Աստուածդ իջաւ մեծագոյն։

Նորակառոյց Օճախին
Ըրիր լեռներըդ սիւներ,
Ծըփա՝ ծըխան առ ծըխան,
Ծուխը լոյսէ՛դ է ծըներ։

Օրրոցներուն վրայ ծըփա՛,
Անմաքրերուն մա՛յր կարմիր,

Generated on 2016-06-14 11:19 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Խանձարուրներն իսկ վաղուան
Շուքիդ կապուած չուք մ՝ըրիր։

Անհաւասար մարտերով
Հին օրերու ամազո՛ն,
Լոյսերուդ սուրբ կաթը տուր,
Դիեցուր վեց հորիզոն։

Եօթնաղբիւրին վրայ ծըփա՛,
Օրհնէ կուժերը հողէ,
Զրկիր հարսին իրիկուան
Զոհածաղիկը ուղղէ։

Նոր բերդերուն տակ օծէ
Նոր սուրերու ասպետներ,
Անկիւնաքար պատմութեան
Ըրէ Զորին ոսկորներ։

Վերջին պահա՛կ տեսլահար,
Մեռան աստղերըդ փայլուն
Որ քեզ մարմին մը տային,
Կը ժպտիս վեց սարերուն։

Ծաղկեցաւ ցուպն աքսորի
Աւազին մէջ հեռաւոր
Անապատի ղերդ առիւծ
Մոռնչեց ազգըդ ահաւոր։

Շղթայակապ մեկնեցաւ,
Վերադարձաւ դրօշաւոր,
Թեզանի՞քը կապեցիր
Շղթաներուն քնարաւոր։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 11:19 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՕՐՀՆԵԱԼ ՅԻՇԱՏԱԿ

Օրհնեալ յիշատակն անոնց որ մեռան.
Այլ թող ողջ առողջ կանգնի Հայաստան.
Վաղը յաղթութեան թող մեծ օր ըլլայ,
Ալէլուիա, ալէլուիա։

Ոսոխը, մարեց եղբարց մեր արեւ.
Վայրապար լացինք խորանիդ առջեւ,
Բա՛ւ է, Տէր, փրկէ՛ մեր կեանք ւ՝ արտօրայ,
Ալէլուիա, ալէլուիա։

Սու՛րբ, Տէր զօրութեանց, բնակեալդ ի յերկին,
Սիրէ մեր սիրտը, գործը մեր ձեռքին,
Աջըդ պահապան լինի մեր վրայ,
Ալէլուիա, ալէլուիա։

Անապատին մէջ պահեցիր քառասունք,
Թափեցիր մեզ պէս արիւն, արտասունք,
Այլ պարտեցիր հուսկ դժոխք, սատանայ,
Ալէլուիա, ալէլուիա։

Դարձի բեր՝, Աստուած, թշնամին մեր վատ
Թող չարիւնոտի մեր խոփն անարատ,
Քրտամբ, ո՛չ արեամբ, երկիրս արբենայ,
Ալէլուիա, ալէլուիա։

Իսկ թէ վերջապէս պիտի գայ կռիւ,
Թող իյնայ խուժանն ինչպէս չոր խուիւ,
Հալածուած մշակն Հայ հանգստանայ,
Ալէլուիա, ալէլուիա։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 11:19 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԿՈՉՆԱԿԻՆ ՁԱՅՆԸ

Ժամ է զարթօնքի. կոչնակը բարձրէն ուժգին կը հչնէ,
Նոր այդ կը ծագի, ինք լոյսը կանխած շարժումի մէջ է,
Օրը Հայունն է, Հայը ջանք մ'ունի, գործել պէտք է շուտ,
Կոչնակը բարձրէն՝ արի՛ք կը հնչէ, Հայն ինչո՞ւ ննջէ։

Բարիք եւ կարիք, պարտք ու աշխատանք իր չորս սիւներն են՝
Որոնց միացած բարձր ու համադիր վսեմ դագաթէն
Կոչնակը անժանգ՝ անդուլ կը հնչէ ձայնովը ոսկի՝
Արթնցէ՛ք հայեր կարիքնիս մեծ է, առտու է արդէն։

Արթնցէ՛ք Հայե՛ր, հինգ դար խորունկ քուն միթէ չե՞ն բաւեր,
Եթէ դուք ննջէք, ո՞վ պիտի կանգնէ մեր աշխարհն աւեր՝
Ու սրբավայրեր. ո՞վ պիտի մեղմէ Հայ մեր խոր ցաւեր,
Ու պիտի բառնայ վատ պառակտողին սերմանած դաւեր։

Ո՞վ պիտի հերկէ տարագիր Հայուն սրտի մութ խաւեր,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 11:19 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ու սերմ դնէ հոն պտղաբերելու Ազգին նոր լաւեր։
Ես միշտ կը ձայնեմ, ինծի լսեցին ձեր նախնի հա-
ւեր,
Լսեցէ՛ք եւ դուք՝ թէ կ՚ուզէք չինել Հայաստանն
աւեր։

Վահրամ Խաչիկեան

---

## ԱՆՑՈՐԴԻՆ

Անցո՛րդ, սա գետին ջուրէն մի՛ խըմեր,
Հոն գըլորեցին կորիճը գիւղին,
Գուցէ զով ջուրը չըրթունքներըդ ջեր
Զովացնելու տեղ կ՚այրէ տենդագին։

Բաւ է որչափ որ ուռենին՝ գետին
Վըրայ արտասուեց ամէն օր անձայն,
Բա՛ւ է որչափ որ մայրն՝ հարազատին
Համար փղձկեցաւ այնտեղ ողբաձայն,

Դարձեալ այսքանն ալ չի կրցան երբեք
Մոռցընել սուգերն այս դաշտավայրին,
Անցո՛րդ, թոյլ տուր այդ ջուրին ահարեկ
Որ ժայռերու դէմ փչրի խօլագին։

Ես իմ սափորըս այնտեղ փչրկցի
Որ չըլլայ ըմպեմ անիծեալ ջուրէն,
Լերան սիրահար հոգիս եղնիկի
Կ՚ըմպէ կորիճին սիրած աղբիւրէն։

Լ. Էսաեանեան

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 11:19 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԻՐՈՒՆ

Մեր հայրենիքի սիրուն
Խմբեր պատրաստուած են քաջ,
Հրացանները ուսերնին,
Փամփուշտները ձախ ու աջ։

Հնազանդ կարգով շարուած,
Իրենք առիւծի պէս քաջ.
Խմբապետը հրաման տուաւ
Գնալ դէպ յառաջ յառաջ։

Ոսկեթել պաշլըգներով,
Լազի շորոր թանկագին,
Գնում էին դէպի Սասուն՝
Օգնելու Անդրանիկին։

Համիտիյէ զօրքերուն
Հրովարտակ կարդացին,
Թնդանօթներով զօրքերով
Դէպի Սասուն դիմեցին։

Խմբապետը Նէվրուզն է,
Օգնականը՝ շատ քաջեր,
Աղճօն առաջն էր ինկեր
Պատերազմի կ՝սպասէր։

Հայ քաջերը դիրք մտան
Թշնամին պաշարեցին,
Ամէն կողմէ «կրակ տուէ՛ք,
Կոտորեցէ՛ք գոռացին»։

Generated on 2016-06-14 11:19 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Ահա եկաւ ճան Ֆէյտան
Սարսափ տիրեց բանակին,
Փախչում էին դէպի լեռները,
Վախկոտ զօրքեր ահապին։

Խաւարից լոյս ծագեցաւ,
Սպասում են մեծ գործեր
Դաշնակցութեան ցանած սերմեր
Տալիս են նոր նոր յոյսեր։

---

## ՄԵՆԵՐԳ

Սաստիկ ցաւ մը սիրտս է զարկեր
Կուրծքս կ՚ըսես կը պայթի
Ի՞նչ պիտ՝ ըլլամ, ի՞նչ եմ եղեր.
Գլուխս, ա՞խ կը ցնդի։

Եղբա՛ր ք, եկէ՛ք ձեռք ձեռքի տանք,
Տեսէ՛ք, մեր կրօնք մեր լեզուն
Կը գտնուին ի մեծ վտանգ.
Ինչպէս եւ կեանքս ազազուն։

Ձեռք ձեռքի տանք եւ մեր անուն
Հրպարտ դարուց քառասուն,
Ժառանգ թողունք մենք անարատ
Մեր որդւոցը հարազատ։

Generated on 2016-06-14 11:20 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Անգու՛թ երկինք քիչ մըն ալդուն
Շարժէ՛, փութա՛ օդնութեան,
Կ՚աղօթենք քեզ առտու իրկուն
Դուն կը խնդաս մեր վրան։
Մարի՛կ մարիկ սրտիս վրայ
Վա՛յ բացուեր է մեր եարայ
Արծուի աչքերս կուրցան լալով
Օ՛հ, խենթենամ պիտ՚ հիմայ։
«Մեռնիլ կ՚ուզեմ» ըսի երէկ
Այսօր սակայն կը զղջամ,
Ցաւերս հազար, փափաքս է մէկ
—Սուրբ Հայրենիքս տեսնամ—։
Սաստիկ ցաւ մը սիրտս է պատեր
Կուրծքըս կ՚ըսես կը պայթի
Ի՛նչ պիտ՚ ըլլամ, ի՛նչ եմ եղեր,
Գլուխս, ա՞խ, կը ցնդի։

Խոսրով

---

## ՔԱՂՑՐԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Երկիր մը կայ հեռաւոր տեղ,
Քաղցրանուն Հայաստան.
Հողն է բերրի, ջուրն է համեղ։
Անին է իր ոստան։
Թշնամին զայն արեամբ ներկեց
Եւ դարձուց աւերակ,
Այն որ հողն իր երէկ հերկեց
Արդ պառկի անոր տակ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 11:20 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ամպեր կուլան կարմիր արցունք,
Քանզի սուրբն Հայրենիք
Զաւակ չունի, չունի թոռունք
Գէթ լալու իր կարիք։

Դաւաճանեց Եւրոպն օտար,
«Ժէօներ» մեզ խաբեցին,
Նորազանդ Հայք կ'ըլլան սատար,
Մեր հուսկ կործանումին։

Անէծք կուտամ ճակատագրիս,
Անէծք ցած թշնամուն.
Կուլամ կ'ողբամ ինքիր դէմիս.
Նժդեհ եմ հէք, անտուն։

---

## ՓԱՌՔԻ ԲԼՈՒՐԸ

Հողն է շաղուած անմահութեան աւիշով,
Հո՛ն կը ծլին էտըլվայսներ ակնաթոր,
Արշալոյսն հոն կ'իջնէ ծիրանն իր հագնիլ
Ու կողերէն փառքը կաթիլ առ կաթիլ
Կը թորի վար, ճաճանչն ինչպէս նշողուն
Գարնան պայծառ այգաթրթիռ արեւուն։

Ու կատարին կը յածի Ցոյսը շրջեղ
Նազելավառ կոյսի մը պէս արփագեղ։
Բլուր մ'է ան, երբեմն անշուք մոռցուած,
Ցաղթանակի կոթող մ'այսօր լուսամած,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 11:20 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ուր ապագան եւ մութ անցեալն ահարկու
Զուարթօրէն կը գրկուին իրարու։

Բլուր մը ան, որուն անունը պզտիկ
Յաւերժին մէջ մենք մեր արեամբ գրեցինք
Քըսան եւ մէկ հայ կտրիճներ կը պառկին,
Հո՛ն, իր ծոցը, գգուանքին տակ լուռնակին։

Անո՛նք էին,—անվախ ճետը Թորդոմեան,—
Որ մահուան դէմ աստուածօրէն խոյացան,
Եւ հո՛ն ինկան—սակայն Ոճիրը զարկած
Սրտէն խորունկ—հո՛ն տընկեցին փառապանծ

Եռագոյնն յաղթ...ի՞նչ հոգ եթէ օր մ՝անի
Մոռացումի ստուերներով ծածկըւի,
Քանի դո՛ւն կաս ու կը մնաս, ո՞վ բըլուր
Անմեռ վկայ հայ քաջութեան մահատուր,

Քեզի կուգամ, քնարս գրկած այս գիշեր,
Ո՞վ վեհ կոթող, ո՞վ Արարատ, ո՞վ սուրբ լեռ,
Մահարձանիդ առջեւ ի ծունր. երկիւղած
Քոյր հոգիիս թափել պաշտումն խորազգած։

Մինչ բարձունքէդ դէպ Արարատ կամարուող
Միրաներփիկ ծիածանէն լոյս–փողփող
Լարերուն վրայ հէք քնարիս տօսախեայ,
Յոյսով ժպտուն փառքի ճաճանչ մը կ՝իյնայ։

Մարի Յ. Չայլագեան

Գահիրէ, 5 Փետրուար 1919

Generated on 2016-06-14 11:20 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՌԱԶՄԵՐԳ

Ո՞ւր էք, վերջի՛ն հայորդիներ,
Հուսկ ժամն է ա՛լ ճակատագրի.
Կամ արեւոտ կատա՛րն է մեր՝
Եւ կամ անդո՛ւնդը վիթխարի։
Պատռե՛նք ձորձերն ստրկութեան,
Եւ ա՛լ հագուինք զէնուզարդո՛վ.
Մեր սուսերներն անտա՛ռ մ՚ըլլան՝
Ծաղկած արեա՛մբ—վրէժի՛ վարդով։
Օն, յառա՛ջ, յառա՛ջ, դէպի յաղթանա՛կ.
Մահացու հարուածը մենք պէտք է տանք,
Օ՛ն, դէպի վրէ՛ժ, օ՛ն, դէպի վտանգ
Վերջին գրո՛հը տանք։

Հայու կտրի՛ճ ու աղջիկնե՛ր,
Խըմենք ամէ՛նքըս մէկ՝ Հայկին
Սաղաւարտէն մարգարտայի՛ն՝
Ոսոխ արի՛ւնը, մեր գինի՛ն։
Թող վառօդին խունկն ամպանայ,
Թող մեր կըրակն ասողնե՛ր ցանէ.
Ո՛չ ոք, ո՛չ ոք անվրէժ մընայ,
Ո՛չ ոք՝ որ հատ մը չզգեստէ։
Օ՛ն, յառա՛ջ, յառա՛ջ, եւայլն։

Ծագէ ի ծագ մոլոր Հայե՛ր,
Ա՛լ համախումբ, ա՛լ գօտեպինդ,
Մեր հո՛ղն անցնինք, մե՛նք ըլլանք տէր,

Generated on 2016-06-14 11:20 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Մարենք . արիւնախինդ։
Մեր Դրօշն, ահա՛, արփաւետե՛ց
Վարդաստաններն արաղչիի·
Կը սրբեն Անո՛վ արցունք իրենց՝
Մեր հէք մայրերը սեւաչուի···։
Օ՛ն, յառա՛ջ, յառա՛ջ, եւայլն։

Վահրամ Թաթուլ

---

## ՈՒԽՏԻ ԿՈՒԳԱՄ

Հեռո՛ւ հերո՛ս աւերուած Հայրենիքէն մեր դժբաղդ
Արարայի բարձունքը ընտրեցիր դուն գերեզման···
Ափ մը մոխիր ձեռքիս մէջ աճիւններէն Հայրենեաց,
Արիւն—արցունք աչերուս՝ ուխտի կուգամ քեզ այսօր···։
Քեզ կը բերեմ օրհնէքը մեր պապերուն յաղթական՝
Մեր անարգուած մայրերուն համբոյրին հետ սի-բակաթ,
Քեզ կը բերեմ անթառամ փունջ մը ծաղիկպէրիտէն
Զոր խոշտանգուած քոյրերդ հաւաքեցին արցունքով···։
Դուն ո՛վ հոգի անձնուրաց, վրէժխնդիր նահատակ,
Քեզ կը բերեմ պաշտամունքն իմ սգաւոր հոգիիս՝
Որուն ա՛յնքան դուն մօտիկ մաքուր սիրովդ ապ-բեցար,
Ու գերեզմանդ թողուցիր իրեր Փառքի Ցիշատակ··

Օննիկ Մահտեսեան

Generated on 2016-06-14 11:20 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՍՈՒՐԲ ՕՃԱԽ

Մեր պապերն եղջիւր առ եղջիւր գինի
Խըմեցին նըռան.
Գինիդ արիւնի փոխեց թշնամին
Ո՛վ վկայարան։
Աստղերդ որ մեռան՝ լոյսեր թողուցին
Կըտուրիդ վրայ,
Այգիներուդ մէջ մէն մի բարունակ
Սրինգ թո՛ղ ըլլայ։
Գարնան օր մըն էր որ անցար սուրէն
Մե՛ծ հերոսատուն,
Կանգնէ՛ սրբատուն։
Վերստացուա՛ծ՝ զերդ խորան խնկօն՝
Գերահանճար կապոյտն անմահ գաւառին
Հոգիդ թող լըլայ,
Հարսերըդ սափոր առ սափոր ջուրեր
Թափեն չէմքիդ վրայ։
Մայրեր թող ծնին խորաններուդ տակ
Թոռներ Մըհերի,
Հայ առաքաստին սրբութեան վրայ
Դըրո՛չը փայլի։
Օճա՛խ, տաճարին քովիկը ըլլաս,
Խաչը սուրին հետ,
Սըքեմի խունկը պապերու սրտին
Մէջ վառի յաւէտ։
Նոր Իսրայէլի ծաղկած Գողգոթայ,

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 11:21 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Երգումի երդիք,
Հերիք կտրիճդ ծայն ի վեր մագլեց,
Բա՛ց գիրկդ անդորրիկ։
Ա՛լ խապրիկ մ՚ուզեր մեր կըռունկներէն,
Կըտուրիդ վերայ
Ծիծեռնակները նոր բոյն բունեցին
Մարագէդ հիմայ։
Կ՚ասին թեւերուդ տակ դրախտաբոյսեր,
Ուր կը սնանին
Որդան կարմիրներ որ գոյնը իրենց
Տան եռագոյնին։
Թոռներուդ թուով վառէ ճրագներ,
Ծուխով ծրխանիդ
Խորան առ խորան, խարոյկ առ խարոյկ
Մըխա՛ երկինքիդ։
Լուսընկա՛ալ կասէր, կը թափէ
Մխիւռոն արտերուդ,
Հարսնացեա՛լ օճախ, պըսակ կը կապեն
Ինստղերը կլխուդ,
Դեռ ա՛ստարակուսող պարերո՛ւ ոգին,
Տո՛ւն վիշտայազուն։
Զուլալ աղբիւրիդ մէջ ծընար այսօր
Ջիս քընարա՛զուն։
Օճա՛խ, կը չէնանաս դէխոյ վարդերով
Շէ՛ն քան ուրքունիք։
Ամէն մէկ ոսկոր իր թագը ունի
Դրօշ ու հայրենիք։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 11:21 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

# ԱՐԱՐԱ

Շատ ընտանի, օ՜, շատ սիրուած, տենչացուած,
Անունի մ՝ան հնչիւնն ունի քաղցրալուր·
Անով լեցուած հոգիս իմին այս գիշեր,
Լոյս տեսիլքի մը մէջէն
Մեծ աւօտին կը ժպտի։

Արարա՛...
Օտար հողի մ՝ալքերէն
Դուն վեր ցըցուած, ո՜վ կոթող,
Քու կողերէդ փառքի պայծառ ջրվիժում
Մ՝ականակիտ աղբիւրներու ջուրին պէս,
Վար կը յորդի, վա՛ր մեր հողին հայրենի
Արիւնողող դաշտերուն մէջ (ուր երբեմն
Ահեղ Վրէժը Ոճիրին պլլուած
Իբրեւ եղիճ ուռճացաւ)
Ոռոգելու հո՛ն հունտն արդէն ծիլ տուած
Ազատութեան մեր Երազին դարաւոր...։

Արարա՜...
Մինչեւ երէկ, դեռ կոյտ մ՝էիր դուն անշուք,
Անանուն կոյտ մը հողի·
Օձերու բոյն, կարիճներու թագըստոց·
Ծիլ մը ծաղիկ չէր բուսներ լերկ կուրծքիդ՝ ուր
Կը թառէին յաճախ ծերուկ բաղէներ
Մագիլներուն արիւնն հողիդ սրբելու...։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 11:21 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Դարեր անցան գաղաթէդ՝
Ստուերն իրենց թափելով.
Դուն մնացիր միշտ մոռցուած, միշտ անշուք
Բլուրը հէք, ուր հրէուհին սիրատարփ,
Երբեմն միայն, ժամադիր,
Քթթումին տակ խորհրդալոյս աստղերուն
Իր սիրային սպասեց...։

Օր մ՝ալ յանկարծ ահեղ երկունք մ՝զգացիր
Կողերուդ տակ,—յղի էիր ոճիրով—
Գալարուեցար, թոթուուեցար, գոռացիր
Երկինքն ի վեր ժահր ու մախանք թքնելով.
Եւ արոյրի մրրկումի մ՝ընդմէջէն,
Դուն աշխարհի պատգամեցիր, պատմեցիր
Հուսկ յաղթանակը Զարին՝
Ընդդէմ հպարտ Արդարութեան, որ հեռուէն,
Թէեւ դանդաղ այլ հաստատ
Եկած էր հո՛ն, ոտքիդ առջեւ ու դրած
Վրանն իր լայն, որուն տակ
Կը դարբնուէր մեծ Ցաղթանակը վաղուան՝
Սալին վրայ Վրէժին...։

—Դուն հեւացիր, փոթորկեցար, մռնչեցիր,
Շանթեր թռան կուրծքէդ վեր.
Եղեռնը պահ մ՝ինքզինք կարծեց ապահով,
Կուրծքիդ պեղուած ակօսներուն մէջ մթին։...

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 11:35 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հրաման մ՝—Ցառա՛ջ...»—մութին մէջ
Սրափողերն ահարկու,
Լեռնէ ի լեռ, հորիզոնէ հորիզոն,
Մարտին գոռ երգն հնչեցին...։

—Կռիւն էր այդ. դիւցազուններ հրաչուի,
Հոյատեսիլ, կանգնագեղ,
Սուրերն իրենց ամեհօրէն ճօճելով՝
Կուրծքիդ ծուար Եղեռնին դէմ վազեցին...

Օ՛, վազեցին,
Սէգ կտրիճներն իմ ցեղիս,
Աչքերուն մէջ թարթելով
Կայծերն ամբողջ դժոխքին,
Ի՝ակռաներնուն մէջ կամշոտ
Խածած վրէժն ահարկու...
Խորտակուեցան ռազմագիծերն անառիկ
Թորգոմական Վիշապին
Խուժանին տակ ամեհի
Եւ խաժամուժն անանուն,
Մէկ հարուածով սրտէն ուժգին զարնուած,
Դանդաչեց ու նրկնեցաւ
Եւ Պարտութեան ճամբաներուն երկայնքին
Գերեզմաններ փորեց ան...
Գերեզմաննե՛ր, գերեզմաննե՛ր դաշտերուն
Մէջ, ուր ան մերթ գերեզմանել էր փորձեր
Ամբողջ մեր ցեղը ազնիւ։

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 11:36 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Արարա՛տ...
Ա՛հ, դուն տեսար. դուն տեսար
Խառնուրդը մեծ, վայրագնարբշիռ կատաղի,
Սուին սուինի, ճակատ ճակատի, կուրծք կուրծքի,
Խառնուրդն ահեղ սատակիչ
Մոլեգնավառ հայ ճետին.
—Որուն ի տես աշխարհի բաղդը իրենց
Ձեռքին բռնող, ուժին հսկայ ասպետներն
Զմայլանքէ ապշոպուած՝
Արձակեցին քառսին մէջ արիւնի
Իրաւունքի մեծ «Եղիցի»ն աստուածեան...։
Ու լոյս եղաւ, հրաշաթոյր՝, ցոլավառ.

Ազատութեան լոյսն աղու,
Դարերու մութ խաւարին մէջ դալարուող
Մեր աննըման աշխարհին...։
Օ՛, դուն տեսար, մրրկաթափ, մահասփիւռ
Անոնց արշաւը վայրագ,
Որ իր որսին վրայ վազող վագրին պէս,
Կապարի յորդ հեղեղներուն ընդմէջէն՝
Անցա՛ն, անցա՛ն քու բարձունքէդ, Արարա՛,
Արարատին ձայն տալով։
. . . . . .

Հիմա, ո՛վ բլուր, մտածումիս մէջէն դուն,
Փառքի փողփող լոյսի մը պէս կը յառնես...
Քու ծոցիդ մէջ կը տեսնեմ

Generated on 2016-06-14 11:36 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Քըսաներեք վկաներու դիւցազուն
Հասակներն յաղթ, որ կը պառկին ժպտագին
Ցոլքերուն դէմ աստղերուն,
Դափնիներով պատանքուած...
—Քսաներեք վկաներ,
Որոնք մահուան աչքերուն
Մէջ չեշտակի նայեցան,
Ու դեռ չինկած՝ քու բարձունքէդ դիտեցին
Ամպածընար հպարտ լեռներն հայրենի
Որոնց արդէն կատարներէն կը ցաթէր
Ազատութեան վարդահեղեղ Արշալոյսն...

Հո՛ն են անոնք, խաղաղօրէն քընացած
Կուրծքիդ պեղուած փոսերուն մէջ մենաւոր,
Փոսեր՝ որոնք յորդ աղբիւրներ կը դառնան
—Փառքի վճիտ աղբիւրներ—
Որոնց մէջ օր մը աչնան,

Հայ Նէմէսիսն իր դաժան սուրը ջրեց...։
Հո՛ն են, հո՛ն են, հայրենիքի կուրծքէն վեր
Թեւած զեփիւռ մը գրթոտ,
Կուգայ յաւերժ օրօրել.
Մօր մը նման խանդակաթ,
Յաղթական նինջը անոնց,
Մինչ քու սեւ հողդ ոռոգուած՝
Անոնց կարմիր արիւնէն՝
Կը ծըլի վարդ ու չուչա՛ն...

24 Սեպտեմբեր 1918 Մ. Ոսկեան

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 11:36 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## ՔԱՅԼԵՐԳ ՈՎԿԻԱՆՈՍԻՆ ՎՐԱՅ

Փոթորկին դէմ, կոհակին դէմ,
Քալենք՝, ընկե՛րք, անսասան
Կայտառ սրտով ու ժպտադէմ
Կտրենք ովկիանն անսահման։
Ի՞նչ փոյթ, թէ ծովը կը տեղայ
Փրփուրներն իր մեր գլխուն,
Քալե՛նք, տկարը թո՛ղ դողայ
Ապտակներէն բիրտ ծովուն...։
Ի՞նչ փոյթ թէ նաւն ինչպէս փետուր
Կը տատանի ջուրին վրան
Հաստա՛տ քալենք, Հայն անձնատուր
Զը՛լլար երբէք վատութեան։
Մեր հայրենիքն արիւնին վրայ
Փոթորկայոյզ ծփծփաց,
Բայց յաղթական պիտի խայտայ
Ազատութեան ափն հասած։
Դէ՛հ չար ի չար, դէ՛հ ընկերնե՛ր
Կամրջակին վրայ տատան,
Թող ողջունենք մենք անվեհեր
Ազա՜տ, ազա՜տ Ամեր՛կան...։

Վահէ Հայկ

Generated on 2016-06-14 11:36 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՑԱՆԿ ԵՐԳԵՐՈՒ

## Ա


| | էջ |
|---|---|
| Աբարանը քարոտ ա | 17 |
| Ազատութեան աստղը պայծառ | 6 |
| Ազատութեան այն վառ սէրը | 8 |
| Ազատութեան սիրոյն համար | 9 |
| Ազատն Աստուած այն օրից | 11 |
| Ազնիւ ընկեր մեռանում եմ | 264 |
| Ալագեազ բարձր սար ա | 15 |
| Ալագեազ սարն ամպել ա | 14 |
| Ալ թող դադրին արցունք Հայուն աչքերէն | 270 |
| Ալ ու ալուան ես հագել | 14 |
| Ախ թէ երկինք գէթ մի վայրկեան | 13 |
| Ախ մեր սիրտը լիքը դարտ ցաւ | 31 |
| Ախ Վասպուրական տխուր Հայաստան | 25 |
| Ակոռիին մեծ կարասիին բոլորտիքն են բազմեր | 18 |
| Ահա բաժակ ուրախութեան | 268 |
| Ահա ելաւ լուսին արծաթ | 24 |
| Ահա կերթամ սիրելի մայր | 20 |
| Ահա ծագեց կարմիր արեւ | 23 |


Generated on 2016-06-14 11:36 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

| | |
|---|---|
| Ահա մօտեցաւ մահուան ժամերս | 19 |
| Ահա սուրհանդակի սահլակը | 21 |
| Աղուոր օրեր իմ մանկութեան | 16 |
| Աղջկերք պար բռնեցէք | 22 |
| Ամպել ա ձիւն չի գալի շողեր ջան | 160 |
| Այգուն, այգուն իմ խցիկի մօտ | 36 |
| Անդրանիկ Փաշան բիւր ընկերներով | 27 |
| Անի քաղաք նստեր կուլայ | 274 |
| Անմահ անուշ դու գինի | 29 |
| Անուշ քնակն աչերն առեր | 25 |
| Անցորդ սա գետին ջուրէն մի խմեր | 289 |
| Աշխոյժ նաւաստին | 10 |
| Աշնան չորցած թուփերու հետ | 210 |
| Առաւօտ արշալոյսին | 247 |
| Առտու կելլես դու ժուռ կուգաս | 80 |
| Առաւօտուն բարի լոյս | 28 |
| Արազը հեշտացել ա | 43 |
| Արազն եկաւ լափին տալով | 200 |
| Արի գութան վարի գութան | 39 |
| Արի իմ սոխակ, թող պարտէզ մերին | 32 |
| Արիք Հայկազունք յառաջ ընթանանք | 33 |
| Արծթի բարձր գեղայ | 30 |
| Արշալոյսը նորէն բացաւ | 38 |
| Արեւ թովռելով ելաւ, իմ չինարի եարը | 126 |
| Արեւ իջաւ սարի գլխուն | 271 |
| Արեւ կայնէ կէսօր | 30 |


Generated on 2016-06-14 11:36 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Բ

Բաժակներ առնենք, եղբարք 137
Բամ փորոտան բարձուստ 40
Բարով եկար սիրուն կռունկ 75
Բերդիցը դուրս ելայ Ալեքեազ տեսայ 59
Բերին աթոռ, ելաւ չորս կողմ նայեցաւ 277

Գ

Գարնան գութան հանեցի 79
Գարուն է եկել նաշխուն թեւերով 245
Գացէք տեսէք ո՞վ է կերել զեծ 55
Գերեզմանիս թող արձանին վրայ 37
Գիշերն անցաւ լոյս ծագեցաւ 50
Գիշեր ցերեկ կը հառաչեմ 241
Գնա՛ բլբուլ մեր աշխարհից 35
Գրող տանի Ֆուրդ Աբոյին 46
Գնաց աշուն եկաւ գարուն 51
Գնա՛, գնա՛ ոտիդ իմ 78

Դ

Դաշնակցական խումբ գնանք մենք Սասուն 58
Դատարանի դաշտում դատը վերջացաւ 258
Դատարանին իմացուցին 76
Դարդըս լացէք սարի սըմբուլ 142

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 11:37 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին 53
Դէ՛ գնա՛ կիգամ վայ գնա՛ կիգամ 45
Դու զով խնդրես մայր իմ անուշ 48
Դու խելօք հաշւով վաճառական ես 240
Դու փափկաքեւ մանկիկ զեփիւռ 272

## Ե

Եար ջան ուղուլմիշ արա 70
Եթէ տժգոյն մահու հրեշտակ 278
Ել փէդայի առ զէնֆերդ 248
Եկէ՛ֆ բոլորուինֆ մեր սուրբ ուխտին շուրջ 224
Եկաւ գարուն բացուեցաւ սարերի վարդը 226
Եկել է գարուն սոխակը սիրուն 242
Եկայֆ այսօր որդիֆ մարդկան 250
Եկ իմ սրինգ, իմ բարեկամ սրտագին 84
Ես եմ ազատ հայ պատանի 68
Ես հանեցի սուրս պատեանէս 44
Ես լսեցի մի անուշ ձայն 108
Ես սիրեր եմ մի զոյգ աչեր 133
Ես վերէն կուգայի դուն դուռը բացիր 61
Ես եմ ֆաջ զինուոր 169
Երբ ալեկոծ ծովի վրայ 63
Երբ կը տեսնեմ աչերուդ փայլ 284
Երբ որ մայրը երկունֆով 276
Երբ որ ազգին գահը փլաւ 72
Երբ որ բացուին դռներ յուսոյ 54

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 11:37 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Երգէ՛ հայ աշուղ թոթռացուր քնար 104
Երեւանից դուրս ելայ 103
Երկիր մը կայ հեռաւոր տեղ 292

Զ

Զարթիր որդեակ, յուշ բեր վեր կաց 77
Զարթիր մանուկ իմ նազելի 81
Զար զընգը, զար զընգը թող զընգայ 91
Զարնենք, զարնենք անխնայ 281
Զէյթունցի ենք ժայռի ձագ ենք 94
Զինչ ու զինչ տամ լողորդչուս 98
Զինուորին երգը եղբարք լսեցէք 246
Զոյգ զոյգ կռունկ էրկան վիզ 101

Ր

Էյ նան հայրենիք ինչքան սիրուն ես 237
Էս նամբէքը ոլոր ա 92

Ը

Ընդ աստեղօք օտար ափանց 255
Ընկաւ տարին, Հայոց էլ փառք ընցաւ հետ 238

Թ

Թոռ փչէ քամին պաղ պաղ երեսիս 85
Թիփի փորան մուք գիշերին 88

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 11:37 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թէ հայրենեաց պսակադիր 96
Թշնամական գոռ վաշտերը կատաղի 99
Թող կորնչին բռնապետներ 136
Թէ իմս հայրենեաց ճնար սգաւոր 228
Թող երգէ բլբուլ մշոյ դաշտերում 233
Թէ թեւ ունէի 253
Թէ իմ ալեւոր հերքը սեւնային 262

Ժ

Ժամէ զարթօնքի, կոչնակը բարձրէն կը հնչէ 288
Ժանտ անուրը բռնաւոր 113

Ի

Ի բիւր ծայնից բնութեան շքեղ 111
Իբրեւ արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ 197
Ի զէն Հայեր ի սուր եւ ի հրացան 130
Ի զուր են ի զուր բռնաւոր 251
Իմ անուշիկ մայրիկս 227
Իմ եարը նստել դամով 219
Իմ հայրենեաց հոգի վարդան 110
Իմ հայրենիք զիս կը կանչէ 116
Իմ սիրելի զաւակունքս 107
Ինձ համար չէ գարնան գալը 102
Ինձ մի տանջել, մի չարչարել սիրական 233
Ինչո՞ւ ապշած ես, լեռակ 235

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 11:44 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Լ

Լէփօ լէ լէ, լէփօ լէ լէ 92
Լբնի մէջ նաւակը 65
Լուսին չիկար մութ գիշեր էր 71
Լուսնակ գիշեր բոլորովին ֆուն չունիմ 79
Լուսնակ անուշ, հով անուշ 100
Լռեց ամպերն եկան ծածկեցին 112
Լօ, լօ, լօ, Սիփանա սէգ սարի վրայ 69

Խ

Խաղաղ դաշտի որդիք 67
Խաւարել եմ ինչպէս գիշեր 74
Խուզմար պառկէ երես բաց 57

Ծ

Ծագէ արշալոյս ծագէ արուսեակ 60
Ծիծեռնակ, ծիծեռնակ 62

Կ

Կախաղանը պատրաստուեցաւ 83
Կանչէ, կռունկ, կանչէ ֆանի գարուն է 213
Կապոյտ երկնքում աստղեր են փայլում 93
Կար ժամանակ որ եւ Հայերն 95
Կարկուտ տեղաց խանասորայ դաշտումը 89

Generated on 2016-06-14 11:44 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Կործանուեցաւ չարը իսպառ 106
Կոտորածն անգութ Հայերը թող լան 115
Կռունկ ուստի կուգաս ծառայ եմ ձայնիդ 86
Կովկասի քաջեր խմբեր կազմեցէք 90
Կուժ առա ելայ սարը 232
Կռուեցէք տղերք, կռուեցէք քաջ քաջ 118
Կրամբամբուլին այն օղին է 225

Հ

Հաբբրբան ջանէ ջան 120
Հաբբրբան ջանէ ջան 128
Հաբբրբան ջանէ ջան 152
Հաբբրբան ջանէ ջան 165
Հալածուած ենք Հայաստանի լեռներէն 267
Հայաստան երկիր դրախտավայր 5
Հայաստանէն եկած զինուոր 163
Հայ ապրինք եղբարք մարդկութեան մէջը 161
Հայ երիտասարդներ շուտ շտապեցէք 234
Հայ եմ ես մեռնիլ գիտցող հայ եմ ես 101
Հայկազունք պար բռնենք 52
Հայեր այսօր ազատ կեանքի նոր արեւ 223
Հայեր մինչեւ երբ արտասուենք 259
Հայոց աշխարհում ծագեց նոր հրդեհ 119
Հայրենիք սրբազան իմ սիրուն աշխարհ 122
Հայոց աղջիկներ ձեր հոգուն մատաղ 123
Հայը բանտէն չի վախնար 125

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 11:44 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հանգիստ եմ անուշ անցար գնացիր 195
Հեռաւոր երկիր նստած դու նժդեհ 144
Հեռու եմ բենէ օտար երկրի մէջ 146
Հեռո՞ւ, հերոս աւերուած հայրենիքէն 296
Հերիք որդեակ այսքան տարուան տառապանք 141
Հերիք ալ հայեր այսչափ լռութիւն 176
Հիմի էլ լռենք եղբարք, հիմի էլ 167
Հնչակեան ենք մենք ուխտեալ զինուորներ 158
Հով, հով, հով լինի 143
Հով արէք սարեր հով արէք 170
Հուր բարկութեան համայն Հայոց 114
Հովիւը սարում տխրեց 254
Հունձք կը ժողվեմ մանգաղով 257
Հողն է շաղուած անմահութեան աւիշով 293
Հ. Ս. Ռ. եւ Կ—նոր նշանաբան 269
Հօ՛, ռօ՛լ, օ՛ լօ՛, լօ՛, լօ՛, լօ՛, 145
Հօլ արա եզ օ՛ 172
Հօյ նազանըմ նազանըմ 153

## Ձ

Ձայն մը հնչեց Էրզուրումի Հայոց լեռներէն 179
Ձայն տուր ով ծովակ ինչո՞ւ ես լռում 185
Ձմեռն ինչ կուզէ թող ըլլի (եար եարալի) 193
Ձմեռն անցաւ եկաւ գարուն 244

## Ճ

Ճամբայ տուէք առաջ գամ 183

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 11:45 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## Մ

Մանիր մանիր իմ նախարակ 280
Մայր Արաքսի ափերով 148
Մանկութեան օրեր երազի նման 155
Մեզի մոռցաւ Հայոց ազգը 127
Մենք անկեղծ զինուոր ենք առանձին 181
Մենք Հնչակեան ենք, դուք Դաշնակցական 231
Մենք պէտք է կռուինք եւ ոչ լաց լինինք 159
Մեր հայրենիք ազատ անկախ 109
Մեր հայրենիք թշուառ անտէր 205
Մեր դռանը խնկի ծառ 218
Մեր հայրենիք սիրուն 290
Մեր պապերն եղջիւր առ եղջիւր գինի 297
Միակ բանտոր ըէնջրեր ախբեր 220
Մինչ բնութիւն էր զուարթ 201
Մի գեղեցիկ պարզ գիշեր էր 265
Մնացես բարեաւ սէր իմ սէր 203
Մրրկահաւ ծով արեան 285

## Ն

Ննջեա որդեակ անուշ քնով 189
Նոր ծաղկեցաւ այգին, եկել է գարուն 221
Նպատակիս գէթ մի մասը կատարուէր 222
Նպատակիս հասնիմ միայն 212

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 11:45 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## Շ

Շատ ընտանի (Արարա) 299
Շորորա, անուշ ջան, շորորա 178
Շինուած է ան ճոճիով 283

## Ո

Ոգիս յանունդ հալեցան 260
Ո՛հ ինչ անուշ եւ ի՞նչպէս զով 173
Ողջոյն տուէք իմ հայրենեաց 164
Ողջոյն ընդ քեզ Հայաստան 171
Ո՛չ, եղբարք, ոչ, օտարէն չիկայ յոյս 243
Ուռի ես կռանալ մի 180
Ո՞վ ես որ դուն առանձին 166
Ո՞վ մեծասքանչ դու լեզու 174
Ով որ քաջ է ի՞նչ կսպասէ 177
Ո՛վ սուրբ վայրեր, անհոգ ժամեր իմ կենաց 182
Ով ծիծեռնակ վարանաց թռչնիկ 208
Ո՞ւր էք, վերջին հայորդիներ 295

## Պ

Պաղ աղբիւրի մօտ 147
Պարզիր աղբիւր, Հայ փէտայուն ջուր տանիմ 140
Պարտքի, իրաւանց գիտակցութիւնով 217
Պզտիկ տղայ չեմ օրօրեր օրօրանդ 135
Պօյբդ բարձր սալվի չինար 211

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 11:45 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

## Ս

Սաստիկ ցաւ մը սիրտս է զարկեր 291
Սա՛ր, սար 121
Սարերը հովել ա ծիրան ջան 216
Սարերի հովին մեռնիմ 157
Սարէն ելաւ երկու մուխ 252
Սարէն կուգայ ձիաւոր 138
Սարը սարին նման չէ 47
Սասուն գաւառ հին Հայաստան 131
Սիրեցի եարս տարան 154
Սիրէ հայը թէ ըլլայ 214
Սիրուն գարուն կանաչ գարուն 266
Սիրտս կրակ ունի արցունք իմ հոգիս 134
Սոնա եար սոնա եար 129

## Վ

Վառեց երկինք իւր մոմերն 139
Վեր կա՛ց, թշուառ վշտի զաւակ 103
Վերջին վարդ, վերջին վարդ 190

## Տ

Տալուրիկի զաւակ եմ խորթ 186
Տեսար մէկը շլապայով 215
Տէ՛ր ողորմիա Հայոց ազգին 184

Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA
Generated on 2016-06-14 11:45 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Տէր, կեցո դու զհայս 198
Տուր ձեռքդ եղբայր, ժամ է զարթելու 192

Ց

Ցուրտը փչեց ձմեռ սաստիկ 194

Փ

Փափուրի ջան 239
Փոքրորկին դէմ, կոհակին դէմ 304

Ք

Քանի թմրինք բաւ է եղբարք 191
Քնիր իմ բալիկ, օրօր էլ արա 196
Քնիր բալիկ հանգիստ քնիր 209
Քէլեր ցոլեր իմ եարը 204
Քէլէ, քէլէ, քելքիդ մեռնիմ 249
Քուն եղիր պալաս, աչքդ խուփ արա 256

Օ

Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ 199
Օդդ սիրուն, ջուրդ սիրուն, դուն սիրուն 231
Օրհնեալ յիշատակ անոնց որ մեռան 287

Generated on 2016-06-14 11:45 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

ՍՊԱՌԵԼՈՒ ՄՕՏ Է

# ՊԱՆԹ-Ի
# "ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ"Ը

Հայկական Թատրոնի գլուխ գործոցը, որը՝ արժանացած է թէ Պոլսոյ եւ թէ Թիֆլիզի ու արտասահմանի ամենաբարձր գնահատման: Կուզե՞ս Հայ Շէյքսպիրը կարդալ, հատ մը գնէ, որովհետեւ շատ սահմանափակ օրինակներ մնացած է

ԳԻՆ 75 ՍԷՆԹ

## ՊԷՐՊԷՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ
## H. G. BERBERIAN

837 Washington St. Boston, Mass.

ԹՂԹԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ

H. G. BERBERIAN

. O. Box 34 Sta. A. Boston, Mass.


Digitized by Google

Original from UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2016-06-14 11:45 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

# “ՀԱՅԱՍՏԱՆԸ”

---

Երգէ եւ նուագէ՝ դաշնակիդ կամ ջուբակիդ վրայ «ՀԱՅԱՍՏԱՆ ԴՐԱԽՏԱՎԱՅՐ»ը, Հայուն սիրած այս երգը, զոր Ա. Շահմուրատեան կ’երգէ: Ձայնագրուած Կոմիտաս Վարդապետի կողմէն: Լոյս տեսաւ առանձին պրակով, գեղեցիկ եւ ճաշակաւոր տպագրութեամբ: Նոթաներուն տակ գրուած են բառերը՝ թէ՛ հայերէն եւ թէ անգլիերէն տառերով:

Գնէ՛ օրինակ մը, երգէ՛ զայն կամ նուագէ, յիշելով պատմական հայրենիքդ — ՀԱՅԱՍՏԱՆ ԴՐԱԽՏԱՎԱՅՐԸ:

---

## ԳԻՆ 50 ՍԷՆԹ

Դիմել՝

**H. G. BERBERIAN**

**837 Washington St. Boston, Mass.**

Generated on 2016-06-14 11:46 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from UNIVERSITY OF CALIFORNIA

# ՍԵՓԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՊԷՐՊԷՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

| | |
|---|---|
| Համառօտ Ժամագիրք | .50 |
| Թորոս Լեւոնի (*Ծերենց*) | 1.00 |
| Հին Աստուածներ (*Շանթ*) | .75 |
| Անգլիերէնէ Հայերէն Գրպանի Բառարան (*Փրոֆ. Յակոբեան*) | .50 |
| Հայասան-Ջայնագրուած Նօթա | .50 |
| Ընդարձակ Գրպանի Երգարան | .75 |

ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ

**H. G. BERBERIAN**

**837 Washington St., Boston, Mass.**


Generated on 2016-06-14 11:46 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Digitized by Google

Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2016-06-14 11:46 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

UNIVERSITY OF CALIFORNIA LIBRARY
Los Angeles
This book is DUE on the last date stamped below.

FEB 1 1977

Digitized by Google

Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2016-06-14 11:46 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

UC SOUTHERN REGIONAL LIBRARY FACILITY

B 000 011 115 3

MUSIC
LIBRARY

M
1800
E56

Generated on 2016-06-14 11:46 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Digitized by Google

Original from
UNIVERSITY OF CALIFORNIA

Generated on 2016-06-14 11:46 GMT / http://hdl.handle.net/2027/uc1.b0000111153
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
UNIVERSITY OF CALIFORNIA